ԳՐԻԳՈՐ ՄԵՍՐՈՊԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾԸ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ГРИГОР МЕСРОПОВИЧ ГРИГОРЯН
ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ

СОСТАВИТЕЛЬ: САТЕНИК ХУРШУДЯН

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

GRIGOR M. GRIGORYAN
THE LIFE AND ACTIVITY

COMPILED BY SATENIK KHURSHUDYAN

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2025

YEREVAN
IAE PUBLICATION 2025

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՐԻԳՈՐ ՄԵՍՐՈՊԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾԸ

ԿԱԶՄՈՂ՝ ՍԱԹԵՆԻԿ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

ԵՐԵՎԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2025

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ պ.գ.թ. Սուսաննա Ադամյան

ՀՏԴ 929:94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Գ 888

Գ888 Գրիգոր Մեսրոպի Գրիգորյան. կյանքն ու գործը, կազմեց՝ Ս.Խուրշուդյան, խմբ.՝ Ս.Ադամյան, Երևան, ՀԱԻ հրատ., 2025, 112 էջ:

Աշխատությունը նվիրված է վիմագրագետ, պ.գ.դ., պրոֆեսոր Գրիգոր Մեսրոպի Գրիգորյանի (1930–2018) կյանքի և գիտական գործունեության ուշագրավ դրվագներին, ուր տեղ է գտել հետազոտողի կենսամատենագիտությունը (Երևան, 2019), ինչպես նաև առաջին անգամ ամբողջացվել են մամուլում հրատարակված գիտահանրամատչելի հոդվածները: Վերջում ներկայացված են լուսանկարներ՝ հեղինակի անձնական արխիվից (67 միավոր):

ՀՏԴ 929:94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-886-85-5

© Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2025 թ.

Նվիրվում է Գրիգոր Գրիգորյանի
ծննդյան 95-ամյակին



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբանի փոխարեն 7

Գրիգոր Մեսրոպի Գրիգորյան.
կյանքը և գիտական գործունեությունը 8

Գրիգոր Գրիգորյանի կյանքի և գործունեության
հիմնական տարեգրությունը 11

Աշխատությունների ժամանակագրական ցանկ 12

Մամուլում հրատարակված հոդվածներ 15

1. Թող մելիորատորները որոշեն Վարարակնի ջրանցքը
վերականգնելու մասին 15
2. Փնտրվում է դիցուհու արձանը 16
3. Мемориальные плиты 17
4. Նոր վիմագրություններ 18
5. Ղրիմի և հյուսիսային Կովկասի վիմական արձանագրությունները 20
6. Հայկական Պոմպեյի ավերակները 25
7. Հեռավոր հուշարձանները ուշադրության կենտրոնում 28
8. Բաղաց աշխարհի ճամփաներով 32
9. Հայկական քարեղարան Թեոդոսիայում 35
10. Ականավոր հայագետը. (ակադեմիկոս Բ.Ն.Առաքելյանի
60-ամյակի առթիվ) 38
11. Թարգմանիչը, բանաստեղծը, երգահանը.
Ստեփանոս Իմաստասեր Սյունեցի 42
12. Վահանավանք 43
13. Ուկրաինացի ճարտարապետի վաստակը. Ե. Մ. Պլամենեցկայա 46
14. Սևանի ավազանի պատմական հուշարձանները 49
15. Վահանավանք 53
16. Հայոց դպրության պանծալի օջախը 55
17. Ваанаванк 57
18. Վահանավանք 58
19. Վահանավանքի խաչքարերի զարդաքանդակները 60
20. Սյունյաց պատմագիրը՝ Ստեփանոս Օրբելյան 61
21. Որտեղ է թաղված Գրիգոր Նարեկացին 66

Լուսանկարներ և փաստաթղթեր 73

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Հայագիտության նվիրյալ, վիմագրագետ, գիտության վաստակավոր գործիչ, պ.գ.դ., պրոֆեսոր Գրիգոր Մեսրոպի Գրիգորյանն իր կյանքի մեծ մասը նվիրեց հայ ժողովրդի հոգևոր մշակույթի լուսաբանմանը: Մեծ ներդրում ունենալով վիմագրագիտության բնագավառում՝ հանդես եկավ բազմաթիվ գիտական հոդվածներով, զեկուցումներով, մենագրություններով՝ կյանքի կոչելով «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի երկու պրակ՝ նվիրված հայ գաղթաշխարհի երեք խոշոր կենտրոնների՝ Ուկրաինայի, Մոլդովայի և Ռուսաստանի Դաշնության հայաշատ բնակավայրերի վիմագրական ժառանգությանը: Գր. Գրիգորյանի հոդվածների մեծ մասը հրատարակվել են գիտական ամսագրերում, սակայն արժեքավոր են նաև այն հոդվածները, որոնք լույս են տեսել մամուլի էջերում: 2019թ. լույս տեսավ բազմավաստակ գիտնականի կենսամատենագիտությունը, որտեղ ամփոփված են նրա կյանքն ու գործունեությունը, գիտական աշխատությունների ցանկը՝ բովանդակային համառոտ վերլուծությամբ:

Ստորև ընթերցողին ենք ներկայացնում Գր. Գրիգորյանի՝ մամուլում լույս տեսած հոդվածները, որոնք արժեքավոր տեղեկություններ են տալիս վիմագրագետի անցած ճանապարհի, նրա կատարած առաջին պեղումների և, առհասարակ, նրա ծավալած գործունեության վերաբերյալ: Գիտնականը մեծ ոգևորությամբ ներկայացնում է Վահանավանքի պեղումների առաջին արդյունքները, վիմագրական կարևոր և արժեքավոր առաջին վերծանությունները, վանքի վերականգնման ընթացքը, որն ամփոփում է նաև մամուլի էջերում: Նվիրյալ մարդ-գիտնականն իր կյանքը նվիրեց Վահանավանքի վերականգնմանը: ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում պահվում է պրոֆեսոր Գր. Գրիգորյանի անձնական արխիվը, որտեղ տեղ գտած լուսանկարներից մի մասն ամփոփվել է այստեղ:

Ս. Խուրշուդյան

ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Գիտության վաստակավոր գործիչ, հնագետ, վիմագրագետ Գրիգոր Մեսրոպի Գրիգորյանը ծնվել է 1930թ. մարտի 2-ին Հյուսիսային Օսիայի Վլադիկավկազ քաղաքում: Հայրը՝ Տեր Մեսրոպը, կրթություն էր ստացել Էրզրումի Սանասարյան վարժարանում, եղել է Բիթլիսի հայոց եկեղեցու քահանան: Հաստատվելով Խորհրդային Միությունում՝ Տեր Մեսրոպն ընտանիք էր կազմել Շուշանիկի հետ և ունեցել 12 զավակ:

1937 թ. Գրիգորյանների բազմանդամ ընտանիքը տեղափոխվում է Երևան: Ապագա գիտնականը սովորել է նախ Ս. Օրջոնոկիձեի անվան թիվ 11 դպրոցում, իսկ 1947 թ.՝ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում՝ միաժամանակ հաճախելով Էջմիածնի գիշերային միջնակարգ դպրոցը: 1950–1954 թթ. Գր. Գրիգորյանն իր մասնագիտական կրթությունը ստանում է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմա–լեզվագրական ֆակուլտետում: Այն ավարտելուց հետո երիտասարդ ուսուցիչը գործուղվում է Եղեգնաձորի շրջանի Հորս գյուղ՝ որպես դպրոցի տնօրեն: 1956 թ. վերադառնալով Երևան՝ աշխատանքի է անցնում Հայպետհրատում, որպես ավագ սրբագրիչ, միաժամանակ զբաղվում է ուսուցչությամբ թիվ 31 միջնակարգ դպրոցում:

1962 թվականից Գր. Գրիգորյանն աշխատել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայ վիմագրության բաժնում նշանավոր հնագետ, վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանի անմիջական ղեկավարությամբ: Ընդունվելով ասպիրանտուրա՝ 1967 թ. նա պաշտպանում է «Սյունիքի վանական կալվածատիրությունը IX–XIII դարերում» թեկնածուական ատենախոսությունը: Սյունյաց աշխարհի նկատմամբ ունեցած նրա հետաքրքրությունը 60–ական թվականներին վերածվեց գործնական քայլերի. դարավոր մոռացությունից և հողից դուրս հանվեց միջնադարյան Հայաստանի նշանավոր համալիրներից մեկը՝ Վահանավանքն՝ իր օժանդակ շինություններով: Տարիների ընթացքում հնագիտական պեղումների արդյունքում հայտնաբերվեցին

արժեքավոր հուշակոթողներ և վիմական արձանագրություններ, որոնք կարևոր նշանակություն ունեցան Սյունյաց աշխարհիկ և հոգևոր կյանքի պատմության նորովի շարադրանքի համար:

2007 թ. «Վահանավանք» գրքում (երկլեզու՝ հայերեն և ռուսերեն) Գր. Գրիգորյանն ամփոփեց ավելի քան 40-ամյա իր գործունեության արդյունքները՝ նվիրված Վահանավանքին: Իսկ 2009 թ. լույս տեսավ «Վահանավանքի վերածնունդը (հնագետի օրագրից)» էսսեն, ուր ներկայացված են պեղումների ընթացքը, կազմակերպչական աշխատանքները, հիշարժան դեպքերն ու դեմքերը:

1960–ական թթ. վերջերին Գր. Գրիգորյանի գլխավորությամբ հայ-ուկրաինական և հայ-ռուսական արշավախմբերը հավաքում և ուսումնասիրում են Մոլդովայի, Ուկրաինայի և Ռուսաստանի տարածքում գտնվող ավելի քան 1500 հայերեն վիմագրերը, թանգարանային իրերի մակագրությունները: Աշխատանքների արգասիքն են համարվում «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի 7-րդ (1996 թ.) և 8-րդ պրակները (1999 թ.):

1981 թ. լույս է տեսնում Գր. Գրիգորյանի «Սյունիքը Օրբելյանների օրոք» մենագրությունը, ուր ամփոփված են Սյունիքի քաղաքական-տնտեսական կյանքն ու կրթամշակութային օջախների համառոտ նկարագիրը: 2000 թ. նրա «Հայկական վիմագրություն» համառոտ ձեռնարկը, բուհերի պատմության և բանասիրության ֆակուլտետների ուսանողների համար նախատեսված, յուրահատուկ և կարևոր միջոց էր վիմագրություն ուսումնասիրելու առումով: 2001 թ. հրատարակվում է նրա հաջորդ բուհական ձեռնարկը՝ «Սյունիքի պատմություն» խորագրով, որտեղ ներկայացված են կարևորագույն փաստեր Սյունիքի պատմության վերաբերյալ:

Նշանավոր գիտնականն անտարբեր չէր նաև 1990-ական թթ. Արցախյան հիմնախնդրի նկատմամբ: Այդ օրերին նա բազմաթիվ հայանպաստ նամակներ և հեռագրեր է ուղղել Խորհրդային Միության ղեկավարությանն ու բարձրաստիճան անձանց: Իսկ 2005 թ. այդ նամականին լույս տեսավ «Ղարաբաղյան օրագիր (1988–1992 թթ.)» գրքում:

Անվանի հնագետը նաև մանկավարժական գործունեություն է ծավալել Երևանի մի շարք բուհերում. 1973 թվականից դասավանդել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում, Երևանի պետական համալսարանում, «Հրաչյա Աճառյան» համալսարանում, ինչպես նաև Պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության բաժնում: Նա, լինելով Կապանի պատվավոր քաղաքացի, զեկուցումներ է կարդացել Սյունիքի տարածաշրջանի դպրոցներում, զորամասերում, ինչպես նաև հանդես է եկել Մոսկվայի, Լենինգրադի, Ղրիմի գիտաժողովներում, հեղինակ է բազմաթիվ հոդվածների:

1985 թ. Գր. Գրիգորյանին շնորհվում է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, իսկ 1993 թ.՝ պրոֆեսորի կոչում:

Նվիրյալ գիտնականն արժանացել է բազմաթիվ պետական պարգևների. 2010 թ. մայիսի 24-ին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով նրան շնորհվել է «Գիտության վաստակավոր գործչի» պատվավոր կոչում: Մահացել է 2018 թ. հոկտեմբերի 14-ին, ամփոփված է Քանաքեռի քաղաքային գերեզմանատանը:

ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ[1]

1930 թ. մարտի 2-ին ծնվել է Վլադիկավկազում:

1937 թ. ընտանիքով տեղափոխվել են Երևան:

1947–1949 թթ. սովորել է Էջմիածնի հոգևոր ճեմարանում:

1950–1954 թթ. սովորել է Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմա-լեզվագրական ֆակուլտետում:

1954–1956 թթ. աշխատել է Եղեգնաձորի շրջանի Հորս գյուղում՝ որպես դպրոցի տնօրեն:

1956–1960 թթ. աշխատել է Հայպետհրատում՝ որպես ավագ սրբագրիչ:

1960–1996 թթ. եղել է հայ-ուկրաինական և հայ-ռուսական միացյալ արշավախմբերի ղեկավար:

1962 թվականից աշխատել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում:

1966 թ. եղել է Կապանի հնագիտական արշավախմբի ղեկավար:

1967 թ. ստացել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1973–2010 թթ. դասավանդել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում:

1973–2016 թթ. դասավանդել է Երևանի պետական համալսարանում:

1975 թ. դասավանդել է պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության բաժնում՝ ուսուցանելով գրաբար և վիմագրություն:

1980 թվականից եղել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի անդամ:

1985 թ. ստացել է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

1986–2010 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնի վարիչ:

1993 թ. ստացել է պրոֆեսորի կոչում:

2003–2010 թթ. դասավանդել է «Հրաչյա Աճառյան» համալսարանում:

2018 թ. հոկտեմբերի 14-ին մահացել է:

---

[1] Գրիգոր Մեսրոպի Գրիգորյան, Կենսամատենագիտություն, Երևան, ՀԱԻ հրատ., խմբ.՝ Գ. Սարգսյան, 2019, էջ 11:

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՑԱՆԿ

ԳՐՔԵՐ[1]

1. Սյունիքի վանական կալվածատիրությունը IX–XIII դարերում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, 268 էջ:
2. Սյունիքը Օրբելյանների օրոք (XIII–XV դարեր), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, 318էջ:
3. Очерки истории Сюника IX–XV вв., Ереван, АН АРМ. ССР, 1990, 390 с.
4. Դիվան հայ վիմագրության, պրակ VII (Ուկրաինա, Մոլդովա), Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 1996, 410 էջ:
5. Դիվան հայ վիմագրության, պրակ VIII (Ռուսաստանի Դաշնություն), Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 1999, 315 էջ:
6. Հայկական վիմագրություն (Համառոտ ձեռնարկ բուհերի պատմության և բանասիրության ֆակուլտետների համար),՝ Երևան, «Զանգակ-97» հրատ., 2000, 207 էջ:
7. Սյունիքի պատմություն (Բուհական համառոտ դասընթաց՝ Սերգեյ Հախվերդյանի համահեղինակությամբ), Երևան, «Հրազդան» հրատ., 2001, 316 էջ:
8. Род Орбелянов и история Сюника в IX–XV вв, Москва, (изд. Культурная Революция), 2004, 328 с.
9. Ղարաբաղյան օրագիր 1988–1992 թթ. (հայերեն և ռուսերեն), Երևան, «Էդիթ պրինտ» հրատ., 2005, 176 էջ:
10. Վահանավանք (հայերեն և ռուսերեն), Երևան, «Զանգակ-97» հրատ., 2007, 250 էջ:
11. Վահանավանքի վերածնունդը (Հնագետի օրագրից, հայերեն և ռուսերեն), Երևան, «Զանգակ-97» հրատ., 2009, (192 էջ, 32 աղյուսակ, 83 լուսանկար, 37 գրչագիր):

---

[1] Գիտական աշխատությունների համառոտ վերլուծությունը տես Կենսամատենագիտություն (Եր., 2019):

ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Դիտողություն միջնադարյան մի տուրքի մասին // ՊԲՀ, 1963, Հմր 2, էջ 260–263:
2. Ն. Մառի ծննդյան 100-ամյակը // ՏՀԳ, 1965, Հմր1, էջ 99–100:
3. Դրամական հարաբերությունների զարգացումը Սյունիքում և Ստեփանոս Օրբելյանի «Հարկացուցակի» խնդիրը // ԼՀԳ, 1966, Հմր 2, էջ 45–58:
4. Պատմական Սյունիքի մի շարք գյուղերի տեղադրության հարցի շուրջը // ՊԲՀ, 1966, Հմր 4, էջ 233–240:
5. Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները // ԼՀԳ, 1970, Հմր 10, էջ 81–94:
6. Новые данные об армянских эпиграфических надписях Крыма и Северного Кавказа // ИФЖ, 1970, N 3, с. 297–301.
7. Новонайденные надписи Ваанаванка // ИФЖ, 1972, N 1, с. 215–229.
8. Ստեփանոս Օրբելյան // ՊԲՀ, 1976, Հմր 4, էջ 155–164:
9. Армянские надписи Киевского собора Св. Софии // ВОН, 1979, N 4, с. 84–93.
10. Վիմագրություններ Վահանավանքի 1970–1978 թթ. պեղումներից // ՊԲՀ, 1980, Հմր 2, էջ 154–165:
11. Մոսկվայի Կրեմլի զինապալատի հայերեն արձանագրությունները // ԼՀԳ, 1982, Հմր 8, էջ 80–88:
12. Վիմագրական նոր տեղեկություններ 18–19-րդ դդ. հայ-ռուսական հարաբերությունների մասին (ըստ Լենինգրադի և Մոսկվայի նյութերի) // ԼՀԳ, 1983, Հմր 8, էջ 45–61:
13. Историографическое значение армянских лапидарных надписей Арцаха и Сюника // ВОН, 1990, N 1, с. 3–11.
14. Կիրակոսյան Գ. Ե., «Հայաստանը Լենկ-Թեմուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում» (գրախոսություն) // ԼՀԳ, 1997, Հմր 2, էջ 188–190:
15. Հովսեփ Օրբելու վիմագրագիտական վաստակը // «Հայագիտական հանդես», 1998, Հմր 1, էջ 75–79:
16. Հայ մշակույթի ականավոր գործիչները (Ս. Պետերբուրգի Սմոլենսկյան հայկական գերեզմանոց) // «Հայագիտական հանդես» 1998, Հմր 1, էջ 71–75 :
17. Սյունյաց եպիսկոպոսների շինարարական գործունեությունը IX–XIV դդ. // ՊԲՀ, 1999, Հմր 2–3, էջ 166–174:
18. Ականավոր վիմագրագետը՝ Սեդրակ Բարխուդարյան// ԼՀԳ, 2005, Հմր 3, էջ 188–193:

19. Սյունիքի թագավորությունը // ՊԲՀ, 2006, Հմր 2, էջ 134–145:
20. Ա. Աբրահամյանի տեղագրական շտկումները // «Հայագիտական հանդես», 2008, Հմր 2–3, էջ 45–48 :
21. Հայկական վիմական արձանագրությունների պատմագիտական արժեքը // ԼՀԳ, 2012, Հմր 2–3, էջ 79–85:

ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԱՅԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Բաղաբերդ, «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 2, Երևան, 1976, էջ 248–249 (Գր. Գրիգորյան և Մ. Հասրաթյան):
2. Արմյանսկ, «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 2, Երևան, 1976, էջ 97:
3. Օրբելյաններ, «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 2, Երևան, 1988, էջ 586–587:
4. Սյունյաց մետրոպոլիտություն, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 914–915:
5. Սպիտակավոր Ս. Աստվածածին վանք, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 919–920:
6. Հերմոնի վանք, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 583–584:
7. Վահան Ա Սյունեցի, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 949:
8. Վահանավանք, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 950–951:

ՄԱՄՈՒԼՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

Թող մելիորատորները որոշեն Վարարակնի ջրանցքը վերականգնելու մասին[1]

Տաթևից ոչ հեռու մի ընդարձակ տափարակ կա: Անունը Ցաքուտ է, պատված է անանցանելի մացառուտներով: Հնագետների համար այն պեղումներով վայր է՝ լի մեր նախնիների թողած հոգևոր և մշակույթի բեկորներով: Այնտեղ հայտնաբերվում են նույնիսկ հեթանոսական շրջանի արձանագրություններ: Տաթևացիների համար դա արգավանդ հող էր, բայց նրանից դարեր առաջ օտարացել է շինականի ձեռքը, դարձել խոճուկ ու վայրի: Տեղացիների կարծիքը հաստատվում է Օրբելյան պատմիչի վկայությամբ: Հազար տարի առաջ Հակոբ եպիսկոպոսը Վարարակնի ջրերը խողովակներով տեղ է հասցրել: Հիմնվել են ընդարձակ այգիներ, տնկվել խաղողի վազեր, ձիթենիներ, թզենիներ, նռնենիներ և պտղատու այլ ծառեր: Կլիմայի մեղմության, տեղանքի արևկա և նպաստավոր դիրքի շնորհիվ ստեղծվել է «դրախտս զարմանալի», որի հետքերը մնում են նաև հիմա, այցելուն այժմ էլ կարող է տեսնել խաղողի բազմաթիվ որթեր, որոնք, անխնամ լինելով հանդերձ շարունակում են աճել ու ողկուզակալել:

— Ափսո՜ս հողեր, որ օձաբուն են դարձել, — ասում են տաթևացիները: — Գիտե՞ք, թե ինչ հարստություն կբերեին մեր կոլտնտեսությանը:

Նրանք ուզում են Ցաքուտը փթթած տեսնել, ուզում են, որ այնտեղ նորից արմատներ հղեն խաղողենին, ձիթենին, տանձենին, թզենին, նռնենին:

— Երկու-երեք տարվա գործ է, — ավելացնում են, — թե որ անենք սերունդները շնորհակալ կլինեն:

— Իսկ ինչու՞ չեք ձեռնարկում:

— Ձրի պատճառով: Եթե ջուր լիներ, մենք վաղուց նվաճած կլինեինք այդ հսկայական տարածությունը:

Հետաքրքրվեցի, շրջակայքում ոռոգման ջրի պաշարներ կա՞ն:

— Այո՛, — ասացին կուսակցության շրջանային կոմիտեում: — Կամ Որոտանի կիրճում պետք է ջրհան կայան կառուցել, կա՛մ էլ վերաշինել այն հինավուրց ջրատարը, որով սնվել է Ցաքուտը:

Թո՛ղ մելիորատորները որոշեն, թե տարբերակներից որի կիրառումն է ավելի հեշտ ու շահավետ: Բայց որ Ցաքուտի դարավոր նիրհը պետք է խախտվի, որ նրա բարեբեր հողերը պետք է մշակվեն, դա անա-

[1] «Սովետական Հայաստան» թերթ, Երևան, 19. 06. 1966, հ՝ 142, էջ 1:

ռարկելի է: Չէ՞ որ կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի՝ վերջերս տեղի ունեցած պլենումը խնդիր է դնում անօգտագործելի չթողնել բերրի հողերը: Տաթևացիները, որ ջերմորեն հավանություն են տալիս այս որոշմանը, ակնկալում են, թե հանրապետության մելիորացիայի ու ջրային տնտեսության մինիստրությունն օրակարգի հարց կդարձնի Ցաքուտի հարյուր հեկտարից ավելի հողերին ջուր հասցնելը: Եթե դա իրականանա, ապա շունչ ու ոգի կառնի խոպանացած այդ հողը, կդառնա դրախտ՝«ի վայելումն տաթևացեաց»:

Փնտրվում է դիցուհու արձանը[1]

Վերջերս Երևան վերադարձավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը: Հուշարձանների պահպանման հայկական ընկերության նախաձեռնությամբ խումբը բարեկարգման աշխատանքներ էր կատարում պատմական Սյունիքի ճարտարապետական հոյակապ կոթողներից մեկում՝ Վահանավանքում:

Վահանավանքը կառուցվել է 911 թվին, Տաթևի վանքից հինգ տարի հետո և հանդիսացել է Սյունյաց Բաղք գավառի մշակույթի և գիտության խոշոր կենտրոնը: Ունեցել է 100-ից ավելի գիտնական-վարդապետներ: Վանքը կառուցող իշխանազուն Վահանի անունով այդ վայրը կոչվել է Վահանավանք:

13-րդ դարի ականավոր պատմիչ Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ՝ «այստեղ են հանգչում Սյունիքի և Աղվանքի բազում թագավորներն ու թագուհիները, նշանավոր իշխանները»: Հնագիտական արշավախմբի նպատակն էր ոչ միայն հայտնաբերել նրանց տոհմական դամբարանները, այլև դարավոր փլատակներից ու անտառային բուսականությունից մաքրել այդ գեղեցիկ հուշարձանները:

Պեղումների ընթացքում արշավախմբին շատ օգնեցին Ղափանի դպրոցականները:

Հնագետները չափազանց ուրախացան, երբ առաջին հնագիտական իրը՝ արձանագրված քարի մի բեկոր, հայտնաբերեց դպրոցական Աշոտ Պետրոսյանը: Աշխատանքների ընթացքում գտնվեցին Սյունիքի իշխաններ Հրահատի, Գրիգորի և Սմբատի անունների հիշատակությամբ արձանագրված կոթողներ, խեցեղեն իրեր և այլն:

Ղափանի դպրոցականների հետ մեր բարեկամությունը շարունակվում է: Եկող տարի որոշել ենք միասին որոնել և հայտնաբերել Անահիտ դիցուհու քարե արձանը, որը պետք է լինի դեռևս չհայտնաբերված «Անահտա» ձորում:

---

[1] «Պիոներ կանչ» թերթ, Երևան, 4.01.1967, Հ՝ 2 (3016), էջ 3:

Առիթն օգտագործելով, շնորհակալություն ենք հայտնում կոմերտմիության Ղափանի շրջկոմին, պիոներական աշխատողներ Կ. Ստեփանյանին և Ա. Կարապետյանին՝ աշակերտության մեջ հայրենի հուշարձանների նկատմամբ ջերմ սեր արթնացնելու համար:

Мемориальные плиты[1]

Вот уже два года подряд в Крым выезжает специальная эпиграфическая экспедиция Института археалогии и энтографии академии наук Армении с целью поиска различных надписей о жизьне армянских колоний в Крыму в 15–19 веках и состовления их сборника. Научной экспедицией института уже собрано 350 армянских надписей, которые содержат ценные сведения о социально-политической и культурной жизни армянской колонии. И среди них особое место занимают те, которые непосредственно относятся к родословной деятельности великого мариниста Ивана Константиновича Айвазовского.

Жители Феодосии до сих пор с большим уважением вспоминают своего великого земляка И. К. Айвазовского, стараниями и на средства которого в Феодосии была проложена железная дорога, построен водопровод…

Сегодня гордостью и одной из достопримечательностей города является картинная галерея Айвазовского. Здесь на балконе второго этажа обнаружено пять армянских надписей, высеченных на мраморных плитах. Из них четыре относятся к родословной выдающегося мариниста. Одна повествует о братьях художника Григоре Айвазовском – инспекторе порта Феодосия и Гаврииле Айвазяне – начальнике епархий Нахичевани и Бессарабии. А рядом другая мраморная плита с надписью о том, что И.К.Айвазовский «провел в город воду». В следующих упоминаются родители Айвазовского, а также его сестра Катерина Мазерова.

И. К. Айвазовский всячески старался и содействовал делу восстановления армянских памятников в Крыму. В Феодосийской армянской церкви святого Сергия, во дворе которой покоится прах Ивана Константиновича, на южной стене установлена мемориальная плита, сообщающая о том, что «сей храм возобновился из руин благодаря божию в 1888 году увещанием и старанием Хорена верховного вардапета Степанэ, которому способствовали армянин профессор художеств Иоаннес Айвазовский подаривший., великолепных картин, и благочестивый армянский народ Феодосии».

---

[1] «Коммунист», Ереван, 24.11.1968, ном. 63, ст.4.

Во дворе того же храма, в доме Александры Чаушян хранится другая мраморная плита, высеченная в честь пожертвования в пользу храма в 1892 году. И в ней первым упоминается имя художника. Кстати, в 1892 году небольшая мраморная доска была установлена и у фонтана городского сада, который известен как «Фонтан Айвазовского».

Экспедиция еще не закончила своей работы. Но тот обширный материал, который она собрала, позволяет судить об Айвазовском – человеке и патриоте, о его широких связах с армянской общественностью Крыма.

Նոր վիմագրություններ[1]

Հայկական ՍԱՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբի ջոկատը «Դիվան հայ վիմագրության» հերթական պրակը կազմելու նպատակով երկու տարի է, ինչ հավաքչական աշխատանքներ է կատարում Ղրիմի հայկական գաղթօջախի տարբեր վայրերում:

Հավաքված ավելի քան 356 վիմագիր արձանագրություններ կարևոր փաստեր են պարունակում Ղրիմ գաղթած հայ տարագիրների սոցիալ-քաղաքական կյանքի և հոգևոր ու նյութական մշակույթի տարբեր բնագավառների վերաբերյալ:

Հայտնի է, որ այստեղ ապաստանած հայերը, հատկապես 14–15-րդ դարերում, երկրի քաղաքական-տնտեսական և մշակութային կյանքում վճռական դեր են խաղացել: Նրանք հիմնադրել են մի շարք բնակավայրեր, բերդեր, ամրոցներ: Մինչև Կաֆա (Թեոդոսիա) ձգվող մայրուղու տարբեր հատվածներում կառուցել են հայկական բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ, կրթական մշակութային օջախներ:

14–15-րդ դդ. Ղրիմի ազգաբնակչության օրավուր զարգացող աճն ու թվաքանակը թերևս նկատի ունեին ժամանակակիցները, երբ Ղրիմի հարավային մասը անվանում էին «Ծովահայաց Հայաստան»:

Ղրիմում հավաքած հայատառ վիմական արձանագրությունների մեջ կան նաև այնպիսիները, որոնք ուղղակիորեն վերաբերում են աշխարհահռչակ Հովհաննես Այվազովսկու տոհմագրությանն ու հասարակական ազգօգուտ գործունեությանը:

Թեոդոսիայի բնակիչները մինչ օրս էլ երախտագիտությամբ են հիշում իրենց մեծ համաքաղաքացուն, որի երկրորդ հարկի պատշգամբի արտաքին պատի վրա հայտնաբերվեցին թվով հինգ մարմարյա հուշատախտակներ՝ հայերեն արձանագրություններով:

---

[1] «Սովետական արվեստ» ամսագիր, Երևան, 1969, հմր 6, էջ 56–57:

Պատկերասրահի դիրեկտոր Դմիտրի Գրիգորևիչ Տրուշինի և նկարչության դասատու Ստեպան Իվանովիչ Մալիշևի օգնությամբ պատի ծեփը զգուշորեն մաքրելուց հետո, քիվից փոքր-ինչ ներքև, մարմարյա արձանների ետևում բացվեցին հետևյալ արձանագրությունները[1].

1. ՅԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱԼԻՊԵԱՆՑ/ ՀԻՄ-
   ՆԱԴԻՐ/ ԽԱԼԻՊԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱ-
   ՐԱՆԻՆ/ ՅԱՅՑԵԼ ԱՂԲԵ‰ԻՏ ՐՍ/ՅԱ-
   ՄԻ ՏԵԱՌՆ/ 1861:

2. ԳՐԻԳՈՐ/ ԱՅՎԱԶՈՎՍՔԻ/ ՏԵՍՈՒՉ ՆԱԻԱ-
   ՀԱՆԳՍՏԻՆ/ ԹԷՈԴՈՍԻՈՅ/ ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅ-
   ՎԱԶԵԱՆ/ ԱՌԱՋՆՈՐԴ ՎԻՃԱԿԻՆ ՆԱ-
   ԽԻՋ‰ԵԻԱՆՈՒՏ ԵԻ ՊԵՍ‰ԱՐԱԲԻՈՅՏ:

3. Կենտրոնում, մուտքի ճակատին.

   ՅՈՀԱՆՆԷՍ ԱՅՎԱԶՈՎՍՔԻ
   ԿԱՆԳՆԵԱՑ ԶԱՂԲԻԻՐՍ ԲԱՐԵՀԱՄ.
   [ՅԻՇԱՏԱ]Կ ԻԻՐ ԵԻ ԻԻՐ ԱԶԳԻ
   [ՅՈՐ] ԴԵՑ ՈՐԴԻՍ ՀԱՄԱՅ[Ն] ԱՄ
   [ՈՒ] ՄՆՈՅՆ ԻԻՐՈՒՄ ՅՈՒԼԵԱՅ
   ԵԻ ԶԱՒԱԿԱՑԸՆ ԳԵՂԱՆԻ՝
   ՀԵՂԻՆԵԱՑ ԵԻ ՄԱՐԵՄԱՅ,
   ԱՂԵՔՍԱՆԴՐԱՅ, ՅՈՎՀԱՆՆԱՅԻ:

4. ԳԷՈՐԳ/ ԿՈՍՏԱՆԴԻՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ/ ԱՅՎԱ-
   ԶՈՎՍՔԻ/ ՓՈԽԵԱԼ ԱՌ ՏԷՐ ՅԱՄԻՆ/ 1840/
   ՀՌԻՓՍԻՄԷ ԱՅՎԱԶՈՎՍՔԻ/ ՀԵ (75) ԱՄԱՑ:

5. ԿԱՏԵՐԻՆԱ ՄԱԶԵՐՈՎ [Ա] ԵԻԵՕԹԱՆԵՔԻՆ/ ԶԱՒԱԿՈՒՆՔ
   ՆՈՐԱ:

Հ.Այվազովսկին մեծ չափով նպաստել է Թեոդոսիայի հայկական հուշարձանները վերականգնելու գործին: Տեղի Ս. Սարգիս եկեղեցու (որի բակում է գտնվում ծովանկարչի շիրիմը) հարավային պատին ներսից ագուցված է մարմարյա մի հուշատախտակ, որի վրա փորագրված է հետևյալ արձանագրությունը[2].

ՏԱՃԱՐՍ Ս. ՍԱՐԳՍԻ ՎԵՐԱՆՈՐՈԳԵՑԱԻ ՅԱԻԵՐԱԿԱՑ
ՇՆՈՐՀՕՔՆ ԱՍ/ՏՈՒԱԾՈՅ Ի 1888 ԱՄԻ, ՅՈՐԴՈՐԱՆՕՔ ԵԻ
ՔԱՆԻԻՔ ԽՈՐԷՆ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՍՏԵՓԱՆԷԻ,
ԱՌ ՈՐ ՆՊԱՍՏԵՑԻՆ ՀԱՅԱԶՆ ՆԿԱՐՉԱՊԵՏ ՅՈՎ/ՀԱՆՆԷՍ

---

1 «Դիվան հայ վիմագրության» (այսուհետ՝ ԴՀՎ) մատենաշարում: Տես՝ ԴՀՎ, պրակ VII, Երևան, 1996, էջ 80–82, արձ. հմր 140, 141, 142,143, 144:

2 ԴՀՎ, պրակ VII, էջ 47, արձ. հմր 51:

ԱՅՎԱԶՕՎՍԿԻ, ԸՆԾԱՅՕՂՆ ՀՈՅԱԿԵՐՏ ՊԱՏԿԵՐԱՑ ԵՒ/
ԲԱՐԵՊԱՇՏ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ՀԱՅՈՑ ԹԷՈԴՈՍԻՈՅ:

Սույն տաճարի կից բակում ապրող Ալեքսանդրա Տրոֆիմովեա Չաուշյանի տանը մինչև օրս էլ պահպանվում է երկու երեսին հայերեն և ռուսերեն փորագրված մարմարյա մի հուշատախտակ, ուր նույնպես առաջինը հիշատակվում է Հ. Կ. Այվազովսկու մասին: Ահա դրանք[1].

…. ջարդված է

ОНЬ БЛАГА СВОИ/ И.К. АЙВАЗОВСКОМУ/Я.М.
СЕРЕБРЯКОВУ/Л.Я. БЕРБЕРОВУ/ЗА ПОЖЕРТВОВАНИЯ
ВЬ ПОЛЬЗУ/ СЕГО СВЯТОГО ХРАМА/1892 ГОДА.

Մյուս երեսին[2].

«ԸՍՏ ԳՈՐԾՈՑ ՁԵՐՈՑ ԵՂԻՑԻՆ ՁԵՋ» ԱԻԵՏԱՐԱՆ.
ԿԱՑՑԷ ՎԷՄՍ ԱՅՍ ՈՐՊԷՍ ՅԻՇԱՏԱԿ ԿԵՆԴԱՆԻ/
ԲԱՌԲԱՐՈՂ ԲԱՐԻ ԳՈՐԾՈՑ ՎԵՐՍՏԻՆ ՆՈՐՈԳՈ/
ՂԱՑ ԵՒ ՋԱՐԴԱՐՈՂԱՑ ՏԱՃԱՐԻՍ ՍԲ. ՍԱՐԳՍԻ/
Յ.Կ.ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ/Ղ.Յ.ԲԵՐԲԵՐԵԱՆՑԻ/ Յ.Մ.ՍԵՐԵԲ-
ՐԵԿԵԱՆՑԻ/ ՌՅԽԱ 1892»:

Նույն՝ 1892 թվականին է փորագրված այն մարմարյա սալիկը, որ ագուցված է այժմ մանկական զբոսայգու մեջ շատրվան աղբյուրի վրա, որը հայտնի է իբրև «Фантан Айвазовского».

Ղրիմի և հյուսիսային Կովկասի վիմական արձանագրությունները[3]

Հայաստանի գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրագիտական արշավախումբը երկրորդ տարին է, ինչ կանոնավոր կերպով վիմական արձանագրություններ է հավաքում Հյուսիսային Կովկասի և Ղրիմի հայ գաղթօջախներում: Հավաքված շուրջ 500 հայատառ վիմագիր արձանագրությունները չափազանց արժեքավոր նյութեր են պարունակում ճակատագրի հարվածով մասնավորապես դեպի Ղրիմ և Հյուսիսային Կովկաս գաղթած հայորդիների սոցիալ-քաղաքական վիճակի, հիմնադրած կրոնական, կրթական ու մշակութային օջախների մասին:

---

1 ԴՀՎ, պրակ VII, էջ 77, արձ. հմր 136:

2 ԴՀՎ, պրակ VII, էջ 76, արձ. հմր 135 – Ս. Խ.:

3 «Սովետական Հայաստան», ամսագիր, Երևան, 1969, թ. 12, էջ 37–38 վերատպված՝ «Պայքար», Բոստոն, 1970, թ. 116, էջ 2–3:

Ղրիմի հայկական գաղթօջախների քաղաքական և մշակութային ամենախոշոր կենտրոններից է եղել Կաֆա (այժմյան Թեոդոսիա) քաղաքը, որը մատենագրական աղբյուրների համաձայն ունեցել է 45 հայկական եկեղեցի: 1475 թվականի պատերազմի ընթացքում հիմնահատակ կործանվում և ապա թաթարական մզկիթների են վերածվում դրանցից 21-ը: Հ. Վ. Քուշներյանը իր 1895 թվականին սբ. Ղազարում լույս տեսած «Պատմութիւն գաղթականութեան Խրիմու» արժեքավոր ուսումնասիրության մեջ հիշատակում է, որ Կաֆայում ընդհուպ «մինչև անցյալ դարուն վերջերը դեռ կանգուն մնացած էին քսանչորս եկեղեցիք»: Այդ հաստատվում է տեղագրական բնույթի մի ընդարձակ պոեմով, որը գրված է Կաֆա քաղաքում և աչքի է ընկնում 24 հուշարձանների ճշմարտացի նկարագրությամբ[1]:

Քեֆէ, կասեն, մեծ քաղաք է,
Թագավորաց հաստատված է.
Քսանչորս եկեղեցի է,
Քարերն ամեն սրբատաշ է.
Քեֆէ քաղաք ծովահայաց,
Եկեղեցիքն զարդարած…

Քուշներեան, «Պատմութիւն գաղթականութեան Խրիմու», էջ 141:

Այնուհետև, պոեմի հեղինակը մեկ առ մեկ նշում է յուրաքանչյուր եկեղեցու տեղադրությունը:

Այժմյան Թեոդոսիայում պահպանվել են հայոց հինգ եկեղեցիներ, որոնցից երկուսը՝ սբ. Սարգիսը և սբ. Հրեշտակապետացը վերանորոգվել են պետության ծախքով: Այս և մյուս հուշարձաններից հավաքված 172 հայատառ արձանագրությունները, որոնք հիմնականում փորագրված են տաճարների պատերի մեջ ագուցված մարմարյա քանդակազարդ խաչքարերի վրա, վերաբերում են հասարակական կյանքի տարբեր բնագավառներին և իրադարձություններին: Շինարարական բնույթի արձանագրություններից մեկում հիշատակվում է, թե ինչպես ճարտարապետներ Սարգիսն ու Մինասը «հրամանաւ թագաւորին» մի քանի մեծահարուստ հայերի նպաստով կառուցում են տաճար: Մեկ այլ, կիսաշրջանաձև սպիտակ մարմարե սալաքարին փորագրված է, որ Գաբրիել և Միքայել հրեշտակապետաց անունը կրող տաճարը 1408 թվականին կառուցվել է «հալալ արդեամք Աստուածատուրին, կենակցին Աղութ Խաթնին և ծնողացն Սատարին, Մարեմ Խաթնին»: Նույն բնույթն ունի նաև հայոց ՊՀԴ (1425թ.) օգոստոսի 15-ին փորագրված արձանագրությունը:

Հավաքված արձանագրություններից մի քանիսը վերաբերում են 17-րդ դարի հռչակավոր նկարիչ Նիկողայոս Ծաղկարարին, որի նկա-

[1] ԴՀՎ, պրակ VII, էջ 19, արձ. հ^{մր} 19:

ռազարդած ձեռագրերից շուրջ երկու ու կես տասնյակ այժմ խնամքով պահպանվում են Մաշտոցի անվան Մատենադարանում:

1608 թվականին կանգնեցրած սպիտակ մարմարե գեղաքանդակ խաչքարի արձանագրությամբ պարզվում է, որ Նիկողայոս Ծաղկարարի կողակցի անունը եղել է Ջումրուտ, որդիներինը՝ Մինաս, Վարդերես և Պետրոս:

Առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում այն վիմագիր արձանագրությունները, որոնք ուղղակիորեն առնչվում են աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու տոհմագրությանն ու հայրենանվեր, ազգօգուտ գործունեությանը:

Հովհ. Այվազովսկու պատկերասրահի երկրորդ հարկի պատշգամբի ծովահայաց պատի վրա հայտնաբերվել են հինգ նոր արձանագրություններ, որոնցից չորսը արտացոլում են մեծ ծովանկարչի տոհմագրությունը: Այդ մարմարե հուշատախտակների արձանագրությունների մեջ հիշատակվում են Հովհ. Այվազովսկու ծնողները՝ Գևորգ-Կոստանդին Գրիգորյան և Հռիփսիմե Այվազովսկիները, եղբայրներ Գրիգորն (տեսուչ նավահանգստին Թեոդոսիոյ) ու Գաբրիելը, քույրը՝ Կատերինան, դուստրերը՝ Հեղինեն, Մարիամը, Ալեքսանդրան, Հովհաննան:

Հովհ. Այվազովսկին, ինչպես վկայում է պատշգամբի մուտքի վերևում ագուցված արձանագրությունը իր միջոցներով Թեոդոսիա է անցկացրել «աղբիւրս բարեհամ… յիշատակ իւր ազգի»: Նա մեծ ուշադրություն է դարձրել Ղրիմի հայկական հուշարձանների վերանորոգմանը:

Ղրիմահայոց հոգևոր կենտրոնը դարեր շարունակ եղել է սբ. Խաչ վանքը, որը հիմնադրվել է 1338 թ. (ըստ գմբեթի քիվի շուրջը փորագրված արձանագրության՝1358 թ.), Սուրխաթ-Սուրբ խաչ (այժմյան Ստարի Կրիմ) քաղաքից 4 կմ հեռավորությամբ լեռնալանջի վրա, խիտ անտառի մեջ:

Սբ. Խաչ վանքը եղել է նաև մշակույթի կենտրոն: Դժբախտաբար, արձանագրությունների մեծ մասն այժմ տեղում չէ, սակայն պահպանվածներն էլ որոշակի պատկերացում են տալիս, թե ինչպիսի հռչակավոր միաբանություն է եղել այստեղ դարեր ի վեր. տեղի անխոնջ վարդապետներն զբաղվել են գիտության տարբեր ճյուղերով, արտագրել են ձեռագրեր, ուսուցանել են բազմաթիվ աշակերտներ: Որ իսկապես Ղրիմի Սբ. Խաչը եղել է հոգևոր խոշոր կենտրոններից մեկը՝ ապացուցում է մինչև օրս լավ պահպանված մարմարյա այն հուշատախտակը, որ ագուցված է գավթի արևմտյան մուտքի աջ պատին՝ արտաքուստ:

Ղրիմի հայաշատ վայրերից է եղել նաև Ղարասու (այժմյան Բելոգորսկ քաղաքը), որի բոլոր հայկական հուշարձանները երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ընկել են ռմբակոծության տակ և ոչնչացել: Քաղաքում գործել են հայոց «ճեմարան պայծառ վարժելեաց տեղի» և ծխական դպրոցը: Քաղաքից մի քանի կիլոմետր հեռավորության վրա, դեպի Թեոդոսիա գնացող մայրուղու աջ բլրի գագա-

թին է գտնվում հայկական Թոպտի գյուղի թաղածածկ եկեղեցին, որի արևմտյան մուտքի ձախ կողմում արտաքուստ ագուցված 11 տողանոց ռիթմիկ արձանագրությունը գրավում է այցելուի ուշադրությունը իր հնագրական առանձնահատկություններով:

Փառաւոր տաճարս Աստուածային
Որ է պատկերք Հայոց ազգին,
Վերստին կառուցաւ հիմանց
Տրօք ողորմութեամբ Ղրիմա երկրին.
Յանուն սրբոյ Ուրբաթու կուսին,
Առաջնորդութեամբ Յակոբա քաջ հրաբունապետին
Եւ վերակացութեամբ Մահտեսի Յոհաննէսին
Եւ Մահտեսի Այտինին Քաֆայեցւոյ.
Ձեռամբ քարգործ Գրիգորին և Տօնականին
Վայելումն տէր Վարդան քահանային
Սարգիս տիրացին: Թվին ՌՃԾԱ (1702)-ին.

(վերծանումը՝ Գր. Գրիգորյանի):

Ղրիմի գաղթօջախի հայաշատ կենտրոններից են եղել Սուրխաթը, Սիմֆերոպոլը (նախկին՝Ագմեչեդ), Արմյանսկը (նախկին՝ Օրբազար-Արմյանսկի բազար), Եվպատորիան (նախկին՝ Կեռզլև), Բախչիսարայը և այլն:

Վիմագրագիտական արշավախումբը հարյուրից ավելի արժեքավոր արձանագրություններ է հավաքել նաև Ռոստովի մարզի քաղաքներից ու գյուղերից:

Նոր-Նախիջևանի սբ. Նիկողայոս տաճարի բակում եղած տապանաքարերից մեկի վրա, որ, դժբախտաբար, այժմ չի պահպանվել, փորագրված է եղել հանգուցյալ զորավար Հովի. Աբրահամյանի ոչ միայն համառոտ կենսագրականը, այլև ղրիմահայոց գաղթի, Նոր-Նախիջևան քաղաքի հիմնադրության և նորագաղթ հայրենակիցների արտոնությունների մասին:

Շատ արձանագրությունների մեջ հիշատակված են պատմական դեպքեր ու դեմքեր, տաճարների, դպրոցների, ուսումնարանների, աղքատանոցների, հայոց տպարանների հիմնադրության վերաբերյալ:

Ռոստովի մարզի հայոց պատմական հուշարձանների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում սբ. Խաչ վանքը, որը հիմնադրվել է 1783 թ.-ին ռուսահայոց թեմական առաջնորդ Հովսեփ Արղությանի կողմից: Վանքն ունեցել է իր դպրոցը, տպարանը և բազմաթիվ այլ շենքեր: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ հուշարձանը զգալի տուժել է. փլուզվել են բոլոր կից կառույցները, ավերվել է հայոց գերեզմանատունը: Սբ. Խաչի բակում են հանգչում Միք. Նալբանդյանի, Հայր. Ալամդարյանի, Ռաֆ. Պատկանյանի և շատ ուրիշ անվանի հայորդիների շիրիմները. (ներխուժելով Ռոստովի մարզ, Մյասնիկավա-

նում գերմանական զինվորները կործանում են Միք. Նալբանդյանի և Ռաֆ. Պատկանյանի մահարձանները՝ բրոնզե կիսանդրիները նետելով վանքի ստորև եղած գետակի մեջ: 1943 թ. ցուրտ ձմռանը, հունվար ամսին Մյասնիկավանի բնակիչ Կարապետ Մկրտչի Ադամյանը իր որդի Գուրգենի հետ միասին, գիշերը մտնելով գետակը, փնտրում և գտնում են կիսանդրիները և վերարկուների մեջ փաթաթած տանում են իրենց մառանում թաքցնում: Պատերազմից հետո նորից տեղադրում են):

Ռաֆ. Պատկանյանի մահարձանի պատվանդանի հարթեցրած մասերին փորագրված է չորս քառյակ բանաստեղծություն, որոնցից երկուսը՝ Նոր Նախիջևանի բարբառով: Իրենց էությամբ խիստ արդիական այդ տողերը հնչում են այսպես.

Մեղքըցիր քեզի ու քու զաւակիտ
Պահպանէ հաւատ, լուզուն խեղճ ազգիտ,
Ու անկէ էտև չի ցաւիլ հոգիս,
Թե որ տուն ինձի չի սիրիս, ատիս:
Եփոր շատ տարի կանցնին ու կերթան
Ու ոսկոռներուս իզն ալ չէ մնալու.
Հայ վա՛խ, խեղճ հայեր, ձեր որդիք կուգան
Պապերուն մեղքը հուղիս վրայ լալու:

Ապա՝

Մի կարծեք, որ ես սին փառքի համար
Իմ հառաչանքով լցրի աշխարհ.
Այս հեգ ամբոխի ծափին ու գովքին
Կարոտ չէր բնաւ իմ հպարտ հոգին:
Այո՛, իմ քնարի տխուր ձայները
Ցընցեցին հայի հոգու լարերը,
Արիւն էլ ազնիւ սըրտէ քամեցին,
Կըտրիճի աչքէ քունը փախուցին:

Ընդառաջելով ռոստովահայերի ցանկությանը, մարզի ղեկավարությունը հանձնարարել է համապատասխան մարմիններին՝ վերանորոգել սբ. Խաչ վանքը: Դրան մեծապես նպաստեց հուշարձանների պահպանման հայկական ընկերությունը: 1968 թվականին ճարտարապետ Մարկ Գրիգորյանի ղեկավարությամբ սկսվել են այդ աշխատանքները: Կանցնի որոշ ժամանակ և այդ տաճարը կստանա իր նախկին փառահեղ տեսքը:

Վիմագրագիտական արշավախումբը առաջիկայում շարունակելու է հետազոտական, հավաքչական աշխատանքները Դաղստանում, Չեչենո-Ինգուշեթիայում և Հյուսիսային Օսեթիայում, ապա հրատարակության է հանձնելու վիմական արձանագրությունների «Դիվան հայ վիմագրության» վերտառությամբ պրակը:

Հայկական Պոմպեյի ավերակները[1]

«…Ապա վերևից հանկարծակի հասավ տիրոջ պատուհասը և թանձր խավարը պատեց ողջ գավառը, քառասուն օր ցնցվեց այն և սաստիկ դղրդաց… եռում էր գետինը անդունդների ահեղ դողոցքով, բարձրանում էր վեր և այնտեղից ծովի ալիքների պես փլուզվում: Լեռները տապալվում էին, քարերը իրենց հիմքերից քակտվում, գեղեցիկ տներն ու ապարանքները դառնում էին բնակիչների գերեզմաններ: Աղբյուրները խցանվում էին, գետերը կորչում և ամենուր տատանվելով երերում էր, իսկ մարդկային աղաղակները լսվում էին անդունդների խորքից և երկնքից՝ վայ ձոր, վայ ձոր»… Եվ ողջ-ողջ գետնի տակ ընկղմվեցին 10.000 հոգի, որոնց գիտեին և հաշվել էին, իսկ անծանոթների թիվը ոչ ոք չգիտեր: Այդ պատճառով գավառի անունը կոչվեց «Վայոց ձոր…» («Պատմություն տանն Սիսական», էջ 103–104, Մոսկվա, 1861 թ.):

Այսպես է նկարագրում պատմիչ Ստեփանոս Օրբելյանը այն կործանիչ երկրաշարժը, որ տեղի է ունեցել 8-րդ դարի առաջին կեսին Վայոց ձորում՝ այժմյան Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններում: Այդ երկրաշարժից հիմնահատակ եղավ նաև հայկական Պոմպեյը, որը, համաձայն միջնադարյան կցկտուր տեղեկությունների, կոչվում է Մոզ: Համաձայն երկրաշարժերի պատմության (Վ. Ստեփանյան, «Երկրաշարժերը հայկական լեռնաշխարհում և նրա մերձակայքում», էջ 42–43, Երևան, 1984 թ.), այդ կործանման տարեթիվը համընկնում է 735 թ. հուլիսի 21-ի երկրաշարժերի հետ:

Վայոց ձորի և հատկապես Մոզանի շրջանի երկրաշարժերի վերաբերյալ վկայություններ են պահպանվել Մովսես Կաղանկատվացու («Պատմություն Աղվանից աշխարհի», Երևան, 1969 թ., էջ 252), Կիրակոս Գանձակեցու («Պատմություն հայոց», Երևան, 1961 թ., էջ 74) և այլ հեղինակների մոտ: Միջնադարյան պատմիչների կարծիքով Վայոց ձոր անունն առաջացել է Մոզի 785 թ. կործանումից հետո, թեև նրանց ծանոթ է եղել նաև այն, որ Եղիշեն, դեռևս 5-րդ դարում, հիշատակել է Վարդանանց ապստամբության կազմակերպիչներից մեկին՝ Հովսեփին, որը ծնունդով Վայոց ձորի գավառի Հողոցիմ (կամ Հողոցմանց) գյուղից էր և աշակերտել էր Մեսրոպ Մաշտոցին («Վասն Վարդանանց և հայոց պատերազմին», էջ 178, Երևան, 1957 թ.): Նշանակում է Վայոց ձոր գավառը նույն անվանարկմամբ գոյություն է ունեցել վերոհիշյալ երկրաշարժից ավելի քան 300 տարի առաջ, իսկ ավելի ճիշտ՝ այն ունի էթնիկական ծագում և գալիս է անհիշելի ժամանակներից:

Մեր օրերում ասֆալտապատ ճանապարհը ոլորապտույտներով Եղեգնաձորից տանում է դեպի Ջերմուկ: Մալիշկա գյուղից քիչ այն կողմ,

---

[1] Համահեղինակությամբ. Մարտին Հովհաննիսյան, երկրաբանական գիտությունների թեկնածու, «Երեկոյան Երևան» թերթ, 1971, Հմ 173, էջ 3–4:

չհասած Ազիզբեկովի շրջկենտրոն, անցորդի ուշադրությունը գրավում են ժայռաբեկորների մեջ կորած ավերակների կույտերը, որոնք այսօր ձգվում են դեպի շրջանային հիդրոկայանի մատույցները և մի տեսակ սահմանագիծ են դարձել երկու շրջանների միջև:

Այժմ հնարավոր չէ կոնկրետ ասել, թե հատկապես որ թվականի երկրաշարժից է հիմնովին կործանվել բարեբեր Մոզ քաղաքը՝ իր 10 հազար բնակիչներով: Երկրաշարժերն այս վայրերում իրար են հաջորդել 735, 869, 893, 906 և 1126 թվականներին, այսինքն այն շրջանում, երբ հիմնահատակ էին լինում Անին ու Դվինը: Այսպիսով, պարբերաբար կրկնվող երկրաշարժերը փրփրաբազալտի ու խարամների տակ թաղեցին մի ողջ քաղաքակրթություն, գուցե և շրջադարձային մի կարևոր հանգույց և մոռացության գիրկն անցավ երբեմնի ծաղկուն մի քաղաք: Մոզն անմոռաց էր և ժողովուրդը դարեր շարունակ չլքեց իր հարազատ օրրանը, կյանքն առկայծեց ավերակների կողքին, ավերակների մեջ, հարատևելով ընդհուպ մինչև 15-րդ դարը:

Այսպիսով, Մոզը, Երզնկայի նման, քանիցս կործանվելուց հետո, դարձյալ վերակենդանացել է: Պատահական չէ, որ այս ամբողջ հրաբխածին սարահարթը պատված է եղել հնադարյան սրբավայրերի խիտ ցանցով: Այստեղից հեռու չեն Գլաձորի մեծահռչակ համալսարանը, Թանատի վանքը, Արկազի Սուրբ խաչը, Սպիտակավոր Աստվածածինը, որոնք ցայսօր իրենց են ձգում հազարավոր ուխտավորների: Հրաբխի խառնարանում մինչև օրս եղած միակ աղբրակի մոտ իր գոյությունն է պահպանում կոպտաքարերից կառուցված մատուռը:

Մոզի ավերակները ձգվում են Արփա գետի հունով հոսած բազալտային լավայի շերտի երկայնքով, որն սկիզբ է առնում մոտավորապես 7–10 կմ հեռավորությունից Հայոց-սար (Դալի թափա) կոչվող նորագույն հրաբխից: Վերջինս մի բնական, գեղատեսիլ հուշարձան է, ունի իդեալական նստած կոնի ձև և վեր է խոյանում իր հիմքից ավելի քան 500 մ բարձրությամբ: Մահասփյուռ այդ հրաբուխ-վիշապը շատ անգամ է ժայթքել, նրա լավաներն ու մոխիրները սփռվել են մոտ 100 քառ կմ շրջագծով՝ առաջացնելով աստիճանաձև մակերևույթի հրաբխային մի հսկա բարձրավանդակ: Հայոց-սարի լավաները, որ ունեն վերին չորրորդական (կամ նորագույն) հասակ, հոսել են հիմնականում 3 ուղղությամբ՝ Մալիշկա, Մոզ և Հերհեր-Ազիզբեկով: Հատկանշական է, որ հրահեղուկ զանգվածի մեծ մասը հոսել է Մոզի ուղղությամբ՝ կազմելով մի քարային հսկա աղեղ Սպիտակասարի արևելյան եզրերին: Լավաների տակից ամենուրեք հորդում են տասնյակ սառնորակ աղբյուրներ, որոնց ակունքների շուրջը մշտապես ծաղկել են խոշոր բնակատեղիներ (Մալիշկա, Հերհեր և այլն):

Երկրաբանական առումով նորագույնի հասակը կազմում է 10–20 տարվա ժամանակահատված, իսկ Հայոց-սարի ժայթքման հոգևվարքի վերջին ժամկետն ունի առնվազն 5–10 հազար տարվա պատմություն: Այս տարիքը համընկնում է մարդկային քաղաքակրթության ամենա-

վաղ շրջանին, հետևաբար, ճիշտ է այն կարծիքը, ըստ որի Հայաստանի երիտասարդ բոցաշունչ լեռները բարձրացել են նախամարդու (կամ մեր նախապապերի) աչքի առջև:

Նախնական պրպտումները մեզ հակում են այն մտքին, որ մատենագիտական աղբյուրներում հիշատակված են միայն Մոզի կործանման վերջին շրջանի դեպքերը, իսկ նրա նախապատմությունը թաղված է բազալտների ու խարամների կույտերի տակ: Այդ են ապացուցում հազիվ նշմարվող վաղնջական կառույցների հետքերը, տեղ-տեղ երևացող «ցիկլոպյան» անշաղախ պարսպապատերը: Մոզ քաղաքի վերջնական կործանումը, ամենայն հավանականությամբ, տեղի է ունեցել Հայոց-սարի հրաբխային վերջին ժայթքման շրջանում: Այս ընթացքում լավայի երկայնքով կատարվել են ոչ միայն կործանարար ցնցումներ, այլև շարժվել են բեկորա-բազալտային հոսքեր, փլվել են լավայի մակերևույթի վրա եղած առանձին բլուրներն ու ցցվածքները, ապա շարժվել են գոլորշիապատ ցեխալավային զանգվածները: Մորֆոլոգիական տվյալները գալիս են ապացուցելու, որ լավայի նախկին մակերեսը եղել է անհարթ, գոյություն են ունեցել հեշտ փլվող հրային կուտակումներ (պարազիտային կոների տիպի), որոնք և հետագայում փլուզվելով՝ կատարյալ են դարձրել կործանումը: Նման ահեղ բնապատկեր գրանցվում է հազվադեպ: Այսօր քաղաքի ավերակները թաղված են անհավասար հաստությամբ խարամա-բազալտային շերտի տակ և մեր առջև այդ երբեմնի ծաղկուն հովիտը ներկայանում է որպես կույտերի ու փոսերի համատարած քարային մեռյալ զանգված:

Բնակավայրի ավերակները ամենացայտուն ձևով նկատվում են լավայի վերջնամասի՝ լեզվակի վրա, որն իրենից ներկայացնում է բավական մեղմ ռելիեֆ ունեցող մոտ 0,5 կմ երկարությամբ ցածրադիր բլուր: Վերջինիս արևմտյան ծայրամասում՝ տափարակի վրա տեղադրված է Մալիշկա գյուղի ջերմոցային տնտեսությունը: Այս գեղատեսիլ վայրը միաժամանակ հանդիսանում է Արփա գետի աջափնյա հովիտը, որը և առատորեն ողողվում է լավայի տակից դուրս հորդացող սառնորակ աղբյուրների ջրերով:

Հետաքրքիրն այն է, որ դեպի հիշյալ աղբյուրներն է ձգվում մի հսկա ջրանցք, մոտ 2 մ խորությամբ և 2 մ լայնությամբ, որը թույլ զիգզագներով կտրում է ամբողջ բնակավայրը արևելքից-արևմուտք: Ջրանցքից հանված են խոշոր բեկորային բազալտներ, որոնք և խորհել են տալիս այդ ծանր աշխատանքի մասշտաբների և տեխնիկական լուծումների մասին: Գուցե այն պաշտպանական մի գիծ է, քանզի տեղ-տեղ նրա մեջ նշմարվում են քարերով շարված շրջանաձև հորեր, յուրաքանչյուրը մոտ 3 մ տրամագծով: Հնարավոր է, որ այն ծառայել է ինչպես հատուկ տնտեսական, այնպես էլ արդյունաբերական նպատակների:

Այնտեղ, ուր Մոզ քաղաքը կորչում է բեկորաբազալտային զանգվածի տակ, մեր կողմից նկատվել է արտավիժման մի հսկա ճեղքվածք,

որի երկու եզրերին բլրաձև կիտված են շերտավոր և արագ սառած լավաները: Կասկած չի հարուցում այն հանգամանքը, որ հիշյալ գծով դուրս են ժայթքել գազախառն լավաներ և առաջացրել տիպիկ պայթման ձագար: Իսկապես, գետինը եռացել է այստեղ, անհամասեռ արտափքվել և ալիքավորվել:

Մոզ քաղաքի տարբեր հատվածներում պահպանված մշակույթի բեկորները (կառույցների անշաղախ կոպիտ շարվածքը, քարարկղային թաղումներ, խեցեղեն իրեր և այլն) անժխտելիորեն ապացուցում են, այն իրողությունը, որ մենք գործ ունենք ուսումնասիրության կարոտ չափազանց հետաքրքիր պատմական հուշարձանի հետ: Ժամանակն է, որ համապատասխան մարմինները, ինչպես և գիտական օջախները, մոտիկից զբաղվեն Մոզ քաղաքի պեղումների հարցով: Այդ հայրենանվեր գործում իրենց լուման կարող են ներդնել Ազիզբեկովի և Եղեգնաձորի շրջանները: Հանրահայտ է, որ ի թիվս այլ շրջկենտրոնների, արագ թափով զարգանում է նաև Ազիզբեկովը: Վերջինս իր արևմտյան ծայրամասով համարյա թափանցում է հնադարյան քաղաքի սահմանները: Քանի դեռ ուշ չէ և բուլդոզերները չեն հարթել Մոզի սրբազան մասունքները, պետք է անհապաղ միջոցներ ձեռնարկել այդ ուղղությամբ: Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտը, Պետշինի պատմական հուշարձանների պահպանման վարչությունը, գիտա-մեթոդական խորհուրդը, պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերությունը և մյուս կազմակերպությունները այդ կարևոր գործը ձեռնարկելու համար կարող են և պետք է միավորեն իրենց ջանքերը: Ցանկալի և արդյունավետ կլինի, եթե պեղումներին ձեռնամուխ լինեն հնագետներից և երկրաբաններից բաղկացած գիտական հատուկ արշավախումբ, որը կանոնավոր պրպտումների միջոցով դարավոր փլատակներից լույս աշխարհ կհանի ոչ միայն միջնադարյան Հայաստանի խոշոր քաղաքներից մեկը, այլև նրա շրջապատում կգտնի անտիկ աշխարհի քաղաքակրթությանը պատկանող անզուգական հուշարձաններ: Եվ որքան շուտ, այնքան լավ:

Հեռավոր հուշարձաններն ուշադրության կենտրոնում[1]

Պատմական հուշարձանների պահպանության հայկական ընկերությունը տարեցտարի ավելի է ծավալում իր հայրենանվեր գործունեության շրջանակները: Այժմ նա ի վիճակի է առանձին հոգատարություն ցուցաբերելու ոչ միայն Սովետական Հայաստանի, այլև նրա սահմաններից շատ հեռու գտնվող պատմա-ճարտարապետական հու-

[1] «Բնություն» ամսագիր, Երևան, 1971, Հ՚մ 17–18, էջ 74–77:

շարձանների պահպանման և վերանորոգման ուղղությամբ: Մոսկվայի, Լենինգրադի, Ղրիմի, Ռոստովի, Կրասնոդարի, Ստավրոպոլի, Հյուսիսային Կովկասի և այլ գաղթօջախների հայկական հուշարձանների ներկա վիճակին ծանոթանալու նպատակով ընկերության նախագահությունն այդ վայրերն է գործուղել համապատասխան մասնագետների, որոնք իրենց ծառայությունն են մատուցել ոչ միայն հուշարձանների բարեկարգման աշխատանքներին, այլև ըստ հնարավորին նպաստել են այդ հուշարձանները մշակութային օջախների վերածելու և դրանով իսկ կործանումից մեկընդմիշտ փրկելու կարևոր գործին: Այժմ Ընկերության նախագահությունն, ի թիվս այլ հարցերի, մտահոգված է հատկապես Ղրիմի և Ռոստովի մարզի հայկական հուշարձանների վերականգնման աշխատանքներին աջակցելու խնդիրներով: Ղրիմ են գործուղվել պատմական գիտությունների դոկտոր Աս. Մնացականյանը, Յու. Թամանյանը, արվեստագիտության թեկնածու Էմ. Կորխմազյանը, պատմական գիտությունների թեկնածու Գ. Գրիգորյանը և ուրիշներ, հատկապես Թեոդոսիա քաղաքի ս. Սարգիս և Հրեշտակապետաց եկեղեցիները վերանորոգող՝ Կիևի արվեստանոցի մասնագետներին անհրաժեշտ օգնություն ցույց տալու համար: Վերջերս սկսվել են նաև Ստարի Կրիմ (նախկին Սուրբ Խաչ, թաթարական արտասանությամբ՝ Սուրխաթ) քաղաքի մոտ գտնվող հռչակավոր Սուրբ Խաչ վանքի վերականգնման աշխատանքները:

Հիասքանչ է Ս. Խաչ վանքի դիրքը. այն գտնվում է անտառապատ սարալանջի վրա, ունի քաղցրահամ, սառնորակ ջրեր և այժմ էլ հանդիսանում է Ղրիմի գեղատեսիլ անկյուններից մեկը: Ամեն օր այս չքնաղ բնության հմայքն են վայելում հարյուրավոր զբոսաշրջիկներ՝ հարգանքի տուրք մատուցելով մեր պանդուխտ հայրերի ստեղծագործ հանճարին…

Այժմ էլ յուրատեսակ ուխտատեղի է դարձել Թեոդոսիա քաղաքի ս. Սարգիս եկեղեցին, որի բակում խաղաղ հանգչում է աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու մարմինը: Հազարավոր մարդիկ են այցելում հանճարեղ նկարչի մարմարակերտ շիրմաքարին, ուր փորագրված է իրեն խիստ բնորոշ մի թևավոր արտահայտություն՝ «Մահկանացու ծնեալ անմահ յիշատակ զիւրն եթող»: Ընկերությունը նպատակահարմար է գտել հենց այս եկեղեցու շենքը դարձնել հայկական քարեդարան (լապիդարիում)՝ այդտեղ ի մի ժողովելով քաղաքի տարբեր վայրերում սփռված հայկական մեմորիալ կոթողները, որոնց արձանագրությունները թարգմանվելու են ռուսերեն և ցուցադրվելու են առանձին սրահում: Նախատեսվում է քարեդարանում պահպանել նաև այն 7 մարմարակերտ հուշատախտակները, որոնք վերաբերում են Հովի. Այվազովսկու տոհմագրությանն ու շինարարական գործունեությանը:

Ընկերության՝ Հայաստանի սահմաններից դուրս գտնվող հայկական պատմական հուշարձանների պահպանման սեկցիան զբաղվում է նաև Բելոգորսկի (նախկին Ղարասու) շրջանի Թոպտի (այժմ Տոպոլևկա) գյուղի հուշարձանների վերանորոգման հարցերով:

Հատուկ ուշադրության կենտրոնում է Ռոստովի ս. Խաչ վանքը, որ հիմնադրվել է 1783 թ. ռուսահայոց առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի ջանքերով: Վանքն ունեցել է իր հոգևոր դպրոցն ու տպարանը (առաջինը Ռոստովի մարզում): Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ վանական համակառույցը մեծ չափով տուժեց՝ ընկնելով ռմբակոծության տակ: Այժմ կանգուն է միայն մեծ տաճարը, որը խիստ վնասված լինելու պատճառով քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն ենթակա էր քանդման: Ահա այստեղ էր, որ մեր Ընկերությունը բանակցություններ վարեց Ռոստովի ղեկավար մարմինների հետ և մեր նախագահի՝ ծերունազարդ Մարտիրոս Սարյանի եռանդագին ջանքերով կանխվեց տաճարի քանդման վտանգը, իսկ ականավոր ճարտարապետ Մարկ Գրիգորյանն իր ծառայությունը մատուցեց վերոհիշյալ գլխավոր հատակագծի մեջ մասնակի փոփոխություններ կատարելու գործում: Այժմ ս. Խաչը հիմնովին վերանորոգված է և վերածված Ռոստովի մարզային երկրագիտական թանգարանի հայկական մասնաճյուղի: Անցյալ տարի Հայկ. ՍՍՀ կուլտուրայի մինիստրությունում տեղի ունեցավ խորհրդակցություն, ուր որոշվեց ամեն կերպ աջակցել և անհրաժեշտ ցուցանմուշներով օգնել նորաբաց թանգարանին: Վերջերս տողերիս գրողը այցելեց ս. Խաչ վանք և հետաքրքվեց հարակից կառույցների շինարարության հարցերով: Վանքի ստորև կառուցվում է ընդարձակ մի լիճ, բարեկարգվել են շրջապատն ու բակը, որտեղ ամփոփված են Միքայել Նալբանդյանի, Ռաֆայել Պատկանյանի, Հարություն Ալամդարյանի և այլոց աճյունները:

Օրավուր գեղեցկանում և իր նախկին փառահեղ տեսքն է ընդունում ս. Խաչ վանքի համալիրը: Եվ ներքին հուզմունքով ուզում ես սրտագին շնորհակալություն հայտնել այն բոլոր ընկերներին, ովքեր իրենցից կախված ամեն ինչ արեցին ռոստովահայերի փառքի տաճարը պահպանելու և վերականգնելու գործում:

Այժմ ընկերության օրակարգի հարց է դարձել Կրասնոդարի երկրամասի Արմավիր քաղաքի հայկական եկեղեցու վերանորոգման խնդիրը: Տեղից ստացված նամակներում նշվում է, որ պահեստի վերածված եկեղեցու մի մասը գտնվում է անմխիթար վիճակում, փլուզման ենթակա է շենքի տանիքը: Ընկերության նախագահությունն անմիջապես արձագանքեց այդ ահազանգերին. հուշարձանի պատմա-ճարտարապետական արժեքը բնութագրող պաշտոնական նամակ ուղարկվեց Արմավիրի համապատասխան մարմիններին՝ խնդրելով շտապ միջոցներ ձեռնարկել հուշարձանը կործանումից փրկելու ուղղությամբ: Այս

տաճարը կառուցված է հայ միջնադարյան ճարտարապետության բնորոշ առանձնահատկություններով և անքակտելիորեն կապված է Արմավիր բնակավայրի հիմնադրման պատմության հետ: Բակում, մարմարակերտ շիրմաքարերի տակ, ամփոփված են առաջին չերքեզահայ քահանա Վարդան Գասպարյանն ու ծերունազարդ Կարապետ Արծիվյանը, որը մինչև ի խոր ծերություն քաջաբար կռվել է ավազակ լեռնաբնակների դեմ:

Արմավիրի հայկական հուշարձանի վերանորոգման ուղղությամբ եռանդուն աշխատանքներ է ծավալում Մարգարիտա Սերգեևնա Դանիլկևիչը, որը ղեկավարում է հուշարձանների պահպանման Համառուսաստանյան ընկերության Արմավիրի քաղաքային բաժանմունքի պատմության սեկցիան: Մենք համոզված ենք, որ առաջիկայում կսկսվեն Արմավիրի այս արժեքավոր հուշարձանի նորոգման աշխատանքները:

Ընկերության նախագահությունն այժմ լրջորեն զբաղված է Մոսկվայի և Լենինգրադի հայկական հուշարձանների բարեկարգման հարցերով: Պաշտոնական գրություններ են ուղարկվել հիշյալ քաղաքների ղեկավար օրգաններին՝ խնդրելով հատկապես բարեկարգել հնագույն հայկական գերեզմանոցները, ուր թաղված են բազմաթիվ անվանի հայորդիներ: Արդյունավետ հետևանք ունեցավ Ադրբեջանի կոմկուսի կենտկոմ ուղարկված՝ Ընկերության պաշտոնական գրությունը Լեռնային Ղարաբաղի և մյուս վայրերի հայկական հուշարձանները բարեկարգելու առթիվ:

Այժմ մեզ մտահոգում է ոչ պակաս կարևորություն ներկայացնող մեկ այլ հուշարձան. Օդեսայի մարզի Բելգորոդ-Դնեստրովսկ նախկին Ագքերման քաղաքի հայկական գերեզմանոցը, որը մարմարակերտ ընդարձակ թանգարան է բաց երկնքի տակ: Քանդակազարդ կոթողներն ու մահարձանները դիտողին հիացնում են իրենց գեղազարդային կատարելությամբ, բարձրարվեստ մանրաքանդակներով ու նրբաճաշակ հորինվածքներով: Առանձնապես աչքի են ընկնում մեծահամբավ Ասվադուրովների տոհմական դամբարանի մահարձանները: Խնդիրն այն է, որ առաջիկայում մեծ մասշտաբի շինարարական աշխատանքներ են ծավալվելու այդ շրջանում, և մենք պարտավոր ենք շտապ կարգով միջոցներ ձեռնարկել հուշարձանախումբը կործանումից փրկելու ուղղությամբ:

Հանրապետության սահմաններից դուրս գտնվող պատմական հուշարձանների վերաբերյալ հաճախակի կազմակերպվում են հրապարակային դասախոսություններ, ցուցահանդեսներ և կոլեկտիվ կինոդիտումներ: Բազմաթիվ այցելուներ դրվատանքով արտահայտվեցին Ղրիմի և Հյուսիսային Կովկասի հայկական հուշարձանների՝ Հայաստանի ճարտարապետի տանը կազմակերպված ցուցահանդեսի մասին:

Ընկերության նախագահության որոշմամաբ բոլոր մեծադիր լուսանկարներն իրենց նեգատիվ ժապավեններով նվիրաբերվեցին Հայաստանի պատմության թանգարանին:

Պատմական հուշարձանների հայկական ընկերությունն արդեն դարձել է ճանաչված հեղինակավոր կազմակերպություն. նրա մասին խորին ակնածանքով են արտահայտվում բոլորը, ովքեր մոտիկից ծանոթանում են նրա հայրենանվեր գործունեությանը ինչպես մեր հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից շատ և շատ հեռու:

Բաղաց աշխարհի ճամփաներով[1]

Ամենուր արդեն գարուն է: Բնությունն ապրում է իր զարթոնքը: Նոր ելնող կանաչն ու արևի ջերմացնող ճառագայթները մի ինչ-որ հաճելի զգացում են առաջացնում քո մեջ և ձգում դեպի բնության գիրկը, դեպի վեհապանծ սարերն ու անդնդախոր ձորերը: Ամեն-ամեն ինչ գեղեցիկ է այդ օրերին:

Իսկ ու՞ր գնալ: Եկեք այս անգամ մեկնենք քիչ ավելի հեռու՝ փրփրադեզ գետերի, անառիկ բերդերի ու կանաչ հովիտների վերածնված երկիրը՝ Ղափանը:

Ղափան մեկնելու համար պարտադիր չէ արձակուրդ ձևակերպել, ձեր երկվորյակն էլ բավական է՝ լինելու տեղի գեղատեսիլ վայրերում: Մեր երթուղին կկոչենք «Բաղաց աշխարհի ճամփաներով»…

Երեկոյան ժամը ինն անց տասնհինգ րոպե (Երևանի ժամանակով) «Զանգեզուր» գնացքը Երևանից մեկնում է Ղափան: Առավոտյան ժամը ութին արդեն Ղափանում ենք: Կայարանամերձ սրճարանում նախաճաշելուց հետո նստում եք քաղաքային ավտոբուս և մեկնում մինչև երրորդ հէկ: Կարգավորելով ուսապարկերը, ոտքով բարձրանում եք Հալիձորի բերդ, որի արտաքին պարսպապատերը ներքևից պարզ կտեսնենք: Բարձրանալով Հալիձոր, ձեր առջև կբացվի Ողջի գետի կանաչավետ հովտի համայնապատկերը:

Հալիձորը եղել է Դավիթ-Բեկի զորանոցը և գահանիստ կենտրոնը: Բերդի կենտրոնում կա թաղածածկ եկեղեցի, հին արձանագրությամբ խաչքարեր և տապանաքարեր: Փոքր-ինչ հանգստանալուց հետո դուրս կգանք հարավային մուտքից, կթեքվենք ձախ և արահետով կիջնենք մինչև լեռնալանջի սառնորակ աղբյուրը: Հենց այս աղբյուրի մոտից էլ սկսվում է դեպի ներքև տանող ճանապարհը: Քայլելով դեպի հյուսիս-արևմուտք, քսան րոպե հետո դուք կլինեք մի ընդարձակ բացատում, ուր կտեսնեք շրջանի անտառտնտեսության տնկարանի

[1] «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ», Երևան, 20.03.1971, Հմր 34, էջ 4:

պահակի խրճիթը: Ձեզ կդիմավորի պահակ Սահակ Մկրտչյանը, որը սիրալիր ողջունելուց հետո ձեզ կհյուրասիրի անուշաբույր թեյով ու լավաշով և կուղեկցի մինչև Վահանավանք: Դեպի արևմուտք ձգվող ոլորապտույտ ճանապարհը ձեզ կհասցնի հնադարյան փոքրիկ կամրջին, որի ձախ կողմում կտեսնեք մի լողավազան՝ մինչև գոտկատեղը լցված ջրով: Ավանդաբար պատմում են, թե հաղթական պատերազմներից հետո այստեղ է զովացել Դավիթ-Բեկը:

Մի սարսափեք ջուրը մտնելուց, այնքան էլ սառը չէ: Դադարից հետո հանգիստ քայլքով բարձրանում եք նույն անտառմիջյան ճանապարհով: Բարձունքի վրա աջից մեկ այլ ճանապարհ է միանում: Առանց երմտանքի շարունակեցեք գնալ վեր, դեպի հարավ: Անցնելով 500 մ տարածություն՝ անսպասելիորեն ձեր առջև կբացվի Սյունիքի ամենագեղեցիկ անկյուններից մեկը՝ կանաչապատ մի տափարակ հարթություն՝ շրջապատված մրգատու սաղարթախիտ ծառերով և մոշի թփերով: Զմռռանաք նայել դեպի ձախ, հաստաբուն ընկուզենու ճյուղին ամրացված մի ցուցանակի, որի վրա գրված է. «Խիկարի աղբյուր» և սլաքով ցույց է տրված ուղղությունը: Իսկ գիտեք ո՞վ է Խիկարը: Նա այժմ էլ ողջ է և աշխատում է Ղափանում: Երկիրը շենացնող ոսկի ձեռքեր ունի վարպետ Խիկար Դանիելյանը: Վահանավանքի հնագիտական արշավախումբը անցյալ տարի պեղումների ժամանակ հայտնաբերեց խաչքար, որը ոմն հայր Խիկարի պատվին կանգնեցված է եղել ուղիղ հազար տարի առաջ՝ 970 թ.: Հետագայում կործանել են խաչքարը և նետել ձորալանջ: 1970 թ. ղափանցի վարպետ Խիկարը նորոգեց ձորի աղբյուրը և վերստին կանգնեցնելով հազարամյա կոթողը, գրեց հիշատակագրություն…

Ընդամենը մի քանի քայլ թեքվելով դեպի աջ՝ դուք կտեսնեք Վահանավանքի սառնորակ աղբյուրը, որը կավե փողրակներով բերված է արևմտյան լեռնալանջից ավելի քան հազար տարի առաջ:

Վահանավանքի ճարտարապետական համակառույցին հասնելու համար ձեզ մնում է ընդամենը 60 մ: Վահանավանքը միջնադարյան հայ ճարտարապետության ինքնատիպ կառույցներից է: Համալիրի գլխավոր տաճարը կառուցված է 911 թ., քաղաքի գահակալ իշխան Ձագիկի կրտսեր որդու կողմից: Նրա անունով էլ մինչ օրս կոչվում է Վահանավանք: Առանձնապես մեծ արժեք են ներկայացնում կամարակապ գավիթն ու այունասրահը, որոնք փլատակներից մաքրվել են 1966–1970 թթ. պեղումների ընթացքում՝ պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերության կողմից:

Այստեղ կան բազմաթիվ վիմական արձանագրություններ, որոնցում հիշատակված են Վահան Նախաշինողի, Սյունիքի Սմբատ և Գրիգոր թագավորների, Վաչագան արքայազնի, իշխանաց-իշխան Աշոտի և այլոց անունները:

Գլխավոր տաճարից փոքր-ինչ հարավ, սաղարթախիտ բուսա-

կանության մեջ թաքնված է կրկնահարկ դամբարան-եկեղեցին, որը կառուցել է Շահանդուխտ թագուհին՝ 1086 թ.: Ամբողջ հուշարձանախումբը կերտված է կարմրավուն բազալտից և աչքի է ընկնում ճարտարապետական նուրբ մտահաղացումներով: Վահանավանքն ունեցել է իր դպրոցը, որի շրջանավարտներից շատերը դարձել են ականավոր գործիչներ, իսկ Վահան Սյունեցին՝ հայոց կաթողիկոս: Ի դեպ, Վահանի գահակալության տարիներին էր, որ հանճարեղ Գրիգոր Նարեկացին երկնեց խորախորհուրդ «Մատյան ողբերգության» պոեմը: Այս մասին հատուկ նշված է «Մատյանի» հիշատակարանում:

Բայց չմոռանանք մեր ժամանակի սղությունը: Առջևում Բաղաբերդն է՝ Սյունիքի «հույս ու ապավեն» հանդիսացող ամրոցը:

Վահանավանքից Բաղաբերդ կարելի է հասնել երկու կերպ.

1. Նույն ճանապարհով վերադառնալ մինչև սարալանջի պտույտը, ապա թեքվել ձախ և իջնել մինչև Ողջի գետը, Շհարջիկի կամուրջն անցնել և բարձրանալ Ղափան-Քաջարան տանող մայրուղին:

2. Վանքի հյուսիսային կողմի անտառային արահետով գնալ դեպի պիոներական ճամբարները, ապա նորակառույց ճանապարհով իջնել մինչև վերոհիշյալ մայրուղին: Երկրորդ տարբերակն ավելի հետաքրքիր է նրանով, որ այստեղ կտեսնեք նաև Կատարո վանքի ավերակները, ինչպես նաև պատմական Կապան քաղաքի մնացորդները՝ «Տանձու լենջ» վայրում: Ղափան-Քաջարան ասֆալտապատ խճուղին շուտով ձեզ կհասցնի Դավիթ-Բեկ բանավանը: Իհարկե, մինչ այդ, ճանապարհի աջ կողմում մեր դեմ կկանգնի Բաղաբերդի կրկնապարիսպների բուրգերից մեկը: Բերդ կբարձրանաք Բանավանի կողմից, դա ավելի հարմար է և ապահով: Ամրոցի միջնաբերդից բացվում է հեքիաթային մի տեսարան՝ հանդիպակաց Բաղակու քարը, որը բաժանվում է Ողջիի անդնդախոր կիրճով, Կապուտջուղի լեռները՝ ձյունապատ գագաթներով, Գիրաթաղ գյուղի ոլորապտույտ ճամփաները, ծաղկածիծաղ մարգագետինները…Մի պահ խորհենք Բաղաբերդի փառավոր անցյալի մասին, կպատկերացնեք, թե ինչպես չորրորդ դարում Անդոկ իշխանը Բաղաբերդի պարիսպների տակ ոչնչացրեց գոռոզ Շապուհ արքայի ընտիր բանակները: Չմոռանանք հիշել նաև այն եղեռնական օրը, երբ սելջուկյան Ելտկուզ աթաբեկը խաբեությամբ գրաված Բաղաբերդում 1170 թ. այրել տվեց ավելի քան 10.000 ձեռագիր մատյաններ…

Սակայն պետք չէ խորասուզվել դառն հուշերի մեջ: Ձեր առջև է ծաղկող Սյունյաց լեռնաշխարհը՝ իր արարչագործ ժողովրդով:

Երեկոն իջնում է խաղաղ լեռների վրա: Պետք է իջնել բերդից և մեկնել Ղափան. այնտեղ ձեզ սպասում է «Զանգեզուր» նորակերտ հյուրանոցը, ուր կտեղավորվեք և կընթրեք «Սյունիք» ճաշարանում: Առավոտյան շատ վայրեր կան դիտելու. պետք է տեսնել Ղափանի պղնձահանքային կոմբինատի նորակառույց հարստացուցիչ ֆաբրիկան, Կա-

վարտի բաց եղանակով օգտագործվող պղնձահանքերը, մեծահամբավ «Լենհանքերը», երկրագիտական թանգարանը, քաղաքի լիճը, իսկ արվեստասերները՝ երիտասարդ քանդակագործ Մարատ Նուրիջանյանի գողտրիկ արվեստանոցը:

Չմոռանաք երթուղային ավտոբուսով բարձրանալ Ղափանի «Աջափնյակը», որտեղից այնքա՛ն հստակորեն երևում է Խուստուփ լեռը՝ իր կտրտված լանջերով…

Քաղաքի երթուղային կայարանը հեռու չէ: Ձեզ է սպասում «Զանգեզուր» գնացքը, որը շարժվում է 21-ն անց 15 րոպեին: Ես գիտեմ, «ձեր սիրտը լեռներում է», բայց ինչ արած՝ վաղը երկուշաբթի է, առավոտյան ժամը ութին կլինեք Երևանում: Բարի գալուստ, «թխադեմ» լեռնցիներ:

Հայկական քարեդարան Թեոդոսիայում[1]

«Ժամանեցին մեզ աւուրք չարչարանց
Եւ գտին զմեզ նեղութիւնք անհնարինք…
Որոյ աղաղաւ ազգք օտարածնաց
Օտարացուցին զմեզ ի բնակութենէ մերմէ:
Հաստատունք յաշխարհի ի պանդխտութեան իւրեանց.
Պանդխտեցան երկրորդ անգամ և եղեն վտարանդիք
Ի ձեռանէ պանդխտաց ապստամբաց,
Ի սիրելեաց քակտեալք զորս ոչ սուր սատակեաց,
Ցրուեցան զօրէն աստղեաց մոլորական կոչեցելոյ…»:

Այս հոգեցունց տողերով է իր նշանավոր «Պատմութիւնն» սկսում 11-րդ դարի բանաստեղծ-պատմիչ Արիստակես Լաստիվերտցին (Պատմութիւնն Արիստակիսի Լաստիւերտցւոյ, Երևան, 1963, էջ 21–22):

11-րդ դարի երկրորդ կեսին Հայաստան ներխուժած սելջուկթուրքերի, ապա սրանց հաջորդած թաթար-մոնղոլների վայրենաբարո կոտորածների պատճառով մոխրակույտերի վերածված մեր երկրից սկսվում է ակամա մասսայական արտագաղթ դեպի օտար ափեր: Թողած իր հայրենի բնօրրանը, հայ գաղթականության զգալի մի հատված երկար դեգերումներից հետո հանգրվանում է Ղրիմի լայնածավալ տափաստաններում: Հարմարվելով նոր գաղթօջախի բնակլիմայական պայմաններին և սոցիալ-քաղաքական իրադրությանը, հայ ազգաբնակ-

---

[1] «Սովետական Հայաստան» ամսագիր, Երևան, 1972, Հմր 7, էջ 38–39: «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի VII պրակում ամփոփվեցին Թեոդոսիայի երկրագիտական թանգարանի, Սբ. Սարգիս եկեղեցու (քարեդարանի) բակի և առհասարակ Ուկրաինայի և Մոլդովայի տարածքներում գտնվող հայկական նախկին գաղթօջախների վիմական արձանագրությունները: Տես, ԴՀՎ, պրակ VII, Ուկրաինա, Մոլդովա, կազմեց՝ Գր. Գրիգորյան, Երևան, 1996:

չությունն աստիճանաբար սկսում է իրեն հատուկ խաղաղ, ստեղծագործ աշխատանքը. կառուցում է գյուղեր ու քաղաքներ, տաճարներ ու դպրոցներ, բերդեր ու կամուրջներ, անց է կացնում ոռոգման ջրանցքներ ու առուներ, մշակում խոպանացյալ հողերը: Եվ պատահական չէ, որ ճենովական միջնադարյան աղբյուրներում Ղրիմի թերակղզու հարավ-արևելյան հատվածը կոչվում էր «Armenia maritima» – Ծովափնյա Հայաստան:

Ղրիմի հայաշատ բնակավայրերից էր Կաֆա, այժմյան Թեոդոսիա քաղաքը, որը 1439 թվականի տվյալներով ուներ շուրջ 30.000 հայ ազգաբնակչություն և մի քանի տասնյակ հայկական եկեղեցիներ:

Ահա այդ եկեղեցիներից մեկի՝ Սուրբ Սարգսի մեջ վերջերս բացվեց հայկական քարեդարանը «lapidarium»: Սբ. Սարգիս եկեղեցին գտնվում է Թեոդոսիայի հայկական թաղամասի կենտրոնում, ծովից շուրջ 200 մ հեռավորության վրա, Միհրդատյան կոչվող սարի ստորոտում:

Ուկրաինայի կառավարության որոշմամբ ինչպես այդ, այնպես էլ հայոց սբ. Հրեշտակապետաց և սբ. Ստեփանոս եկեղեցիները վերջերս վերանորոգվեցին: Իսկ ինչպե՞ս կործանումից և անհետացումից փրկել այն արժեքավոր կոթողային հուշարձանները, որոնք հարյուրներով սփռված են Ղրիմի տարբեր վայրերում, անհատ մարդկանց մոտ…

Թերևս այդ էր հիմնական պատճառներից մեկը, որ Թեոդոսիայի քաղաքային մարմինները պաշտոնական գրությամբ դիմեցին Հայաստանի Գիտությունների ակադեմիային և պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերության նախագահությանը՝ խնդրելով Հայաստանից մասնագետներ գործուղել Ղրիմ՝ Թեոդոսիայի քարեդարանը հիմնադրելուն աջակցելու համար: Եվ ահա 1971թ. ամռանը մի խումբ հայ մասնագետներ (ճարտարապետ՝ Յուլի Թամանյան, հնագետ-լուսանկարիչ՝ Արտաշես Վրույր, տեխնիկական գիտությունների թեկնածու՝ Գուրգեն Արզումանյան, պատմական գիտությունների թեկնածու՝ Գրիգոր Գրիգորյան) մեկնեցին Թեոդոսիա և Կիևից ժամանած մասնագետների հետ միասին ձեռնամուխ եղան քարեդարանի բացման աշխատանքներին: Սակայն երկու հանրապետությունների մասնագետները ապագա քարեդարանի շենքը դիտելուց հետո եկան միասնական եզրակացության, որ նրա պատերը անբավարար լույսի պատճառով տառապում են սնկային հիվանդությամբ: Պետք է ինչ-որ հնար գտնվեր: Իհարկե, ավելի հեշտությամբ և քիչ ծախսերով կարելի էր քարեդարանը հիմնադրել սբ. Հրեշտակապետաց եկեղեցում, որը հիանալիորեն նորոգված էր վերջերս: Սակայն դա այնքան էլ նպատակահարմար չէր, քանի որ հենց սբ. Սարգսի բակում է գտնվում Թեոդոսիա քաղաքի ուխտատեղին՝ աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու դամբարանը, ուր այցի են գալիս հազարավոր զբոսաշրջիկներ: Ի վերջո

որոշվեց շտապ վերանորոգումից հետո քարեղարանը բացել սբ. Սարգսի սրահներում:

Քաղխորհրդի որոշմամբ Կերչ քաղաքից անմիջապես Թեոդոսիա տեղափոխվեց աշխղեկ Կուխարի վերանորոգող բրիգադը: Ընդամենը տաս օրվա ընթացքում, մինչև տաճարի քիվերը քերվեց բորբոսապատ սվաղը, իսկ արևելյան բեմի վերին ծեփերը պոկելիս բացվեցին դեռևս թուրք-թաթարական արշավանքների շրջանում փակված չորս պատուհանները: Տաճարի ապագան փրկված էր: Արևի լույսի խրձերը առատորեն սահեցին ներս՝ խաղալով նորածեփ պատերի վրա: Հրճվանքի մեջ էին բոլոր ներկաները: Նորոգումն ավարտված էր, կարելի էր տեղադրել ցուցանմուշները…

Առաջին անգամ հայ իրականության մեջ, քաղաքամայր Անիի քարեղարանից հետո, այստեղ՝ Ղրիմում բացվում էր մեր ժողովրդի նյութական մշակույթի երկրորդ քարեղարան-թանգարանը, ուր ցուցադրվելու էին ղրիմահայ գաղութի տարածքում սփռված գեղաքանդակ խաչքարեր, մարմարյա տապանաքարեր, բազմաբնույթ արձանագրություններ: Թեոդոսիայի երկրագիտական թանգարանի դիրեկտոր Ա. Կ. Շապովալովայի աջակցությամբ թարգանվեցին ռուսերեն և առանձին ցուցանակներով փակցվեցին յուրաքանչյուր հուշարձանի վրա:

Նորաբաց քարեղարանի ցուցանմուշների 90 տոկոսը կերտված է սպիտակ մարմարից և ունի պատմաճարտարապետական ու գեղարվեստական մեծ արժեք: Արձանագրությունների մեծագույն մասը վերաբերում է 14–17-րդ դարերին. դրանց մեջ հիշատակվում են Ղրիմի և Արևմտյան Ուկրաինայի հայ իշխանազուններ, զորավարներ, ավագ պարոններ, ճարտարապետներ, քանդակագործներ, նկարիչ-ծաղկողներ, վաճառականներ ու արհեստագործներ: Վիմագրերի մեջ վկայություններ են պահպանվել թուրք-թաթարական ասպատակությունների, նրանց վայրագությունների ու սպանությունների մասին: Խաչքարերից մի քանիսը կանգնեցված են ծովահեղձ հայերի հիշատակին: Այս հուզիչ հիշատակների կողքին կան նաև այնպիսիները, որոնք անմիջաբար առնչվում են մեծահամբավ ծովանկարիչ Հովի. Այվազովսկու շինարարական գործունեությանը: Քարեղարանի հարավային պատին՝ ներքուստ ագուցված մարմարե մեծ հուշասալի վրա ոսկեզօծ տառերով փորագրված է այն մասին, որ «Տաճարս սբ. Սարգսի վերանորոգեցաւ յաւերակաց շնորհօքն Աստուծոյ ի 1888 ամի յորդօրանօք և ջանիւք Խորէն ծայրագոյն վարդապետի Ստեփանէի, առ որ նպաստեցին հայազն նկարչապետ Յովհաննես Այվազօվսկի, ընծայօղն հոյակերպ պատկերաց, և բարեպաշտ ժողովուրդն հայոց Թէոդոսիոյ»: Նույն բնույթի մարմարե մի հուշասալ, հայերեն և ռուսերեն արձանագրություններով, քարեղարանին սիրով տրամադրեց ազգությամբ ռուս, սակայն հայախոս տիկին Ալեքսանդրա Տրոֆիմովնա Չաուշյանը, որը Անդրանիկ զորավարի զինվորներից մե-

կի այրին է և այժմ բնակվում է սբ. Սարգիս եկեղեցու բակում: Այս արձանագրությունը նույնպես պատմում է Հովի. Այվազովսկու, ղրիմահայ բարեգործ Ղ. Բերբերյանի և հայազգի ծովակալ Մարկոս Սերեբրեկյանցի ժառանգներից մեկի համատեղ շինարարական գործունեության մասին՝ 1892 թվականին: Իր նրբին զարդաքանդակներով այցելուների ուշադրությունն է գրավում 17-րդ դարի ականավոր մանրանկարիչ Նիկողայոս Ծաղկարարի պատվին 1698 թ. կանգնեցված մարմարե մեծադիր խաչքարը: Մանրանկարչության ղրիմահայ դպրոցի այս տաղանդավոր ներկայացուցչի գործերից երկու տասնյակից ավելին այժմ խնամքով պահպանվում է Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանում: Ի դեպ, խորին երախտագիտությամբ պետք է նշել, որ Նիկողայոս Ծաղկարարի տապանաքարը ոչնչացումից փրկել և սբ. Սարգիս են տեղափոխել գիտությունների դոկտոր Ասատուր Մնացականյանն ու ճարտարապետ Յուլի Թամանյանը, որոնք դեռևս 1969 թ. հուշարձանների պահպանման հայկական ընկերության կողմից գործուղվել էին Ղրիմ՝ մեր ժողովրդի կերտած մշակութային օջախներին ծանոթանալու նպատակով:

Այսօր, երբ արդեն բացված է Թեոդոսիայի հայկական քարեդարանը, ուզում ենք ջերմագին խոսք հղել բոլոր այն կազմակերպությունների և ընկերների հասցեին, ովքեր ժամանակ, միջոցներ և եռանդ չխնայեցին հայ մշակույթի դարավոր այդ կոթողները համաժողովրդական սեփականություն դարձնելու գործում:

Ականավոր հայագետը

(ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյանի 60-ամյակի առթիվ)[1]

Հանրապետության գիտական հասարակայնությունն այս տարի ջերմորեն նշում է հայագիտության խոշոր երախտավորներից մեկի՝ Բաբկեն Նիկողայոսի Առաքելյանի ծննդյան 60 ամյակը:

Անցնելով կյանքի արգասալից մի ուղի, Բ. Առաքելյանը երիտասարդական խանդավառությամբ շարունակում է իր գիտա-մանկավարժական և հասարակական գործունեությունը, հայ դարավոր մշակույթի ուսումնասիրման մեջ թողնելով իր սեփական ոճն ու կնիքը: Առաքելյանը ծնվել է 1912 թվականին Հոկտեմբերյանի շրջանի Միգաշատ (նախկին Գեչրլու) գյուղում, երկաթուղային բանվորի ընտանիքում: Նա դեռ պատանի էր, երբ վախճանվեց հայրը և իրենց ընտանիքի ամբողջ հոգսն ընկավ մոր՝ գաղթականի դառը ճամփաներ անցած Սոփի մայրիկի ուսերին: Տնտեսական ծանր պայմաններում ուսումնատենչ պատանին ավարտում է միջնակարգ դպրոցը, ապա՝ գյուղատնտեսական տեխնիկումը:

---

[1] «Սովետական Հայաստան» ամսագիր, Երևան, 1973, Հմր 4,էջ 26–27:

Ավարտելով Երևանի պետական համալսարանը, նա անմիջապես մեկնում է Լենինգրադ, հաճախում տեղի համալսարանը և խորամուխ լինում Էրմիտաժի գրապահոցների գանձերի մեջ: Հենց այդ ժամանակ էր, որ նրան մոտիկից ճանաչեց ակադեմիկոս Հովսեփ Օրբելին և խորհուրդ տվեց զբաղվել հայագիտության բնագավառում: 1936 թվականին, 24 տարեկան հասակում, Բ. Առաքելյանն ընդունվում է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի պատմության ինստիտուտի ասպիրանտուրան և հաջողությամբ ավարտելով այն, 1941 թվականին պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա: Նույն տարում սկսվում է Հայրենական մեծ պատերազմը և զինվորի շինել հագած գիտնականը մեկնում է ռազմաճակատ՝ անցնելով Կովկասյան նախալեռներից մինչև Բեռլին: Պատերազմի ավարտից հետո, դեռևս սպայական համազգեստով Բ. Առաքելյանը շարունակում է ընդհատված գիտական աշխատանքը:

1949-ին նա հրապարակում է «Հայկական պատկերաքանդակները 4–7-րդ դարերում» մենագրությունը, որը թեմատիկ առումով լուրջ ներդրում էր հայ պատմագիտական գրականության մեջ: Սակայն Բ. Առաքելյանի ողջ ստեղծագործական կյանքում առանձնահատուկ տեղ է գրավում տասնյակ տարիների նրա տքնաջան աշխատանքի արդյունքը՝ «Քաղաքները և արհեստները Հայաստանում 9–13-րդ դարերում» մենագրությունը, որի առանձին հատորները լույս տեսան 1958 և 1964 թվականներին:

Այս մեծածավալ աշխատության մեջ գիտնականն իրեն հատուկ խորաթափանցությամբ մանրազնին քննում ու լուսաբանում է քաղաքների առաջացման և զարգացման ուղիները, արհեստագործության բուռն վերելքն ու անկումը պայմանավորող նախադրյալներն ու դրդապատճառները, առևտրի աշխուժացման և ծավալման ընթացքը, քաղաքային ներքին ինքնավարության կառուցվածքը, զարգացած ավատատիրության դարաշրջանի սոցիալ-դասակարգային հարաբերությունները և բազմաթիվ այլ խնդիրներ:

Հայ և այլալեզու մատենագրական աղբյուրների, հնագիտական պեղումներից հայտնաբերված նյութական մշակույթի մասունքների և վիմական արձանագրությունների հարուստ տվյալների հիման վրա նրան հաջողվել է պարզել, որ «Հայաստանում 9–11-րդ դարերում… առաջացել և զարգացել են 42 քաղաք, 23 գյուղաքաղաք և շատ ավաններ, որոնցից մոտ 30-ը աղբյուրներում հիշատակված են իբրև առավել խոշորները»: Ականավոր պատմաբանը ընթերցողին ներկայացնում է 10–13-րդ դարերում իրենց մեծությամբ և շքեղությամբ հռչակված հայոց քաղաքներ «Անին, Դվինը, Կարսը, Արծնը, Կարնո քաղաքը, Երզնկան, Արճեշը, Վանը, Մանազկերտը, Խլաթը, Բաղեշը, Նփրկերտը»:

Գիտնականին մեծապես հուզում են հայոց հին մայրաքաղաքների ճիշտ տեղակայության հարցերը, որոնք հանգամանորեն քննարկված են «Որտեղ են գտնվել Երվանդաշատ և Երվանդակերտ քաղաքները», «Արմավիրի պեղումների նշանակությունը հայ հին մշակույթի ուսումնասիրության համար», «Արմավիրի հմագիտական պեղումների մի քանի արդյունքները» և այլ աշխատություններում: Դրանք և շուրջ հարյուրի հասնող մյուս հոդվածները նոր խոսք են հայագիտության համար, կնճռոտ պրոբլեմների ընդունելի լուծում, փաստալից մեկնաբանում: Բ. Առաքելյանը մեր այն գիտնականներից է, որոնք պատմական երևույթներն ու փաստերը քննարկում, լուսաբանում են անաչառ սկզբունքային դիրքերից, առանց գերագնահատելու կամ թերագնահատելու որևէ ժողովրդի կերտած ինքնատիպ արժեքները: Հենց այս մենակետն է նրա դավանանքի խթանող որոշիչը, երբ նա ուսումնասիրելով հայ ժողովրդի բազմադարյան մշակույթը, ճիշտ կերպով կարողանում է բացահայտել նրա յուրահատուկ տեղն ու դերը համաշխարհային քաղաքակրթության և մշակույթի զարգացման պատմության մեջ: Որպես հնագետ-պատմաբան, Բ. Առաքելյանը երկար տարիներ գլխավորել է Գառնիի, Արմավիրի (1962 թ.) և Արտաշատի (1970 թ.) հնագիտական արշավախմբերը: Գառնիի պեղումների արդյունքներին նվիրված նրա երեք պրակներից երկուսը թարգմանվել են անգլերեն և 1968 թվականին հրապարակվել ԱՄՆ-ում, իսկ Գառնիի ամրոցի պալատական բաղնիքի խճանկարի վերաբերյալ նրա աշխատությունը հրատարակվել է գերմանական «Կլիո» հանդեսում:

1971 թվականին Հռոմում իտալերեն լեզվով տպագրվեց Արմավիրի պեղումների նախնական արդյունքների մասին Բ. Առաքելյանի հեղինակած արժեքավոր ուսումնասիրությունը:

Լինելով Միության ճանաչված գիտական օջախներից մեկի՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի հիմնադիրն ու տնօրենը, նա մեծ ջանքեր է գործադրում գիտական կադրեր պատրաստելու ուղղությամբ: Նրա աշակերտներից շատերն այսօր դարձել են անվանի հնագետ-պատմաբաններ և, հետևելով իրենց ուսուցչապետի օրինակին, շարունակում են մաքառել հայագիտության բնագավառում:

Բ. Առաքելյանը ներփակ գիտնական չէ և նրա ստեղծագործական կյանքի տարեգրքում հատուկ ընդգծվում է նրա մանկավարժական գործունեությունը: 1950 թվականից սկսած նա հայագիտական դասընթացներ է կարդում Երևանի պետական համալսարանում և Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտում: Առաքելյանը մի շարք ուսումնական և գիտական հաստատությունների, գիտական խորհուրդների անդամ է: Ընտրված է գիտական հանդեսների և ամսագրերի խմբագրական կոլեգիաների կազմում:

Բ. Առաքելյանի նախաձեռնությամբ և ամենասերտ մասնակցությամբ հնագիտության և ազգագրության ինստիտուտը հրատարակում է առանձին մատենաշարեր «Հնագիտական պեղումները Հայաստանում», «Հայաստանի հնագիտական հուշարձանները», «Դիվան հայ վիմագրության», «Հայ ազգագրություն և բանահյուսություն», որոնց մի շարք պրակներն արդեն լույս են տեսել՝ ջերմ արձագանքներ առաջացնելով ընթերցողների շրջանում: Բ. Առաքելյանը խոշոր դեր է կատարում հայ ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակության՝ բազմահատորյակի ստեղծման գործում, լինելով նրա խմբագիրներից և հեղինակներից մեկը: Նշանակալից են գիտնականի ծառայությունները հայ մշակույթը հանրապետության սահմաններից դուրս ներկայացնելու բնագավառում:

Նա բովանդակալից զեկուցումներով և հաղորդումներով հանդես է եկել միութենական և միջազգային մի շարք գիտաժողովներում (արևելագետների՝ Մոսկվայում կայացած 25-րդ, պատմաբանների՝ Ստոկհոլմի 11-րդ, Մոսկվայի 13-րդ, տնտեսագիտական մտքի պատմության՝ Լենինգրադի դասական հնագիտության խնդիրներին նվիրված Փարիզի 8-րդ կոնգրեսներում):

Արտասահմանյան մի շարք ուղևորությունների ընթացքում հայ ժողովրդի դարավոր մշակույթի այլազան հարցերի վերաբերյալ Բ. Առաքելյանը բազմաթիվ զեկուցումներ է կարդացել Բեյրութի և Կահիրեի հայ համայնքների համար (1960 թ.): 1967 թվականին Միլանի համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմի և ուսանողության խնդրանքով նա ընդարձակ ելույթ է ունեցել հայագիտության արդիական խնդիրների շուրջ: Այդ հիշարժան դասախոսության ժամանակ դահլիճում ներկա են գտնվել բազմաթիվ հայորդիներ: Նրան խանդավառ սիրով են ունկնդրել Վենետիկի Մուրադ Ռաֆայելյան դպրոցի սաներն ու ուսուցիչները, որոնց վաստակաշատ գիտնականը ծանոթացրել է մայր հայրենիքում բուռն թափով զարգացող հայագիտության և, մասնավորապես, հայ նյութական մշակույթի ուսումնասիրման ասպարեզում ձեռք բերված խոշոր նվաճումներին:

Թռչում է ժամանակն անվախճան՝ իր հարափոփոխ դրոշմը դաջելով բնության ու մարդու վրա: Այսօր ճերմակել են սիրելի ուսուցչապետի մազերը, բայց ինչ փույթ, որ այդպես է. չէ որ հենց այդ նույն ժամանակն է մարդկանց ու աշխարհին պատմում, որ եղել է մի սևագանգուր պատանի, մաքառել է կյանքում հանուն լույսի և ճշմարտության, սովորել է գիտունների մոտ և վիճել նրանց հետ, հետո դարձել դոկտոր-պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ, մայր հայրենիքի գիտության կաճառի թղթակից անդամ, կառավարական բարձր պարգևների արժանացած համեստ քաղաքացի:

Թարգմանիչը, բանաստեղծը, երգահանը. Ստեփանոս Իմաստասեր Սյունեցի[1]

Հայ մշակույթի, մասնավորապես երաժշտական արվեստի բնագավառում, 8-րդ դարի առաջին տասնամյակներին փայլատակեց Ստեփանոս Իմաստասեր Սյունեցու անունը: Նա եղել է հմուտ թարգմանիչ, «անհաղթ հռետոր», բանաստեղծ և հռչակավոր երգահան:

13-րդ դարի ականավոր պատմիչ Ստեփանոս Օրբելյանը Ստեփանոս Սյունեցուն համարում է «Երկնքի սյուն, հավատի խարիսխ, անդրդվելի վեմ, երկնային մարդ, երկրային հրեշտակ…»:

Ստեփանոսը ծնվել է Դվինում, ուսումն ստացել է կաթողիկոսարանում, ապա հոգևոր կոչում ստանալուց հետո ուսանել է Սյունյաց Մաքենոցաց վանքի (Վարդենիսի շրջան, Չիչակլու գյուղ) մեծահամբավ վանահայր Սողոմոնի մոտ, հմտանալով «գործնական և տեսական գիտելիքների մեջ»: Այնուհետև Ստեփանոսը աշակերտում է Սյունյաց եպիսկոպոս Մովսեսին և հասնելով «ի գագաթն տեսական շնորհին», իրավունք է ստանում դասավանդել Սյունյաց վարժարանում:

Հայոց կաթողիկոսը, իմանալով Ստեփանոսի ազգօգուտ գործունեության մասին, նրան հրավիրում է Դվին, ուր նա սկսում է եռանդագին զբաղվել հին ու նոր կտակարանների մեկնությամբ: Սակայն վեճի բռնվելով հայոց ասպետ Սմբատ Բագրատունու հետ՝ այդտեղից հեռանում է: Ստեփանոսը մեկնում է Կոստանդնուպոլիս, ուսումնասիրում է հունարեն և լատիներեն լեզուներ, հմտանում հունական դասական փիլիսոփայության մեջ: Ապա գնում է Աթենք և խորամուխ լինում տեղի հարուստ գրադարանների գանձերի մեջ: Հենց այս ուսումնառության ժամանակ էլ Ստեփանոսը Դավիթ հյուպատոսի աջակցությամբ ծավալում է իր թարգմանչական մեծ գործունեությունը: Նրա համբավը հասնում է բյուզանդական կայսրին, որի խնդրանքով Ստեփանոսը հրավիրվում է արքունիք: Սակայն նա երկար չէր կարող մնալ արքունիքի պալատներում: Հայաստանը ծխում էր մոխրակույտերի մեջ: Թվով 800 հայ իշխանների արաբական խալիֆը ողջակիզել էր՝ Նախճվանի վանքերում ներփակելով: Այդ եղեռնական լուրերը հանգիստ չէին կարող տալ մեծ Իմաստասերին: Ստեփանոսը գաղտնի վերադարձավ մայրաքաղաք՝ Դվին, ու անմիջապես ներկայացավ Դավիթ կաթողիկոսին: Նրա գալստյան լուրը իմանալով՝ Սյունյաց Բաբկեն իշխանը կաթողիկոսին խնդրում է Ստեփանոսին ձեռնադրել Սյունիքի մետրոպոլիտ (այդ ժամանակ արդեն մահացել էր Հովհաննես Սյունյաց եպիսկոպոսը):

Մետրոպոլիտի գավազան ստանալով՝ Ստեփանոս Իմաստասերը ժամանում է Սյունիք և անմիջապես սկսում է շրջագայել Սյունյաց 12 գավառներում՝ ամենուր բացելով կրթամշակութային օջախներ:

---

[1] «Պոնձի համար», թերթ, 1973, Հմր 98, էջ 3:

Ստեփանոս Իմաստասերը մեռնում է եղեռնական մահով 735 թ հուլիսի 21-ին, Վայոց ձոր (այժմ Եղեգնաձորի շրջան) գավառի Մոզ ավանում և թաղվում է Գլաձորից վերև գտնվող Թանահատի վանքում:

Ավանդությունը Ստեփանոս Իմաստասերի սպանության հետ կապում է Մոզ ավանի կործանումը:

Ստեփանոսը եղել է երաժիշտ և հոգևոր երգերի հեղինակ, ձայնագրագետ և երգասաց: Օրբելյան պատմիչը այս կապակցությամբ գրում է. «Երաժշտությունը բաժանեց 8 ձայնի, երգեց քաղցրահամ կցորդներ, կարգավորեց շարականները»: Նույնն է վկայում Կիրակոս Գանձակեցին: Ակադեմիկոս Մանուկ Աբեղյանի կարծիքով Ստեփանոսը «հորինել է կցորդներ, թե՛ բառեր, և՛ թե նրանց եղանակները. և շարականների մեջ նա համարվում է հեղինակ մարտիրոսաց շարականների»: Երաժշտագետ Ռ. Աթայանը Ստեփանոսին է վերագրում հայ երաժշտական խազագրության հիմնադրի պատիվը:

Ստ. Իմաստասերի քույրը՝ Սահակդուխտը, նույնպես եղել է ժամանակի ականավոր երգահաններից մեկը: Ավելի քան 1200 տարի է անցել Ստ. Իմաստասերի ժամանակից: Սերունդները երախտագիտությամբ են հիշում մեծ երաժշտագետի և երգահանի անունը: Եվ այսօր, երբ Սյունյաց լեռնաշխարհում արդեն մի քանի տարի է, ինչ գործում է Ղափանի փառահեղ երաժշտական ուսումնարանը, ակամա միտք է ծագում, ինչու՞ այդ ուսումնական հաստատությունը չկոչել հայ ժողովրդի պանծալի զավակ Ստեփանոս Իմաստասերի անունով:

Վահանավանք[1]

Պատմական յուշարձանների պահպանման հայկական ընկերութեան նախաձեռնութեամբ և միջոցներով 1966 թուականի ամրանից սկսուել է հայ ճարտարապետութեան մեծարժէք կոթողներից մէկի՝ Վահանավանքի բարեկարգումը: Այդ աշխատանքները իրագործում է Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի հնագիտական արշաւախումբը, որը հինգ տարիների կանոնաւոր պեղումների ընթացքում յայտնաբերել է պատմահնագիտական բազմաթիւ նիւթեր և վիմագիր արձանագրութիւններ:

Վահանավանքը գտնվում է պատմական Սիւնիքի Բաղք գաւառում, այժմեան Ղափանի (Կապան) քաղաքից 7 քլմ հեռաւորութեամբ, Ոխչի գետի աջ ափին, Շահարջիկ գիւղի հանդիպակաց անտառախիտ սարալանջի հարթութեան վրայ:

---

[1] «Կանչ», Բեյրութ-Լիբանան, 1973, Հմր 101, էջ 5: Առաջին անգամ այս հոդվածը լույս է տեսել «Սովետական Հայաստան» ամսագրում (1971 թ., Հմր 8, էջ 37–38): Հետագայում վերատպվել է վերոնշյալ «Կանչ» թերթում:

Առաջին գրաւոր տեղեկութիւնները Վահանավանքի կառուցման վերաբերեալ պահպանուել են Սիւնեաց տոհմիկ պատմիչ Ստեփանոս Օրբելեանի «Պատմութիւն Տանն Սիսական» աշխատութեան մէջ: Ստ. Օրբելեանի վկայութեան համաձայն Սիւնեաց Բաղք գաւառի գահակալ իշխան Ձագիկի կրտսեր որդի Վահանը իր իշխանազուն եղբօր աջակցութեամբ սկսում է կառուցել սոյն տաճարը «Յոյժ գեղեցիկ յօրինուածովք գմբեթայարկ և եռախորան, հաստայեղոյս և տաշածոյ վիմօք»: Վանքի Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին Վահանը զարդարում է «մեծամեծ և թագաւորական սպասուք»: 911 թուականին աւարտելով վանքի կառուցումը, նա առաջին հերթին աշխատում է ապահովել նորահաստատ կրօնական օջախի տնտեսական հիմքը: Բաղքի գահակալութիւն ստանձնած աւագ եղբօր՝ Ճիւանշիրի հաճութեամբ տեղի վանական միաբանութեանը յատկացուում են բազմաթիւ կալուածքներ, արօտավայրեր, այգիներ, ինչպէս նաև Շեկք, Աչաղուագէտ և Արավայր գիւղերը, որոնցից ստացուած եկամուտները տրամադրւում են աւելի քան 100 վանական ունեցող եղբայրութեանը:

Վահանավանքում բացւում է դպրոց, որտեղ ուսանելու են գալիս ոչ միայն Կապանի, այլև հարևան գաւառների բազմաթիւ պատանիներ: Այստեղ է իր կրթութիւնը ստացել մեծահամբաւ Վահան Սիւնեցի կաթողիկոսը, որը դեռևս առաջնորդ-եպիսկոպոս եղած ժամանակ կառուցում է մեծ տաճարի կամարակապ գաւիթը, սեղանատունը և արևմտեան լեռնալանջից կաւէ փողրակներով խմելու ջուր է բերում վանքի բակը: Այսպիսով, Վահանավանքն իր շրջակայքով դառնում է «իբրև քաղաք բազմաժողով»:

Հարկ է նշել, որ Սիւնիքի գահերէցութեան մէջ 10-րդ դարում առանձնապէս հզօրացել էր Բաղքի գահակալութիւնը Կապան իշխանանիստ կենտրոնով: Ուստի պատճառաբանուած է այն պատմական իրողութիւնը, որ հենց այս գաւառում 10-րդ դարի երկրորդ կէսին առաջացաւ Սիւնեաց թագաւորութիւնը, թէև Վայոց ձորի Եղեգիս գիւղաքաղաքը այնուամենայնիւ չէր կորցրել իր քաղաքական ազդեցութիւնը: Սիւնեաց Սմբատ Ա թագաւորը իր արքունիքը հաստատեց Կապանում, քանի որ վերջինս շրջափակուած էր բերդերի ամուր ցանցով, որոնց մէջ ռազմաստրատեժիք մեծ նշանակութիւն ունէին յատկապէս Սիւնեաց աշխարհի «յոյս և ապաւէն» հանդիսացող Բաղաբերդը, նրան հանդիպակաց Բաղակու քարը և միւս բերդ-ամրոցները:

Արքայանիստ քաղաքը պէտք է ունենար նաև իր արքունական եկեղեցին և տոհմական դամբարանը: Այդպիսի հանդիսացաւ Վահանավանքը մասնաւորապէս, Վասակ Սիւնեաց թագաւորի գահակալութեան վերջին շրջանում: Սմբատ Բ-ի օրօք Վահանավանքն ապրում է բուռն զարգացում, իսկ Գրիգոր Ա թագաւորն ու նրա ամուսին՝ Աղուանից արքայական Շահանդուխտը Վահանավանքում սկսում են մեծամեծ կառուցումներ:

1086 թուականին Շահանդուխտ թագուհին իր քոյր Կատայի և ամուսնու մահից յետոյ, Սիւնեաց թագաւոր դարձած Սենեքերիմ եղբօր աջակցութեամբ Վահանավանքում կառուցում է Ս. Աստուածածին կոչուող դամբարան-եկեղեցին, գաւիթը և մի շարք այլ շէնքեր: Այդ առթիւ Շահանդուխտը եկեղեցու հարաւային պատին ներքուստ փորագրել է տալիս արձանագրութիւն:

Վահանավանքը համարուել է նաև Աղուանից իշխանազունների տոհմական դամբարանը: Այստեղ են թաղուած «Բազում թագաւորք և թագուհիք Աղուանից և Բաղաց բազում իշխանք փառաւորք Սիսական աշխարհիս»:

Ստ. Օրբելեանը նշում է, որ այստեղ են ամփոփուած Սիւնեաց Սմբատ Բ և Սենեքերիմ թագաւորների աճիւնները: Երբ սելճուքեան հրոսակախմբերի կողմից Բաղաբերդի պարիսպների տակ չարանենգօրէն սպանուում է Սենեքերիմ թագաւորը, ապա «եկեալ մեծամեծացն և որդւոցն կոծ մեծ արարին ի վերայ (նորա) և բարձեալ տարան ի սուրբ ուխտն Վահանո և անդ եդին ի շիրիմի ընդ այլ թագաւորսն»:

Անշուշտ, այստեղ են թաղուած Սենեքերիմի որդիներ Գրիգոր Բ. Սիւնեաց թագաւորը և նրա կրտսեր եղբայրներ Սմբատն ու Սևադան, որոնց անունների յիշատակութեամբ Վահանավանքի պեղումների ժամանակ յայտնաբերուել են արձանագրուած քարեր:

Վահանավանքի Ս. Աստուածածին եկեղեցու գաւթում է թաղուած նաև Աղուանից Ստեփանոս կաթողիկոսը, որի արժէքաւոր արձանագրութեան յոթ բեկորների համադրումով վերականգնուեց ամբողջական վիմագիր տեքստը (տրվում է միայն թարգմանութիւնը). — «Ես Աղուանքի կաթողիկոս Տէր Ստեփանոսս, նեղուելով տաճիկներից (իմա՝-սելճուք-թուրքերից – Գ. Գ.), եկայ և իմ հանգիստը գտայ աստուածասէր թագուհի Շահանդուխտի և Կատայի կառուցած եկեղեցու գաւթում որ… (թող Աստուած) սրանց (նոյնպէս) արժանի դարձնի վերնայարկերի և պսակների. և մեր թագաւորին իր որդիներով պահպանի Աստուած իր կամքով. Ամէն»:

Վահանավանքի, ինչպէս նաև Սիւնիքի թագաւորութեան ժամանակաշրջանի պատմութեան համար մեծ կարևորութիւն է ներկայացնում այն արձանագրութիւնը, որը յայտնաբերուեց 1968 թ. օգոստոսի 15-ին տաճարի սիւնասրահը մաքրելու ժամանակ: Նորայայտ արձանագրութիւնը փորագրուած է կիսաշրջանաձև երկու սալաքարերի վրայ, որոնք կիպ ագուցուած են եղել գաւթի հարաւային մուտքի աջակողմեան կամարների միջև՝ յատակից 1,5մ բարձրութեամբ: Աւելի քան երկու մեթր երկարութիւն ունեցող վեցտողանի այդ արձանագրութիւնը փորագրուած է խոշոր հատ-հատ տառերով:

Բարձր գնահատելով նորայայտ արձանագրութեան պատմական արժէքը, միաժամանակ հարկ է նշել, որ փորագրութեան թուականը

տեղիք է տալիս լուրջ մտորումների: Ստ. Օրբելեանը իր «Պատմութիւն Տանն Սիսական» աշխատութեան մէջ յատուկ նշում է «Եղև շինութիւն սուրբ ուխտին (Վահանուվանից–Գ. Գ.) տ. 360 թուականին հայոց (911 թ.) ի թագաւորութեանն Սմբատայ Բագրատունւոյ», երբ Բաղքի իշխանը Ճևանշէքն էր՝ Վահան Զագիկեանի եղբայրը: Իսկ նորայայտ արձանագրութեան մէջ պարզ նշուած է, որ ժամատունը, եկեղեցին և սրահը կառուցուել են 1046 թուականին Սիւնիքի Սմբատ թագաւորի և նրա եղբայր Գագիկի կողմից: Արդեօք սխա՞լ է Սիւնեաց պատմիչի թուագրումը:

Մեր տարակուսանքները փարատուեցին մէկ տարի յետոյ:

1969 թ. օգոստոսի 4-ին կամարակապ գաւթի հողազանգուածը մաքրելիս յայտնաբերուեց առաջին կառուցող Վահան Զագիկեանի տապանաքարը՝ ՏԷՐ ՎԱՀԱՆ ՆԱԽԱՇԻՆՈՂ ՏԵՂ(Ե)ԱՑՍ մակագրութեամբ:

Նշանակում է՝ Սիւնեաց Սմբատ Բ. թագաւորի շինարարական արձանագրութիւնը վերաբերում է տաճարի կառոյցների նորոգմամբ: Իսկապէս Վահանավանքը 1046 թուականին վերակառուցուել է և ոչ թէ հիմնադրուել: Այսպիսով, մէկընդմիշտ հաստատւում է Ստ. Օրբելեանի այն վկայութիւնը, ըստ որի Վահանավանքը կառուցուել է 911 թուականին և ոչ 1046 թ., ինչպէս արձանագրել են Սիւնեաց թագաւորները:

Հնգամեայ պեղումների ընթացքում յայտնաբերուել են Սիւնիքի Գրիգոր Ա թագաւորի, նրա հայր իշխանաց իշխան Աշոտի, Սենեքերիմ թագաւորի Կիուրիկէ (Գուրգէն) վաղամեռիկ որդու (1099 թ.), Խաղբակ Որոզվացի (1061 թ.), Գէորգ Պահլավունու (1101 թ.), Ճիվանշիր, Սևադա, Հրահատ, Հասան և բազմաթիւ այլ իշխանների տապանաքարերը:

Վահանավանքն օրավուր բացում է իր գաղտնիքները. Թանձր հողաշերտից զգուշութեամբ մաքրուած է աւելի քան 250 քլմ մակերես: Այսօր բազմաթիւ ինչուներ իրենց պատասխաններն են ստացել, իսկ դեռևս որքան առեղծուածներ կան թաքնուած այս համրեցեալ փլատակների տակ, որոնք կը բացայայտուեն գալիք պեղումների ժամանակ:

Ուկրաինացի ճարտարապետի վաստակը Ե. Մ. Պլամենեցկայա[1]

Ուկրաինական հատուկ գիտա-արտադրական վերականգնման վարչության ճարտարապետ Եվգենիա Միխայլովնա Պլամենեցկայայի հետ ես ծանոթացա հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության բաժնի վարիչ Արտաշես Նազինյանի միջոցով, կիևաբնակ հայուհի Ելենա Պետրոսյանցի շնորհիվ…

[1] «Սովետական Հայաստան» ամսագիր, Երևան, 1974, Հմր 5, էջ 15–17:

1970թ. գարնանը Ա.Նազինյանի հանձնարարական նամակով մեկնում եմ Կիև: Հիմնական նպատակս է հավաքել Սովետական Ուկրաինայի արևմտյան տարածքում եղած հայկական վիմական արձանագրությունները: Ինձ դիմավորում է Պետրոսյանցը և ուղեկցում դեպի Ե. Պլամենեցկայայի բնակարանը: Տանտերը՝ միջին տարիքի, ժամանակից վաղ սպիտակած մազերով, կապուտաչյա մի տիկին, մեզ հրավիրում է ներս: Սկսվում է անկաշկանդ ջերմ զրույցը: Մեզ է միանում Եվգենիա Միխայլովնայի ամուսինը՝ ճարտարապետ Անատոլի Տյուպիչը: Գրասեղանը շուտով ծածկվում է բազմաթիվ գծագրերով, լուսանկարներով, վերականգնման ճարտարապետական նախագծերի պատճեններով…

—Սրանք Կամենեց-Պոդոլսկի հայկական պատմական հուշարձանների չափագրություններն են,—սկսում է զրույցը Եվգենիա Միխայլովնան:—Ահա սա այժմ վերականգնվող Հայկական առևտրի տունն է՝ հայ խոշոր վաճառականների բորսան, 14–18-րդ դարերի ինքնատիպ մի կառույց, արևելյան ոճի բազմաթիվ նկուղահարկերով, պահեստներով: Օրերս ավարտվեցին Աստվածածնի վերափոխման, հայոց եկեղեցու վերանորոգման աշխատանքները, իսկ սրանք, տեսնում եք, 14-րդ դարում հայազգի Սինան Խութլուբեյի կառուցած սբ. Նիկողայոս եկեղեցու շքամուտքի գծագրերն են: Տաճարի բակը խիստ կարիք ունի հնագիտական ուսումնասիրության: Եթե հայ մասնագետները մեզ աջակցեին…,—ժպտալով ինձ է նայում Պլամենեցկայան,— որքա՜ն առեղծվածներ կլուծվեին:

Ես մտովի համաձայնվում եմ ճարտարապետի հետ, սակայն նրան չընդհատելու համար գլուխս թեթևակի շարժում եմ՝ իհարկե, կօգնենք:

Կարծես իմ դրական շարժումը հասկանալով՝ Պլամենեցկայան ոգևորված շարունակում է.

Տեսեք այս քառագմբեթ, երկնասույզ աշտարակը. Սա սբ. Նիկողայոս զանգակատունն է: Այս տարի վերանորոգվելու է ամուսնուս՝ Անատոլիի նախագծով: Նախահաշիվը հաստատված է: Ի դեպ, ինքն է հայտնաբերել ձեզ ուղարկած հայերեն վիմական արձանագրությունը, որը վերջերս ուկրաիներեն թարգմանությամբ հրապարակվեց «Պրապոր ժովանյա» (Հոկտեմբերի դրոշ) թերթում: Չմոռանամ ասել, որ նորոգման կարիք ունեն Բերդի Հայկական դարպասները, քաղաքապետարանի հրապարակում եղած Հայկական ջրհորը…

Ուկրաինական քաղաք և այսքան «Հայկական»…Ինչու՞, ինչու՞ պետք է այդպես լիներ, ինչո՞ Հայկական լեռնաշխարհը դատարկվեր հայերից, վերածվեր մոխրակույտերի, հայ գաղթականությունը հասներ այս հեռավոր վայրերը, պալատներ կառուցեր, տաճարներ կերտեր օտար երկնակամարների տակ: Ինչու՞, ինչու՞ պետք է անեցին քաղաքամայր Անիից հասներ մինչև Արևմտյան Ուկրաինա, Ղրիմ, Լեհաստան, Սփյուռք:

Ինձ սթափեցնում է Եվգենիա Միխայլովնայի պատմությունը.

—Դուք դիտե՞լ եք Կամենեցի 17-րդ դարի դատավորներից մեկի՝ հայազգի Նիկոլայ Չայկովսկու և նրա տիկնոջ՝ Սոֆիայի արծաթապատ դիմանկարները: Ա՛յ, երբ լինեք Կամենեցի քաղաքային թանգարանում, ցուցասրահում կտեսնեք դրանք, ավելի քան 300 տարի է, սակայն շատ լավ պահպանվել են:

—Եվգենիա Միխայլովնա, Դուք երբևէ եղե՞լ եք Հայաստանում,—գործնական խոսակցության անցնելու նպատակով ընդհատում եմ նրան:

—Դժբախտաբար՝ ոչ, սակայն վաղուց երազում եմ լինել, մանավանդ իմ ընկերուհին՝ Ելենա Պետրոսյանցը, այնքան լավ բաներ է պատմում Սովետական Հայաստանի մասին: Ինչ հոյակապ ճարտարապետություն ունի հայ ժողովուրդը, ես դիտել եմ բազմաթիվ լուսանկարներ, ընթերցել եմ հայ ճարտարապետության վերաբերյալ բավականին գրականություն, սակայն աչքով տեսնելն ուրիշ է:

Ես նրան և ամուսնուն հրավիրում եմ Հայաստան՝ խոստանալով դառնալ նրանց էքսկուրսավարը…

Կես գիշեր է: Ես հրաժեշտ եմ տալիս հյուրընկալ տանտերերիս՝ խոստանալով նորից այցելել:

Առավոտյան մեկնում եմ Կամենեց-Պոդոլսկի, անմիջապես ներկայանում քաղխորհրդի նախագահ Լիդիա Նիկոլաևնա Դեմչուկին: Սիրալիր ընդունում է: Անմիջապես անցնում ենք գործնական խոսակցության: Քաղաքի գլխավոր ճարտարապետ Իգյասլավ Մեդվեդովսկու ներկայությամբ որոշում ենք՝ Հայկական առևտրի տունը վերանորոգումից հետո վերածվելու է հայ-ուկրաինական բարեկամության թանգարանի: Ցուցանմուշներ ձեռք բերելու հարցում օգնում են հայ մասնագետները:

Երկրագիտական թանգարանի դիրեկտոր Գրիգորի Նիկոլաևիչ Խոտյունի ընկերակցությամբ շրջում ենք հին քաղաքում: Ահա Հայկական թաղամասը՝ Սմոտրիչ գետի ափին. հրապարակն է, ձախում երևում է սբ. Նիկողայոսի երկնասույզ զանգակատունը, նրան կից Հայկական առևտրի տունն է, որի ձեղնահարկում աշխատում են մի խումբ բանվորներ: Մոտենում ենք նրանց, ողջունում: Աշխղեկը սիրով համաձայնում է ցույց տալ կառույցի բոլոր մանրամասները:

—Իսկ ինչու՞ են բանվորները նորից քանդում պատի շարվածքը,—հետաքրքրվում եմ ես:

—Ճարտարապետն է կարգադրել, Պլամենեցկայան: Դուք ճանաչու՞մ եք նրան: Ասում է՝ նախագծի համաձայն չենք արել, վերաշար պիտի տալ: Օ՛, շատ խիստն է տառակերության աստիճանի, բայց լավ մասնագետ է, ոչինչ չես ասի…

1973 թվականի ամռանը Կամենեց-Պոդոլսկում սկսվեցին հայ-ուկրաինական միացյալ հնագիտական արշավախմբի աշխատանքները:

Ավելի քան մեկ ամիս տևած պեղումների ընթացքում բացահայտվեցին շատ նորություններ, հայտնաբերվեցին նոր վիմագրեր, հնագիտական արժեք ներկայացնող բազմաթիվ առարկաներ, որոնք ի պահ տրվեցին քաղաքի երկրագիտական թանգարանին: Ինչ խոսք, այդ աշխատանքներին եռանդագին մասնակցում էր Եվգենիա Պլամենեցկայան՝ իր ղեկավարած բաժնի մասնագետ-ճարտարապետներով հանդերձ:

Սևանի ավազանի պատմական հուշարձանները[1]

Դեռևս նախապատմական ժամանակներից Սևանա լճի ավազանում ձևավորվել, ապրել ու գործել է մարդկային հասարակության տեղաբնիկ մի հատվածը: Գեղամա լեռների բազմաբովանդակ ժայռապատկերները, ջրի պաշամունքի հետ կապված քարակերտ վիշապները, հսկայական ժայռաբեկորներից կերտված կիկլոպյան ամրոցները, համաշխարհային հռչակ վայելող լճաշենյան դամբարանադաշտերը և, վերջապես, ուրարտական արքաների սեպագիր արձանագրություններն ու «Արտաշեսյան սահմանաքարերը» ստույգ ապացույց են այն իրողության, որ Հայկական լեռնաշխարհի այս հատվածը բնակեցված է եղել դեռևս վաղնջական ժամանակներից. բնակիչները զբաղվել են անասնապահությամբ, երկրագործությամբ, արհեստներով, կերտել են մշակույթի ինքնատիպ կոթողներ, կառուցել բերդ-շեներ ու տաճարներ: Ըստ պատմահայր Մովսես Խորենացու ու հետագա պատմիչների՝ Սևանի ավազանի տարածքը կազմել է Սյունյաց նախարարության սեփականությունը: Սյունիքի երկու ընդարձակ գավառները՝ Գեղարքունիքն ու Սոթքը, որոնք եզերել են Սևանա լիճը, նախարարական շրջանում ղեկավարվել են կառավարող տան սեպուհներով, իսկ այնուհետև՝ գահերեց կամ գահակալ իշխաններով:

Նախաուրարտական շրջանում այս տարածքում ապրել է Գել անունով ցեղախումբը, որին նվաճած ուրարտացիներն իրենց արձանագրություններում այդ երկրամասը կոչում են Գելակունի կամ Վելիքուխի, որ նշանակում է Գելերի երկիր, իսկ նրանց կենտրոնատեղին՝ այժմյան Կամոյի շրջանային կենտրոնը, անվանեցին «Խալդի աստծո քաղաք»:

Միջնադարում այս գավառի իշխանանիստ կենտրոնը եղել է Կոթ ավանը (այժմյան Մարտունու շրջանի) Ն. Գետաշեն, որը գտնվում է Արարատյան նահանգից եկող բանուկ ճանապարհի վրա: Այստեղից քարավանային ուղին շարունակվում էր մինչև Արցախի ու Կուրի ստո-

---

[1] «Սովետական Հայաստան» ամսագիր, 1980, Հմր 2, էջ 34–35:

ին հոսանքներում եղած բնակավայրերը: Երկրորդ ճանապարհը՝ Դվինից եկողը, մտնում էր Վայոց ձոր (այժմյան Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջանները միասին), ապա Արփայի եզերքով և Սելիմի լեռնանցքով հասնում Կոթ ավան:

Իբրև մեծ ավան, Կոթը հիշատակվում է 10-րդ դարի հարկացուցակներում:

Ըստ «Աշխարհացույց»-ի Գեղարքունիքը Սյունիքի 4-րդ գավառն էր և ակադ. Ս. Երեմյանի հաշվումներով ունեցել է 1735 քառ. կմ տարածություն: 10-րդ դարում կազմված հարկացուցակներից մեկի համաձայն Գեղարքունիքն ունեցել է 47 հարկատու գյուղ և Սյունյաց եպիսկոպոսարանին վճարել է 509 դահեկան հարկ:

Սևանը եզերող ընդարձակ գավառներից է եղել պատմական Սոթք (աղբյուրներում՝ նաև «Զաւդէք» և «Ծաւդէք») գավառը, որ Արշակունիների տիրապետության շրջանում կազմում էր առանձին վարչական միավոր՝ «ծաւդէացւոց իշխանութիւն»-ը, կենտրոն ունենալով Սաւդ (այժմյան Վարդենիսի շրջանի Զոդ գյուղը) ավանը: Նրա տարածությունը եղել է 2045 քառ. կմ: Պատմական սկզբնաղբյուրները մեկնաբանում են, թե «սակս հանապազորդեան բքոց և դառնաշունչ օդոցն (գավառս – Գ.Գ.) կոչեցավ Սոթք»:

Ֆեոդալիզմի դարաշրջանում Սոդից գավառը ունեցել է հարկատու 55 գյուղ, որոնց բնակիչները Սյունիքի հոգևոր կենտրոնին վճարել են 594 դահեկան եկեղեցական հարկ: Սոդից գավառի կազմում է եղել սահմանակից Այրք գավառակը, որ ընդամենն ունեցել է 19 գյուղ, իրենց 162 դահեկան հարկով, կենտրոն ունենալով Ծար ավանը:

Վարդենիսի շրջանի Մեծ Մազրա գյուղում մինչ օրս կանգուն խաչքարի 881թ. արձանագրության վկայությամբ Սոդից գավառի տիրակալ ավատներից է եղել Գրիգոր Ատրներսեհյանը, որ կոչված է «Սիւնեաց և Աղվանից իշխան» տիտղոսով: Այս ավանը պատկանում էր Վախթանգյան իշխաններին, որոնց գահանիստը Ծարն էր: Իբրև Սոդից գավառի տերեր, 13-րդ դարի վերջերին հիշատակվում են Վախթանգյան-Դոփյան իշխանները:

10-րդ դարի առաջին տասնամյակներին Գեղարքունիքի և մերձակա գավառների հայ ազգաբնակչությունը նեցուկ կանգնեց Աշոտ 2-րդ (Երկաթ) Բագրատունուն, որը հնարամտորեն Սևանա կղզում կազմակերպեց Արաբական Բըշր ոստիկանի բազմաքանակ բանակի կոտորածն ու փախուստը:

Սևանի ավազանի շրջակա գյուղերն ու ավանները մեծապես տուժեցին սելջուկ-թուրքերի ասպատակությունների ժամանակ, 11-րդ դարի երկրորդ կեսին: Ավերն ու ավարը շարունակվեցին ընդհուպ մինչև 12-րդ դարի վերջին տասնամյակները, երբ Զաքարյան եղբայրների գլխավորած հայ-վրացական միացյալ ազատագրական բանակները, ի

թիվս Հայաստանի այլ նահանգների, ազատագրեցին Սյունյաց լեռնաշխարհն ու նրա լճափնյա գավառները (1211 թ.)։ Ամիրսպասալար Զաքարեի և Աթաբեկ Իվանեի հաճությամբ, Սյունիքի հին իշխանական տոհմերի փոխարեն, Սևանի ավազանի գավառներում հրամայող դիրքեր ու ընդարձակ տիրույթներ գրավեցին օրավուր հզորացող Օրբելյաններն ու Պռոշյանները։

Սյունյաց լեռնաշխարհը, ընդ որում նաև Սևանի ավազանը հարուստ է հնագիտական և պատմա-ճարտարապետական հուշարձաններով։ Վաղնջական ժամանակների նյութական մշակույթի կողքին, առավելապես 9-րդ դարում, երբ նախարարական համակարգի քայքայումից հետո հանդես եկան գահերեցության և գահակալության ինստիտուտները, Սևանի ավազանը կառուցապատվեց ճարտարապետական նորանոր համալիրներով։

Իր սքանչելի բնապատկերով այցելուին հիացնում է Սևանա կզղում վեր խոյացող վանական համալիրը։ Հուշարձանախմբի սբ. Առաքելոց եկեղեցին կառուցվել է 874 թ. Մաշտոց Բ կաթողիկոս Եղվարդեցու և Սյունյաց Մարիամ տիկնոջ նպաստով և հովանավորությամբ։

Ատաղձագործական արվեստի գեղաքանդակ նմուշներ են սբ. Առաքելոցի նախշազարդ փայտյա դուռն ու նրբակերտ քիվերը, որոնք այժմ զարդարում են Հայաստանի պատմության պետական թանգարանի ցուցասրահները։

Ակնառու ճարտարապետական հուշարձաններից է Շողագա նաև (Շողուագայ, Շողագահ) վանքը (ՀՍՍՀ Մարտունու շրջանի Զորագյուղում)։ Այս տաճարը կառուցել է Սյունյաց իշխան Վասակ Գաբուռի կին և Աշոտ Ա Բագրատունի թագավորի դուստր Մարիամը (866–877 թթ.)։ Գեղարքունիքի հոգևոր-մշակութային կենտրոններից է եղել Վանեվանը, որ առ այսօր կանգուն վիճակում գտնվում է Մարտունու շրջանի Արծվանիստ (նախկին Կթանոց) գյուղի մոտ, Ալուչալու գետակի աջ հարթության վրա։ Վանական խումբը կառուցված է կոփածո և սրբատաշ քարերով, 903 թ.։ Գլխավոր եկեղեցու՝ սբ. Գրիգորի ութանիստ գմբեթի հյուսիս-արևմտյան և արևմտյան կողերին փորագրված է 20 տողանոց արձանագրություն, որն ունի պատմագիտական մեծ արժեք։

Սևանի ավազանի խոշոր մշակութային կենտրոններից է եղել Մաքենյաց (նաև՝ Մաքենոցաց, Մաքեստենից) վանքը, որի մասին մատենագրական տեղեկություններ են պահպանվել դեռևս 7-րդ դարից։ Նրա համբավը առավել տարածվեց 8-րդ դարի 60-ական թվականներին Սողոմոն Գառնեցու վանահայրության ժամանակ։ Մաքենյաց մենաստանի կամարների տակ ուսանել են միջնադարյան Հայաստանի ականավոր մտավորականներից շատերը («հարանց հայր» Սողոմոնը, համանուն կաթողիկոս Վանականը, Հովհաննես Ե և Մաշտոց հայրապետները և ուրիշներ)։ Արաբական խալիֆաթի տիրապետության շրջանում վանքը

քանիցս ենթարկվել է ավերմունքի և կողոպտման: 828 թ. ներխուժելով Գեղարքունիք, Խուռամյանների առաջնորդ Բաբեկը՝ («Բաբան Պարսիկ») կոտորեց 15000 մարդու, կործանեց Մաքենյաց վանքը՝ «զամենայն ստացուածս այրեաց և քանդեաց զամենայն շինուածս»:

Այս հոգևոր-կրթական օջախը վերելք ապրեց 9-րդ դարի 2-րդ կեսին՝ Գրիգոր Սուփան 2-րդի գահակալության տարիներին (859–912): Ընդարձակ կառուցումներից հետո Գեղարքունիքի գահակալը վանքի սպասավորներին տրամադրում է Բողաշենի ձկնորսարանը, ինչպես նաև Դեղձանագետի, Կոթի և Անմեռի կապալներից ստացվող 1250 դրամը: Այս միաբանությանը մեծ եկամուտներ էին տալիս Երևանում, Գառնիում, Եղեգիսում ունեցած բազմաքանդակ այգիները:

Ճարտարապետական-կառուցվածքային հորինվածքով և բնության հետ ներդաշնակվելու ուշագրավ լուծումներով աչքի է ընկնում Հայրավանքը, որն ավելի շուտ հիշեցնում է դիտակայան-ամրոց, քան սովորական հոգևոր շինություն՝ ծովակի ափին: Թեև եկեղեցու պատերի հնամենի վիմագրությունը 1211 թվականից է, սակայն այդ կառույցն «իր առանձնահատկություններով Գեղարքունիքի 9–10-րդ դարերում կառուցվածքների շարքին է պատկանում»:

Առավել կարևոր հուշարձաններից է Նորատուսի սբ. Աստվածածին եկեղեցին՝ կառուցված Գեղարքունիքի Սահակ իշխանի միջոցներով 9-րդ դարի վերջին: Քանդակագործական արվեստի գլուխգործոցներ են Նորատուսի խաչքարերը, որոնք թեև կերտված են ուշ միջնադարում, սակայն ունեն պատմա-հնագիտական խոշոր արժեք, հիշեցնելով Նոր Ջուղայի մեմորիալ կոթողները: Ըստ ժողովրդի մեջ պահպանված ավանդության, այստեղ է թաղված Գեղամ Նահապետի աճյունը: Հնագույն ժամանակներից մինչ օրս Սևանի ավազանը եղել է հայ ժողովրդի քաղաքակրթության օրրաններից մեկը և, որպես այդպիսին, ակնառու դեր խաղացել Հայաստանի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում: 15-րդ դարի առաջին տասնամյակներին նույնիսկ թուրքմենական արյունռուշտ ցեղախմբերը՝ ակկոյունլուներն ու կարակոյունլուները չկարողացան իր բնօրրանից կտրել հայ ժողովրդին, թեև նրանց անընդհատ ասպատակությունների ու ռազմական բախումների պատճառով մի պահ ամայացան Սևանի ավազանի մի շարք բնակավայրեր: Սակայն, ինչպես ուսուցանում է մայր պատմությունը, ծխաքողի պես չքացան օտարամուտ տարրերը, և 19-րդ դարի սկզբներին, ռուսական հաղթական բանակների աջակցությամբ այս անգամ էլ կապուտաչյա գեղեցկուհու շուրջը պատեցին բազում հայորդիներ:

Վահանավանք[1]

Հայտնի է, որ 885 թ. հայկական իշխանությունների, մասնավորապես Բագրատունիների, Արծրունիների և Սյունեցիների ռազմաքաղաքական սերտ դաշինքի և համատեղ գործողությունների շնորհիվ Հայաստանում վերականգնվեց պետական անկախությունը: Երկիրն ապրեց վերածնունդ. կյանք առան քաղաքներն ու գյուղերը, զարգացում ապրեցին արհեստները, առևտուր, զարթոնք ապրեց մշակութային կյանքը: Հայկական լեռնաշխարհը դարձավ շինարարական ընդարձակ մի հրապարակ: Այդ համազգային բուռն զարգացումից զերծ չմնաց նաև Սյունյաց նահանգը:

Հիմնադրվեցին մշակութային տասնյակ օջախներ, ընդ որում հանրահռչակ Տաթևի մայր տաճարը (895–906 թվականներին), Վահանավանքը (911 թ.), գրչության աչքի ընկնող կենտրոն Բղենո Նորավանքը (936 թ.), Գնդեվանքը (931–936 թթ.), Որոտնավանքը (1000 թ.) և շատ ուրիշներ:

Կապանի տարածքում երկինք սուզվեցին Սյունյաց Ձագիկ իշխանի կրտսեր որդու՝ Վահանի կառուցած տաճարի գմբեթները, որոնք այսօր մեզ են հասել ավերակների խորհրդավոր տեսքով: 10-րդ դարի կեսին Վահան Սյունեցի հայոց կաթողիկոսը վանահայր եղած ժամանակ այստեղ կառուցում է Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու եռակամար գավիթը (108 քառ մ), սեղանատունը, կավե փողրակներով ջուր է անցկացնում մինչև վանքի բակը:

Կամարակալ գավթի հատակին պեղումների ընթացքում հայտնաբերվել են Սյունյաց իշխանազունների մի շարք տապանաքարեր, որոնց մեջ պատմական արժեք են ներկայացնում Վահան Նախաշինողի, Վաչագան իշխանի մայր Խուշուշի, Աշոտ իշխանի դուստր Կատայի, Սենեքերիմ Սյունյաց թագավորի որդի Կյուրիկեի (1099 թ.), Գևորգ Պահլավունի իշխանի (1101 թ.) մակագրված դամբարանները:

1046 թ. Սյունիքի Սմբատ Բ. թագավորի և նրա եղբայր, իշխանաց իշխան Գրիգորի (Գրիգոր Ա թագավոր) ջանքերով հիմնովին վերակառուցվեց Վահանավանքի մեծ տաճարի խմբակառույցը: Այս առթիվ մեծ տաճարի սյունասրահի հարավային պատին, երկու կոփածո սալաքարերի վրա փորագրվեց շինարարական բնույթի արժեքավոր մի արձանագրություն:

Այս արձանագրությամբ Սյունիքի տերերը հայտնում են, թե վերանորոգել են եկեղեցին, ժամատունն ու սյունասրահը, որ ունի 140 քառ մ մակերես:

---

[1] «Սովետական Հայաստան» ամսագիր, Երևան, 1982, Հ՝ 5, էջ 36:

Սյունասրահը նույնպես ծառայել է իբրև տոհմական դամբարան: Պեղումների ընթացքում այստեղ հայտնաբերվել են բազմաթիվ տապանաքարեր, որոնց մեջ ուշագրավ տեղ են գրավում Սյունյաց թագավոր Սմբատ Բ-ի (1051 թ.), Գրիգոր Ա-ի (1072 թ.), նրանց հայր, իշխանաց իշխան Աշոտի, Ջևանշեր իշխանի, թագուհիներ Սոփիի (1081 թ.), Դինարի, իշխանուհիներ Կատայի, Հրանուշի, Խաղբակ Որոգվացու (1062 թ.) և այլոց վիմագրերը:

Վահանավանքն իր ծաղկուն շրջանն ապրեց 11-րդ դարի երկրորդ կեսին: Սյունյաց թագուհի Շահանդուխտ Բ-ն և նրա քույրը՝ «Սրբասնունդ օրիորդ» Կատան զավակներ չունենալու պատճառով 1086 թվականին կառուցեցին սբ. Աստվածածին կոչվող կրկնահարկ դամբարան-եկեղեցին, որը թեև ծավալներով զբաղեցնում է ոչ մեծ տարածք, սակայն ճարտարապետական հորինվածքով ուրույն տեղ է գրավում զարգացած ավատատիրության դարաշրջանի հայկական ճարտարապետության մեջ: Կառուցման ավարտից հետո թագուհու խնդրանքով շինարարները փորագրել են կենսագրական տարրեր պարունակող գողտրիկ մի արձանագրություն:

Երկրորդ տարին է, ինչ պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերության միջոցներով այստեղ սկսվել են փոքր տաճարի վերականգնման աշխատանքները: Նախագծի հեղինակն է ճարտարապետ Յուլի Թամանյանը: Վերականգնումն իրականացնում է ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հուշարձանների պահպանման և վերականգնման վարչության գիտարտադրական արվեստանոցը:

Այժմ որոշում է ընդունվել՝ ամբողջապես վերականգնել Վահանավանքի պատմաճարտարապետական հուշարձանախումբը, որը 15-ամյա պեղումների միջոցով բացվել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ուսանողության և Ղափանի երիտասարդության ջանքերով:

Վահանավանքը քանիցս ենթարկվել է ավարի ու ավերի. 1103 թ. Մելիք-Շահի երբեմնի մատռվար Չորթմանը, սուլթանի մահվանից հետո դառնալով զորապետ, ներխուժեց Սյունիք: Նա բարբարոսաբար կործանեց Կապանն ու Վահանավանքի կառույցները, հրկիզեց դրանք: Առանձնապես ողբերգական էր 1386 թվականը, երբ լենկթեմուրյան զորքերը հասան մինչև Սյունյաց լեռնաշխարհը: Նրանք կործանեցին նաև Վահանավանքը, որն արդեն անշուք էր դարձել 14-րդ դարի սկզբներին և վերածվել էր ճգնավորների անշուք ապաստարանի:

1422 թ. Սյունիք ներխուժեցին թուրքմենական ակ-կոյունլու և կարա-կոյունլու ցեղախմբերը: Կարա-կոյունլու ցեղախմբի առաջնորդ Իսկանդարը հայ ավատներին, մասնավորապես Սյունյաց տերերին իր կողմը գրավելու նպատակով իրեն պիտակավորեց իբրև ոչ թե Թուրքման, այլ Թորգոմյան, այսինքն հայերից սերված իշխանազունի մակ-

դիրներով հասավ նկատելի հաջողությունների: Նա Սյունիքի խոշոր ֆեոդալներից մեկին՝ Օրբելյան տան շառավիղ Սմբատին, նրա զինական ուժն օգտագործելու նպատակով, նշանակեց պալատական խորհրդական և վեզիր: Նման քաղաքական պայմաններում սպասելի էր, որ Սյունիքի մշակութային օջախները զերծ կմնային ասպատակություններից… սակայն այդ սպասելիքը երևութական էր:

Ավելի քան հազար տարի է անցել այս կրթամշակութային օջախը կառուցելու ժամանակից: Ավելի քան հազար տարի հետո այս գեղատեսիլ անկյունում նորից հնչում են մեր շինարար վարպետների մուրճերի ձայները: Կանցնի ևս որոշ ժամանակ, և ամբողջապես կվերականգնվի մեր նախնիների փառավոր տաճարներից մեկը:

Հայոց դպրության պանծալի օջախը[1]

Իշխանաց իշխան Տարսայիճ Օրբելյանի տիրապետության շրջանում, 18-րդ դարի 80-ական թվականների սկզբին Տարոնից Վայոց ձոր տեղափոխված գիտնական վարդապետ Ներսես Մշեցու եռանդագին ջանքերի շնորհիվ բացվում է Գլաձորի կամ Աղբերց վանքի դպրոցը, որը մոտ ապագայում դառնալու էր համահայաստանյան ամենախոշոր և հեղինակավոր ուսումնագիտական կենտրոններից մեկը: Այստեղ ուսանելու են գալիս ոչ միայն բուն Հայաստանի, այլև Կիլիկիայի, Ղրիմի, Վրաստանի, Պարսկաստանի և այլ հայաբնակ վայրերի ուսումնատենչ պատանիներ:

1286 թ. փետրվարի 6-ին վախճանվում է Ներսես Մշեցին: Գլաձորի դպրոցի տնօրինությունն ու ռաբունապետի ամբիոնը վստահվում է նրա արժանավոր աշակերտ Եսայի Նշեցուն, որի օրոք անհամեմատ բարձրանում է այդ ուսումնական հաստատության անունն ու փառքը. Գլաձորի դպրոցը վերածվում է համալսարանի: Այստեղ դասավանդվում էին գիտության և մշակույթի տարբեր բնագավառների առաձին դասընթացներ, որոնք իրենց մակարդակով չէին զիջում 13-րդ դարի եվրոպական նույնատիպ բարձրագույն ուսումնական հաստատություններին:

Եսայի Նշեցին Գլաձորի համալսարանը՝ միջնադարյան Հայաստանի այդ «երկրորդ Աթենքը» ղեկավարեց մինչև իր կյանքի մայրամուտը: Նրա մեծ հեղինակությունը թույլ էր տալիս սաներին իրեն կոչելու «լուսավորիչ Հայկազյան սեռի», «տիեզերալույս վարդապետ», «մեծ ռաբունապետ» և այլ մակդիրներով: Մատենագրական աղբյուրներում Եսայի Նշեցու անունը հիշատակվում է նույնիսկ Սյունիքի գահերեց իշխաններից առաջ:

---

[1] «Ավանգարդ», Երևան, 1984, Հմր 124, էջ 3:

Շուրջ 60 տարիների գոյության ընթացքում այս հանրահռչակ ուսումնագիտական կենտրոնը հովանավորել և նպաստավորվել է Պռոշյան և Օրբելյան իշխանական տների նյութական միջոցներով:

Ներսես Մշեցու անունը հավերժացնելու նպատակով շարադրած մատյաններից մեկի հիշատակարանում Եսայի Նշեցին դրվատանքով է արտահայտվում Սյունյաց՝ Օրբելյանների, հատկապես Բուրթել մեծ իշխանի մասին: Այս հիշատակարանը մեծանուն ուսուցչապետը գրել է 1323թ. «Յաւուրս տէրութեան մեծ իշխանաց իշխանին տանս Սիւնեաց Բուրթելի՝ ամենաբարեպաշտի և քաջի և միշտ յաղթողի»: Եսայի Նշեցին հատուկ ընդգծում է այն խոշոր դերը, որ կատարել են առանձնապես Բուրթել Մեծն ու նրա հարազատները՝ Գլաձորի համալսարանը նյութապես ապահովելու գործում: Ի թիվս շատերի, գրում է ուսուցչապետը, «և մեք մեր աշակերտաւք բազում և անթիւ գութս բարեաց, գտաք ի սոցանէ (իմա՝ Օրբելյաններից), որ գաւտարութիւնս մեր ժողովեցին, և ընկալան մեզ ոչ իբրև զաւտար, այլ իբրև յինքեանց հարազատ ծնեալ մանկունս»: Այնուհետև Եսային ջերմագին խոսքերով է հիշատակում Սյունյաց մետրապոլիտ Հովհաննես Օրբելուն և Ստեփանոս-Տարսայիճ արքեպիսկոպոսին, որովհետև, գրում է նա «մեք բազում գութս և խնամս տեսաք և վայելեցաք ի սոցանէ...»: Անշուշտ, սխալ կլիներ կարծել, թե Սյունյաց իշխանների հոգածության շնորհիվ Գլաձորի համալսարանի դասախոսներն ու սաները գտնվում էին ընդհանուր առմամբ նյութական ապահով վիճակում: Ռաբունապետ Եսայի Նշեցին նույնիսկ խոստովանում էր, թե ինքն ապրել է «ի նեղ և անձուկ առթեվանիս»: Մեծատաղանդ ճարտարապետ-մանրանկարիչ Մոմիկը գանգատվում էր, թե ստեղծագործելու համար «տունս նսեմ է»: Առանձնապես վատթար է հեռավոր քաղաքներից ու գյուղերից ուսանելու եկած սաների նյութական կացությունը:

Մխիթար Երզնկացին 1314թ. գրած հանգավոր հիշատակարանում թեև նշում է, որ Օրբելյան տոհմի իշխանազուն եպիսկոպոսները, հատկապես աթոռակալ Ստեփանոս-Տարսայիճը, «օժանդակ» և «կարեկից» էին իրենց, ստեղծում էին «յամենայն բարիս», սակայն ուսանողն իր ուսանելու 7–8 տարիների ընթացքում ապրում էր մշտական կարիքի մեջ:

Եսայի Նշեցու ռաբունապետության շրջանում Գլաձորի սաների շնորհիվ Հայաստանում, ընդ որում Սյունյաց լեռնաշխարհի բազմաթիվ վայրերում, բուռն ծաղկում են ապրում թարգմանական և ինքնուրույն գրականությունը, երաժշտությունը, փիլիսոփայությունը, մանրանկարչությունը, ճարտարապետությունն ու քանդակագործությունը: Իր գոյության տարիների ընթացքում Գլաձորի համալսարանը տվել է 360–365 շրջանավարտներ, որոնցից առավել հռչակավորներն էին պատմիչ Ստեփանոս Օրբելյանը, բանաստեղծ Խաչատուր Կեչառեցին, Տիրատուրը, Կիրակոս Երզնկացին, Մխիթար Սասնեցին, Մոմիկ վարդապե-

տը և ուրիշներ: Համազգային ճանաչում ստացան մեծանուն Հովհան Որոտնեցին և Գրիգոր Տաթևեացին՝ Տաթևի համալսարանի հիմնադիրները: Նկատի ունենալով այն իրողությունը, որ 13-րդ դարի երկրորդ կեսին և 14-րդ դարի առաջին տասնամյակներին անհամեմատ բարձր աստիճանի հասան ճարտարապետական և քանդակագործական արվեստները, կարելի է ենթադրել, որ Գլաձորի համալսարանում դասավանդվել է նաև ճարտարապետություն: Այս առարկան կարող էին ուսուցանել Օրբելյանների պալատական ճարտարապետներ Սիրանեսը և նրա տաղանդավոր աշակերտ Մոմիկը, որոնք փառքով պսակեցին հայ ճարտարապետության Սյունիքի դպրոցի անունը:

Բազմաբնույթ աշխատություններ են հեղինակում Գլաձորի համալսարանի շրջանավարտներ Տիրատուր և Պողոս Կիլիկեցիները, Պարոնլույսը, Ջուատը, Դավիթ Գետկեցին, Ներսես վարդապետ Սասնեցին, Դավիթ Հաղբատեցին և շատ շատերը:

Անցել է 700 տարի… սերունդները խորին ակնածանքով և հպարտությամբ են հիշում Գլաձորի համալսարանի հայրենանվեր ուսուցիչներին և նրանց մեծատաղանդ սաներին, որոնք ալեծուփ երկրի դժնդակ պայմաններում միշտ վառ պահեցին Մեծն Մաշտոցի ավանդները և հավերժությանը ի պահ տվեցին մեր խորախորհուրդ մատյանները, որոնցով կարող է հպարտանալ ամեն մի քաղաքակիրթ ժողովուրդ:

Ваанаванк[1]

Ваанаванк – памятник архитектуры средневековой Армении. Он расположен недолеко от города Кафан на правом кругом берегу горной реки Вохчи.

В наши время туристы побывавшие здесь, могут познакомиться с бережно роставрируемим комплексом монастырскиих строеный, писменные упоминания которые относятся к X веку, фрагментами водопровода, для которого исползовались тогда гончарные трубы, сохранились прекрасные образцы резьбы по камню – знаменитые хачкары.

Двадцать два года археологическими, а теперь и реставрационными работами руководит доктор исторических наук Григор Месропович Григорян, сотрудник института археологии и энтографии Академии наук Армянской ССР. Все это время ему помогали добровольные помощники, студенты института и просто люди, увлеченные историей родного края.

[1] «Советская культура» газета, 1988, ном. 125, ст.3.

Վահանավանք[1]

Կապան քաղաքից հինգ կիլոմետր հեռավորությամբ դեպի հարավ-արևմուտք, Ողջի գետի աջ ափին վեր խոյացող Տիգրանասարի լանջերին են փռված միջնադարյան Հայաստանի խոշոր պատմաճարտարապետական հուշարձանախմբերից մեկի՝ Վահանավանքի ավերակները:

Մատենագրական աղբյուրների վկայությամբ Վահանավանքը հիմնադրվել է 10-րդ դարի սկզբին, Սյունյաց գահակալ իշխան Ձագիկի կրտսեր որդու՝ Վահանի ջանքերով: Ավելի քան հարյուր վարդապետ ունեցող այս մեծահարուստ վանքին կից բացվել է հոգևոր դպրոց, ուր ուսանել են Սյունյաց Բաղք և այլ գավառների պատանիները: 10-րդ դարի 40-ական թվականներին վանահայր է դառնում Վահանավանքի սան Վահան Բ Ձևանշերյանը, որը հետագայում ընտրվում է Սյունյաց նահանգի հոգևոր առաջնորդ, իսկ 60-ական թվականներին՝ հայոց կաթողիկոս: Վանահայրության տարիներին Վահան Բ-ն կատարում է մի շարք ընդարձակ կառուցումներ, որոնք պահպանվել են ավերակների տեսքով:

Վահանավանքն իր ծաղկման շրջանն է ապրում Սյունյաց թագավորության շրջանում՝ Սմբատ Բ-ի (1040–1051), Գրիգոր Ա-ի (1051–1052), Սենեքերիմ Ա-ի (մահ. 1094 թ.) և Շահանդուխտ թագուհու (մահ. 1116 թ.) գահակալության տարիներին: Սակայն սելջուկ-թուրքերի (1103 թ.), մոնղոլների (1386–1387 թթ.) և այլ հրոսակների անընդհատ կրկնվող ասպատակությունների հետևանքով Վահանավանքն աստիճանաբար կորցնում է իր նախկին շուքը և 14-րդ դարի մայրամուտին վերածվում է ավերակների կույտի: Դարերի մոռացության գրկից Վահանավանքն արթնացավ 1966 թ., երբ պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերության նախաձեռնությամբ և միջոցներով այստեղ սկսեցին հնագիտական պեղումներ: Պեղումների շնորհիվ թանձր հողաշերտերի և անտառային բուսականության տակից ի հայտ եկան հետևյալ կառույցները:

Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: 911 թ. կառուցել է Վահան Նախաշինողը: Խաչաձև հատակագծով, խաչագմբեթ այս տաճարը արևելյան խորանի աջ և ձախ կողմերին, ինչպես նաև արևմտյան որմնանյութերին կից, ունի մեկական ավանդատներ: Հսկայական ժայռաբեկորներից կերտված բազմանիստ ատամնավոր քիվերի վրա վեր է խոյացել վեղարավոր թմբուկը: Շենքը նախապես կառուցված է եղել չեչաքարից, որի մնացորդները պահպանվել են հարավարևելյան պատի վրա: Եկեղեցին ունեցել է երկու մուտք. արևմտյան՝գավթից և հարավային՝ սյու-

[1] «Տաթև» ամսագիր, Երևան, 1998, Հմր 2(4), էջ 13–14:

նասրահից: Գավիթը 10-րդ դարի առաջին կեսին կառուցել է Վահան Բ Ձևանշերյանը: Ուղղանկյուն-քառանկյուն հատակագծով այս շինությունն աչքի է ընկնում բուսական և երկրաչափական զարդամոտիվներ ունեցող քիվերով, որոնք եզերում են ներսի հյուսիսային և հարավային պատերը: Գավթի ծածկի թաղն իր վրա կրել է, առանց որևէ կապակցող նյութի ամրացված, պայտաձև երեք հզոր կամարները, որոնք հենված են գեղաքանդակ, իրար չկրկնող որմնախոյակների վրա: Գավիթը կործանվել է երկրաշարժից փլուզված կենտրոնական միջին կամարի խախտման պատճառով: Մուտքը հարավային սյունասրահից է:

Այս կառույցը ծառայել է նաև իբրև դամբարանատուն: Պեղումների ընթացքում այստեղ հայտնաբերվել են Վահան Նախաշինողի (X դ.), իշխանուհի Խուշուշի (X դ.), թագավորազն Կյուրիկեի (XI դ.), զորավար Գևորգ Պահլավունու (1101 թ.) և այլոց տապանաքարերը:

Սյունասրահ: Ճարտարապետական յուրահատուկ մտահղացմամբ կերտված այս ընդարձակ շինությունը՝ 140 քմ մակերեսով, կառուցված է Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու և կամարակապ գավթի երկայնքով: Հայտնաբերված ճարտարապետական մանրամասներից կարելի է կռահել, որ սյունասրահի ծածկի հանդիպակաց կամարները հենված են եղել 14 որմնասյուների (հյուսիսային և հարավային կողմերից՝ 7-ական) վրա: Հարավային երկու մուտքերից մեկը տանում է եկեղեցի, իսկ մյուսը՝ դեպի գավիթ: Շինաքարը նույն կարմրավուն կրաքարն է, որով կառուցված՝ ամբողջ հուշարձանախումբը: Սյունասրահը նույնպես ծառայել է իբրև տոհմական դամբարանատուն: Այստեղ են թաղված թագավորներ Սմբատ Բ-ն, Գրիգոր Ա-ն, թագուհիներ Սոփիան և Դինարը, իշխաններ Աշոտը, Ձևանշերը, Խաղբակը և ուրիշներ: Այստեղ հայտնաբերվել է 1046 թ. շինարարական արձանագրությունը:

Կրկնահարկ դամբարան-եկեղեցին (սբ. Աստվածածին): 1086 թ. կառուցել է տվել Սյունյաց թագուհի Շահանդուխտ Բ-ն: Համեմատաբար փոքր այս գողտրիկ տաճարը արևմուտքից հենված է լեռնազանգվածի բազկին, իսկ արևելյան կողմից՝ ճեղքված քարերով շարված է պարսպապատի կամարամուտքի վրա: Արևելյան խորանն ունեցել է փոքրիկ բեմ, որի աջ և ձախ կողմերում կան պատուհան-որմնախորշեր: Եկեղեցու սագաշեն թաղը ծածկված է եղել կարմրավուն կղմինդրով (ինչպես Վահանավանքի բոլոր կառույցները): Հարավից, հյուսիսից և արևելքից այն գոտևորված է եղել սյունասրահով (պատշգամբով), որի մասին հիշատակում է XIII դարի պատմիչ Ստ. Օրբելյանը: Տաճարի վերնահարկից սքանչելի տեսարան է բացվում դեպի Վահանաձոր և մեծ տաճար: Սբ. Աստվածածին եկեղեցու գավթում է հայտնաբերվել Ստեփանոս կաթողիկոսի XI դարի արժեքավոր արձանագրությունը:

Սեղանատուն: Այս կառույցն ամբողջապես եղել է փլատակների տակ և բացվել է պեղումների միջոցով: Ուշադրություն են գրավում քա-

ռակող կամարաայուները, որոնց ձևավոր քիվերը ներկված են եղել կարմիր: Դրանք տեղակայված են կառույցի արևելյան կողմում և հուշում են բաց սրահ լինելու փաստը: Սենյակի հատակն ամբողջապես պատված է սալաքարերով: Հայտնաբերված ճարտարապետական մանրամասները՝ խոյակներ, կամարներ, որմնասյուներ, երեսպատման քարեր և այլ, հիմք են տալիս ենթադրելու, որ այս շենքը նույնպես եղել է կրկնահարկ: Այստեղ հայտնաբերվել են XI դարի ընդարձակ արձանագրության բեկորներ, ինչպես նաև հոգևոր գործիչների մի շարք տապանաքարեր: Հուշարձանախմբի համալիրում պատմահնագիտական արժեք են ներկայացնում հարավարևելյան բնակատեղի ավերակները, որոնք գտնվում են անտառապատ սարալանջին: Այստեղ մինչև օրս բխում է X դարում կառուցված՝ կավե թրծած խողովակներով սառնորակ աղբյուր: Վահանավանքի տարածքում կանգնեցված են բազմաթիվ խաչքարեր, որոնք ունեն պատմամշակութային արժեք:

1978 թ. սկսվել են հուշարձանախմբի վերականգնման աշխատանքները[1]:

Վահանավանքի խաչքարերի զարդաքանդակները[2]

Վահանավանքում հայտնաբերված խաչքարերից առավել նշանավորները երկուսն են՝ Շահանդուխտ թագուհու մոր՝ Սոփիի հիշատակին 1081 թ. կանգնեցրած խաչքարը և 1046 թ. կերտված եզակի կոթողը՝ արֆյաձև խաչը, որը ժամանակին ամրացված է եղել սյունասրահից դեպի եկեղեցի տանող մուտքի ճակատալ քարին (ինչպես նշել ենք, կոթողն այժմ գտնվում է Կապանի երկրագիտական թանգարանում): Դեկորատիվ արվեստի տեսակետից առանձնանում է հատկապես Շահանդուխտի խաչքարը, որն ամբողջապես պատված է հյուսկեն զարդանախշերով, հորիզոնական խաչթևերից վեր՝ աջ և ձախ կողմերից նռան քանդակներ են. ստորև՝ հավերժության նշանն է երկրաչափական զույգ գծազարդերով, որոնց միջև քանդակված են ուռուցիկ գնդիկներ, իսկ հյուսկեն զարդանախշերի վրա կան շաղափով կատարված ավելի քան վեց տասնյակ փոսիկներ: Ստորին խաչթևը եզերող բուսական պատկերաքանդակի վերնամասի կենտրոնում կանգնեցման թվականն է՝: ՇԼ: (1081): Խաչքարի եզրերին շրջանաձև փորագրված է Սոփիի և նրա երեք զավակների՝ Շահանդուխտ Սյունյաց թագուհու, նրա քույր օրիորդ Կա-

---

[1] Հուշարձանի վերականգնման, պեղումների ընթացքի մասին տես Գր. Գրիգորյան, «Վահանավանք», Երևան, 2007: «Վահանավանքի վերածնունդը», Երևան, 2009:

[2] «Սյունյաց երկիր» թերթ, Կապան, 2012, Հմր 30, էջ 98:

տայի և Սենեքերիմ թագավորի անունների հիշատակմամբ արձանագրություն:

Դեկորատիվ արվեստն առավել ցուցադրական է հատկապես սպիտակ կրաքարե խաչքարերի բեկորների վրա: Այստեղ տեսնում ենք հիասքանչ վարդյակներ՝ բացված առէջքներով, երկրաչափական հյուսածո գծազարդեր, որոնք հիշեցնում են մեծ տաճարի գավթի քիվերի զարդաքանդակները: Առանձնապես տպավորիչ են նրբագեղ տերևների հասկի ցողունների փնջերի, խաղողի ողկույզների, ինչպես նաև նռան նախշաքանդակները: Դրանք բոլորը հմտորեն և համբերությամբ կատարված են բարձր ճաշակի տեր քարգործ վարպետների ձեռքով:

Սյունյաց պատմագիրը՝ Ստեփանոս Օրբելյան[1]

Ստեփանոս Օրբելյանը միջնադարի ականավոր քաղաքական և կրոնական գործիչներից մեկն է: Որպես ստեղծագործող՝ նա իրավամբ դասվում է 12–14-րդ դարերի մեր ամենանշանավոր պատմիչների շարքը:

Ստ. Օրբելյանի ծննդյան ստույգ թվականը դեռևս պարզված չէ. Աշ. Աբրահամյանը համարում է, որ նա ծնվել է «1250–1260-ական թվերին»: Թ. Հակոբյանն ու Մելիք-Բախշյանը, հիմք ունենալով այն իրողությունը, որ նա 1280 թ. ձեռնադրվել է քահանա, ենթադրում են, թե «այդ ժամանակ Ստեփանոսը առնվազն պետք է եղած լիներ 25–30 տարեկան, ուրեմն նրա ծննդյան թվականը մոտավորապես ընկնում է 1250-ական թվականներին»:

Կենսագրական հակիրճ տեղեկություններ Ստ. Օրբելյանի մասին կան «Պատմութիւն տանն Սիսական» աշխատության Հ և ՀԲ գլուխներում: Հ գլխից իմացվում է, որ նա ծնվել է «ի մօրէ Սիսական. և ի հօրէ Օրբելեան, որ Տարսահճ կոչի»: Նրա մայրը Արուզ խաթունն էր, հավատացյալ մի կին, որին ջերմ սիրով և ակնածանքով է ներայացնում որդին: Մանկուց որդեգրվելով իր հորեղբայր «արքայաշուք իշխան» Սմբատի կողմից՝ Ստեփանոսը Սյունյաց եպիսկոպոսարանի ականավոր հայրերի հսկողության տակ ստանում է կանոնավոր կրթություն: Նրան գրաճանաչ է դարձնում Տաթևի առաջնորդ Հայրապետ եպիսկոպոսը, որը նրա հետ պարապում էր նաև երաժշտության դասեր:

Օրբելյան ընտանիքի ցանկությամբ նրան տեղափոխում են Նորավանքի եպիսկոպոսարան, որտեղ դառնում է դպիր, այնուհետև ձեռնադրվում սարկավագ: Ապա նա շարունակում է ուսումը Վայոց ձորում

---

[1] Սյունյաց երկիր, 2011, Հ^{փ} 10, էջ 45:

«առ ոտս աստուածարեալ արանց», որոնցից երախտագիտությամբ հիշում է Գլաձորի ուսումնագիտական կենտրոնի հիմնադիր Ներսես Մշեցուն: Ահա այս ուսուցչապետի համաձայնությամբ, դեռ պատանի Ստեփանոսը ձեռնադրվում է վարդապետ:

Սակայն նրա հոր՝ Տարսայիճ մեծ իշխանի նպատակն էր Օրբելյան տոհմի մենաշնորհը դարձնել նահանգի ոչ միայն քաղաքական, այլև հոգևոր իշխանությունը: Սյունիքի ազնվական դասը և հոգևոր վերնախավը կամա թե ակամա պետք է համաձայնեին իրենց գահերեցի ցանկությանը. մանավանդ երբ ազդեցիկ Պռոշյան տոհմն այս հարցում որևէ առարկություն չուներ, թեկուզև ստեղծված խնամիական սերտ կապերի պատճառով:

1285 թ. ավատականության ներկայացուցիչների ժողովը Սյունյաց նահանգի մետրոպոլիտի և արքեպիսկոպոսի թեկնածու է առաջադրում Նորավանքի վարդապետ Ստեփանոս Օրբելյանին: Վերջինս ժողովականների «միաբան թղթովք և ընծայիւք» ուղևորվում է Կիլիկիա՝ Հռոմկլայում նստող հայոց կաթողիկոսից ձեռնադրվելու: Սակայն Սիսում նա տեղեկանում է, որ անսպասելիորեն վախճանվել է Հակոբ Ա կաթողիկոսը (1286 թ.): Ստեփանոսը ստիպված սպասում է նոր հայրապետի ընտրություններին: Երեք ամիս հետո կաթողիկոսական գահին բազմած Կոստանդին Բ-ն (1286–1289) նրան օծում է եպիսկոպոս և Սյունյաց մետրոպոլիտ: Կիլիկիայում եղած ժամանակամիջոցում Ստ. Օրբելյանը բնակվում էր Ադանայի հայոց արքունական պալատում, որտեղ հանդիպումներ է ունենում Լևոն Գ թագավորի (1270–1289) և հայ ազնվականության ներկայացուցիչների հետ. լինում է կրթամշակութային կենտրոններում, խորամուխ լինում կաթողիկոսարանի հարուստ գրապահոցների մեջ, ուսումնասիրում Կիլիկիայի հայկական թագավորության հասարակական-քաղաքական հարաբերությունները, ծանոթանում ժողովրդի սոցիալական վիճակին: Նա շուտով գրավում է արքունիքի ազնվականության ուշադրությունը: Թագավորը նրան նույնիսկ առաջարկում է ընդմիշտ մնալ Կիլիկիայում և բազմել կաթողիկոսական գահին: 1287 թ. գարնանը Ստ. Օրբելյանը վերադառնում է հայրենիք: Նորընծա մետրոպոլիտին ցնծությամբ դիմավորում են Սյունիքի իշխանները. բարձրաստիճան հոգևորականության ներկայացուցիչները, Գլաձորի համալսարանի դասախոսները և ուսանողները: Նա կաթողիկոսի շրջաբերական նամակով ներկայանում է Արղուն խանին նոր պաշտոնում հաստատվելու, ինչպես նաև Սյունյաց եպիսկոպոսական աթոռի կալվածատիրական հարցերը կարգավորելու համար: Արղունը սիրով է ընդունում նրան և արձակում է հրովարտակ, որով նրան դասում է Սյունյաց տերերի շարքը «կրկին իշխանութեամբ հոգևոր և մարմնաւոր»: Այժմ հարկավոր էր իրականացնել իր վաղեմի երազանքը՝ միավորել նահանգի տարանջատված հոգևոր թեմերը մեկ գավազանի տակ: Դա

բավականին դժվար խնդիր էր, որի հնարավոր լուծումը անկասկած, շոշափելու էր առաջին հերթին Տաթևի և Նորավանքի շահերը: Ի սկզբանե գերիշխող դիրք գրաված Տաթևի վանականները հեշտությամբ չզիջեցին իրենց դիրքերը և համառ դիմադրություն էին ցույց տալիս:

Երկու թեմերի վիճելի հարցերը լուծվելու էին առանց դրանցից որևէ մեկին նյութական կամ բարոյական վնաս հասցնելու:

Եվ այսպես, Սյունյաց նահանգի հոգևորականության վարչատնտեսական գերագույն կառավարիչը ձեռնարկված միջոցառումների շնորհիվ այսուհետ դառնում էր մետրոպոլիտը, առանց որի համաձայնության չէին լուծվելու հոգևոր դասին վերաբերող կարևորագույն հարցերը:

1289 թ. Ստ. Օրբելյանը հրավիրվում է Կիլիկիա՝ նոր հայրապետական ընտրություններին մասնակցելու: Սակայն նա մերժում է Հեթում թագավորի նվիրակ Ստեփանոս վարդապետ Սկևռացուն՝ Գլաձորի համալսարանի նախկին սանին, որովհետև, Սյունյաց մետրոպոլիտի կարծիքով, Կիլիկիայի Հայոց թագավորը քմահաճորեն էր գահընկեց արել Կոստանդին Բ կաթողիկոսին:

Ստ. Օրբելյանի մետրոպոլիտության տարիներին անհամեմատ ամրապնդվում է Սյունյաց միացյալ եպիսկոպոսական աթոռի տնտեսական հզորությունը: Նրա եռանդուն ջանքերի շնորհիվ նորանոր կալվածքներ են ձեռք բերում Նորավանքն ու Տաթևը: Իրենց շնորհաբաշխությամբ Օրբելյան և Պռոշյան ընտանիքներից հետ չեն մնում Կապանի թագավորության կործանումից հետո Վայոց ձորում հաստատված Մահևանյան տոհմի ժառանգորդները: Նորավանքը տարբեր ուղիներով ստանում է մեծ քանակությամբ այգիներ, ջրաղացներ, ձիթհան-սրանոցներ, խանութներ, մանր և խոշոր եղջերավոր անասուններ, թանկարժեք սրբազան մասունքներ և կանխիկ դրամ:

16 տարի անընդմեջ վարելով Սյունյաց եպիսկոպոսական աթոռը՝ Ստ. Օրբելյանը վախճանվեց 1303 թ. և թաղվեց Ամաղուի Նորավանքի Օրբելյան իշխանների տոհմական գերեզմանոցում:

Ստ. Օրբելյանի մասին Սյունյաց նահանգի տարածքում և մատենագրական աղբյուրներում պահպանվել են բազմաթիվ հիշատակագրություններ, որոնցում գրիչները փառաբանում են իրենց մեծահամբավ մտավորականին և հոգևոր առաջնորդին:

Ստ. Օրբելյանը թողել է գրական հարուստ ժառանգություն, որից պահպանվել ու մեզ է հասել յոթ աշխատություն, օրինակել է տվել նաև մի շարք ձեռագիր մատյաններ:

Ստ. Օրբելյանի ստեղծագործական կյանքում առանձնահատուկ տեղ է գրավում նրա «Հիշատակած մատեանը», որ ընթերցողին հայտնի է «Պատմութիւն տանն Սիսական» կամ «Պատմութիւն նահանգին Սիսական» խորագրով: Այս երկը Սյունիքի միջնադարյան ժամանակաշրջանի

սոցիալ-քաղաքական կյանքի համապարփակ գրական մի հուշարձան է, զարգացած ֆեոդալիզմի իրականությունը հարազատորեն ներկայացնող անզուգական գրական կոթողներից մեկը: Աշխատությունը գրավել է հայագետների ուշադրությունը և ունեցել է մի շարք հրատարակություններ: Առաջին անգամ հրատարակվել է 1859 թ. Փարիզում, Կարապետ Շահնազարյանի ջանքերով, երեք տարի հետո՝ 1861 թ., հրատարակեց Մկրտիչ Էմինը Մոսկվայում երկու գրչագիր օրինակների փարիզյան տպագրության բաղդատությամբ: Գրքի վերջում զետեղված է հարկացուցակը:

1299 թ. Ստեփանոս մետրոպոլիտն ավարտում է «Պատմութիւն տանն Սիսական» աշխատությունը. Գլաձորի, Հերմոնավանքի և այլ ուսումնագիտական կենտրոնների գրիչներն ընդօրինակում և տարածում են այդ մեծարժեք երկը, որը Սյունյաց լեռնաշխարհի պատմության առաջին ծավալուն ուսումնասիրությունն էր:

Հետևելով Մ. Խորենացուն՝ Ստ. Օրբելյանը Սյունյաց պատմությունն սկսում է ավանդական Սիսակ նահապետից, հաջորդաբար ներկայացնում նահանգի առավել աչքի ընկած պատմական դեմքերին և նրանց հետ կապված կարևոր իրադարձությունները՝ ընդհուպ մինչև Օրբելյան տոհմի հանդես գալը: «Պատմության» 2-րդ գլխում թվարկում է Սյունյաց 12 գավառները՝ աշխատելով ավանդական զրույցների հիման վրա ստուգաբանել դրանց անվանումների վարկածները, նշում լեռնաշխարհի առավել կարևոր պաշտպանական կառույցները:

Ստ. Օրբելյանն ապա անդրադառնում է Սյունիքում և Աղվանքում Գրիգոր Լուսավորչի թոռան Գրիգորիսի կողմից քրիստոնեությունը տարածելու, նրա նահատակվելու հանգամանքներին՝ ընդգծելով Սյունյաց եպիսկոպոսության, մասնավորապես կրթական գործում կատարած խոշոր դերը: Հեղինակը, ինչպես սպասելի էր, շռայլ գովեստով է ներկայացնում Սյունյաց նախարարական տան և գահերեցության շրջանի խոշոր իշխանների գործունեությունը:

Որպես բարձրաստիճան հոգևորական՝ Ստ. Օրբելյանը չէր կարող անտեսել նահանգի առավել հեղինակավոր կրոնական գործիչների (Գրիգորիս, Երիցակ, Գյուտ, Ստեփանոս Իմաստասեր, Սողոմոն, Հովհաննես և այլք) վարքագրությունը:

Ստ. Օրբելյանը գրում է արաբական արշավանքների և խալիֆայության տիրապետության օրոք երկրի քաղաքական և տնտեսական ծանր կացության մասին: Առանձնապես մեծ արժեք են ներկայացնում «Պատմության» այն հատվածները, որտեղ հանգամանորեն լուսաբանվում են Սյունյաց նախարարական ընտանիքների քայքայման և գահերեցության հաստատման սոցիալ-քաղաքական պայմանները, ներֆեոդալական հարաբերությունների սրման դրդապատճառները, տիրույթների սեփականացման համար ծագած խռովություններն ու ռազմական ընդհարումները:

Ստ. Օրբելյանը ներկայացնում է Սյունիքի վանական միաբանությունների կալվածատիրական գործարքները, ճոխ նվիրատվությունները՝ թագավորներից, գահերեց և գահակալ իշխաններից, հարուստ մեծատուններից կամ առանձին հավատացյալներից:

«Պատմության» մեջ զետեղված մի քանի տասնյակ կալվածագրերն ու սիգել-հրովարտակներն ապացուցում են այն իրողությունը, որ Սյունյաց հոգևոր վիճակը զարգացած ավատատիրության դարաշրջանում սեփական հարստությամբ կարող է մրցել ոչ միայն կաթողիկոսարանի, այլև աշխարհիկ ամենախոշոր կալվածատիրոջ հետ: Պատմիչը հիացմունքով է նկարագրում Տաթևի վանքի մայր տաճարի՝ Պողոս-Պետրոս եկեղեցու օծման արարողությունների ժամանակ հայոց Սմբատ Ա թագավորի, Աշոտ Սյունյաց գահերեցի, Վասպուրականի իշխանաց իշխան Գագիկ Արծրունու և այլոց առատաձեռն նվիրատվությունները:

Որպես տիրապետող դասի ներկայացուցիչ, Սյունյաց իշխանազուն և հոգևոր առաջնորդ՝ Ստ. Օրբելյանը ջանում է արդարացնել Սյունիքի Կապանի թագավորության ստեղծումը, որը, նրա կարծիքով, երևան է եկել պատմական անհրաժեշտությամբ՝ ժամանակի թելադրանքով:

Ստ. Օրբելյանի նկարագրությամբ Սյունյաց թագավորության մայրաքաղաք Կապանն ունեցել է առանձին փողոցներ ու թաղամասեր, որոնցից հիշատակվում են Խնձորի գլուխն ու Ձիտաթաղը: Պատմիչը կսկիծով է ներկայացնում Կապանի կործանումը 1103 թ. Մելիք-Շահի երբեմնի մատռվակ Չորթմանի հրոսակախմբերի կողմից, արձանագրում Սյունյաց իշխանական տոհմերի արտագաղթն ինչպես Հայաստանի մյուս գավառներ, այնպես էլ դեպի օտար երկրներ: Հոգևոր առաջնորդը նշում է նաև իր կրած տառապանքները նահանգի վանքերն ու եկեղեցիները մոնղոլական ասպատակություններից զերծ պահելու և ապահարկ վիճակը պահպանելու գործում, մանավանդ Տարսայիճ իշխանի մահվանից հետո, երբ ստիպված է եղել հաճախ, նույնիսկ կաշառքի միջոցով ապահովագրել կրթամշակութային հաստատությունների ունեցվածքը: Ստ. Օրբելյանը օգտվել է ինչպես հայկական, այնպես էլ վրացական աղբյուրներից:

«Պատմության» վերջին էջերում նա զետեղել է կաթողիկոսարանի և Սյունյաց եպիսկոպոսների գավազանացանկերը՝ ըստ հաջորդականության նշելով նրանց գահակալության տարիները: Պատմական մեծ արժեք է ներկայացնում այս աշխատությանը կցված հարկացուցակը, որի թվական միավորների առեղծվածն առ այսօր գտնվում է միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական պրոբլեմներով զբաղվող մասնագետների ուշադրության կենտրոնում:

Որտե՞ղ է թաղված Գրիգոր Նարեկացին[1]

10-րդ դարում նորից սկսվում են դավանաբանական վեճերը հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականության միջև՝ մի կողմից պահպանողական հայրերի՝ ի դեմս հայոց կաթողիկոսի և նրա կողակիցների, մյուս կողմից՝ նահանգական հոգևոր առաջնորդների:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում միասնական ճակատ էին կազմել Սյունիքի, Վասպուրականի և Աղվանքի հոգևոր այրերը՝ հանձինս Վահան եպիսկոպոսի՝ Սյունյաց գահակալ Զագիկի թոռան, Ձևանշեր իշխանի որդու, Վասպուրականի Անձևացյաց եպիսկոպոս Խոսրովի՝ Գրիգոր Նարեկացու հոր, ով իբրև հերձվածող բանադրված էր Անանիա Մոկացի կաթողիկոսի կողմից և Աղվանից կաթողիկոսներ Սահակի, ապա նաև Գագիկի մասնակցությամբ, ովքեր ձգտում էին բարեփոխումներ կատարել հայ առաքելական եկեղեցու իրավականոնական համակարգում: Նրանց դեմ անհաշտ պայքար էր մղում ժամանակի խորաթափանց կաթողիկոս Անանիա Մոկացին:

Ահա այս խառնակ ժամանակաշրջանն էր, երբ հանդես եկավ մեր հանճարեղ բանաստեղծ Գրիգոր Նարեկացին (950–1003), ում սկսեցին հալածանքի ենթարկել նրա մղած «հանդունգն և նորաշունչ» գաղափարների համար:

«Զափազանց բանագետ» և «Աստուածիմաստ բանահյուս» պոետի գրական ժառանգության մասին գրվել են բազմաթիվ աշխատություններ:

Սույն հոդվածի հիմնական աղբյուրը եղել է 1839 թ. Պոլսո Օրթագյուղի Արաբյան եղբայրների տպարանում լույս տեսած «Յիշատակ վարուց հոգեկիր հոետորի սրբոյն Գրիգոր Նարեկ աղօթից» կամ «Մատեան ողբերգութեան» գրքի հակիրճ հիշատակարանը: Այստեղ ի թիվս պատմական մի շարք գործիչների (Վասիլ, Կոստանդին կայսրեր, Սենեքերիմ Արծրունի թագավոր), նաև նշվում է, որ Գրիգոր Նարեկացին իր «Մատյան»-ը շարադրել է «ի հայրապետութեան տեառն Վահանայ կաթողիկոսի», հայոց: ՆԼԲ (983) թվականին:

Այս փաստը մտորելու տեղիք է տալիս: Ինչպես հայտնի է, կաթողիկոս Վահան Ա Սյունեցին վախճանվել է 972 թ., բայց ոչ 983 թ., ինչպես գրված է Մատյանի մի խումբ հիշատակարաններում:

Մեծանուն Սյունեցին հողին է հանձնվել Վասպուրականի Տոսպ գավառի Զորո վանքում: Նույն ճակատագիրն է ունեցել Վահան Ձևանշերյանին նախորդած Հակոբ Ա Սյունյաց շինարար եպիսկոպոսը, ում ԱնանիաՄոկացին բնութագրում է նվաստացուցիչ պիտակներով՝ անվանելով «սադրիչ», «խաբող», «ապերախտ», «չարաբարո» և այլ բառե-

[1] Սյունյաց երկիր, 2014, Հմր 13, էջ 6:

ռով: Սակայն հետևենք Վահանին: Պատմական աղբյուրները վկայում են, որ Վահան Սյունեցու կաթողիկոսությունն ընդհատվեց նրանով, որ Անիի եկեղեցական ժողովը, որին Վահանը չմասնակցեց, Աշոտ Ողորմած թագավորի համաձայնությամբ որոշեց գահընկեց անել նրան՝ մեղադրելով քաղկեդոնականությանը հարելու մեջ:

Ժամանակագիր Դավիթ Բաղիշեցու հիշատակարանում կարդում ենք. «Ետ Անանիայի եկաց հայրապետ Տէր Վահան ի Բաղայ (իմա՝ Բաղաց) ամ մի որդի Ջուանշիրի իշխանին Բաղաց: Նա դաշնադիր եղև ընդ վրաց քաղկեդոնականաց և իմացեալ վարդապետք ժամանակին և հալածեցին զնա և նա փախստեամբ եկեալ ի Վասպուրական»:

Միջնադարյան պատմիչներից շատերը դրվատանքի ջերմ խոսքերով են արտահայտվում կաթողիկոս Վահան Ա Սյունեցու մասին: «Յայսմաւուրքում» նշվում է. «Վահան էր ուղղափառ և իմաստուն հայրապետ Հայոց ի Բաղաց գաւառէ, զոր փախստական արարին վասն կարծեաց դաւանութեան ժողովոյն Քաղկեդոնի և վասն պատկերս մուծելոյ յեկեղեցիս և զսեղանն սուրբ: Իսկ նորայ երթեալ տիրեաց ի կողմանս Վասպուրականին և յայն սակս կաթողիկոսութիւն Հայոց բաժանեցաւ յերկուս: Եւ էր յայն ժամ Վահանայ համախոհ հրեշտակն ի մարմնի սուրբ Գրիգոր Նարեկացին»:

Եթե «Մատյան»-ը գրվել է Վահան Սյունեցու հայրապետության շրջանում, ապա Գրիգոր Նարեկացին եղել է ընդամենը 20–22 տարեկան:

Հանճարեղ բանաստեղծը մահացել է հայոց: ԳՃԾԲ: (352+551) 903 թվականին և թաղվել է Նարեկա վանքում, իսկ երբ Վասպուրականի Սենեքերիմ թագավորը 1021թ. երկիրը փոխանակեց Բյուզանդիայի հետ և տեղափոխվեց Սեբաստիա, ահա այդ ժամանակ «միանձանցն Նարեկայ դիմեալ մերձի ի կողմանս քաղաքին Ակնայ և Տիւրիկեայ (Տևրիկ) շինեցին վանս յանուն Նարեկայ, ուր բերեալ հանգուցին զպատուական մարմինն, թեև այժմ է աւերակ և կոչի Ուխտ Արակայ»:

Այժմ համառոտակի անդրադառնանք Ակն և Տիւրիկե քաղաքների տեղադրության խնդրին: Ակնը գտնվում է Փոքր և Մեծ Հայքերի միջակա սահմաններում: Հիմնադրել են Սեբաստիա տեղափոխված Արծրունիները: Թուրքերը կոչում էին Էգին ապա վերանվանել են Քեմալիե: Գտնվում է Արևմտյան Եփրատի աջ ափին՝ Երզնկայից Խարբերդ տանող ճանապարհին, իսկ անցյալում եղել է Բաբերդի վիլայեթի կազմում: Ակն քաղաքից էին մեր ականավոր մտավորականներ Արփիար Արփիարյանը, Գրիգոր Զոհրապը, Գարեգին Սրվանձտյանը, Միսակ Մեծարենցը, Սիամանթոն և շատ ուրիշներ:

Բագրատունյաց թագավորության անկումից հետո Ակն են տեղափոխվել բազմաթիվ անեցիներ, որոնց զգալի մասը թուրք զավթիչների ստիպմամբ ընդունել է մահմեդականություն:

1915 թ. բազմաթիվ բնակիչներ զոհվեցին, և արհեստավորների ու վաճառականների Ակնը դատարկվեց հայ ազգաբնակչությունից:

Մեծ հռչակ էին վայելում Ակն քաղաքի Նարեկյան վարժարանը, «Ականց անապատը» կամ «Ակներց վանքը»:

Այս բնակավայրն անվանվել է նաև «Երկրորդ Գողթն»: Արակա գյուղը մինչև կոտորածները Գրիգոր Նարեկացու անունով կոչվել է նաև Նարեկա գյուղ (Սեբաստիայի նահանգում):

Ըստ գրավոր աղբյուրների՝ Գրիգոր Նարեկացին թաղվել է Նարեկա վանքի Ս. Սանդուխտ կույսի անունը կրող եկեղեցու պատի տակ: Ակադեմիկոս Մանուկ Աբեղյանը վկայակոչելով հայր Միքայել Չամչյանին՝ նշում է, որ Գրիգոր Նարեկացին վախճանվել է հայոց: ՆԾԲ: (1003) թվականի փետրվարի 27-ին և թաղված է Նարեկա վանքի Ս. Սանդուխտ կույսի եկեղեցու մոտ:

Մի շարք հեղինակներ (Զարբհանալյան և այլք) նշում են Նարեկացու մահվան տարբեր թվականներ:

Սույն հոդվածի հիմնական նպատակն է բացահայտել, թե ի վերջո որտե՞ղ է թաղված Գրիգոր Նարեկացին, որտե՞ղ են հանգչում նրա սրբազան մասունքները:

Վերը նշեցինք, որ Գրիգոր Նարեկացու մարմինը երկրորդ անգամ հողին է հանձնվել Ակնում, որ գտնվել է Կիլիկցւոց աշխարհիս և Տյուրիկե («Տիվրիկո գաւառ» + Տևրիկ) քաղաքների մերձակայքում, ուր ճգնավոր անձինք հիմնադրել են Նոր Նարեկա վանք՝ կոչելով Ուխտ Արակա, որը դարձյալ ավերակվել է, իսկ մեծանուն բանաստեղծի աճյունը տեղափոխել են մեկ այլ տեղ, որի ստույգ անունը և տեղադրությունը մեզ հայտնի չեն:

2012 թ. ամռանը Կապանի հնագիտական արշավախմբի անդամներ Հրաչիկ Մարգարյանի, ճարտարապետ Համլետ Մարտիրոսյանի և այլոց հետ միասին շրջագայելով Վահանավանքի Մեծ տաճարի՝ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հարավարևմտյան անտառախիտ սարալանջում, նկատեցինք մարդկային կերպարանքով տապանաքար (երկ. 1 մետր 10 սմ, լայն. վերևից՝ 45–48 սմ, ներքևից 56 սմ, բարձր. 61 սմ): Տապանաքարի աջակողմում կա եղծված և մաշված փակագիր տառահետքեր, որոնց հիման վրա կարելի է ընթերցել ՆԱՐ…Ե…(Կ) կապակցությունը:

Պատկերաքանդակն ակամայից հիշեցնում է մեծատաղանդ գեղանկարիչ Գրիգոր Սկևռացու (Մլիճեցու) 1173 թ. (Մատենադարանի հմր 1568) ձեռագիր մատյանի մանրանկարը՝ գանգրահեր տղամարդ, ոչ երկար գլխամազերով, փոքր-ինչ ուռուցիկ իրանով: Տապանաքարը պատրաստված է միակտուր քարից, միաձույլ պատվանդանով: Շուրջառը ծածկում է ողջ իրանը, որի կողքերից երևում են ձեռքերի դաստակները: Ոտքերը տեսանելի չեն, քանզի ծակոտկեններով պատված մարմնի ներքին մասերը ճաքճաքված են և քայքայված:

Արդեն նշել ենք, որ օտար ներխուժողների շրջանում Գրիգոր Նարեկացու մարմինը տեղափոխել են տեղից տեղ:

Կարծում ենք՝ Գրիգոր Նարեկացու վերջին հանգրվանը եղել է Սյունյաց աշխարհը: Սյունիքն այդ ժամանակ ուներ կայուն թագավորություն՝ Վասակ Ա թագավորի գլխավորությամբ (նա թաղված է Տաթևի վանքում): Նրա դուստր Կատրանիդեն ամուսնացած էր Բագրատունյաց Գագիկ Ա հզոր թագավորի (990–1020) հետ:

Այս երկու խոշոր ավատական տների ազգակցական կապերն առավել սերտացնում և ապահովում էին նրանց միջավատական հարաբերություններն ու ռազմա-քաղաքական դաշինքը:

Ուզում ենք հավատալ, որ Գրիգոր Նարեկացուն տեղափոխել են իր հոր՝ Խոսրով Անձևացյաց եպիսկոպոսի գաղափարական դաշնակից Վահան Սյունեցու հայրենիքը՝ Սյունյաց լեռնաշխարհ, և ամփոփել Սյունիքի արքունական իշխանական դամբարանատանը՝ Վահանավանքի տարածքում:

Պատմությունն ինչ-որ տեղ կրկնվում է. չէ որ Վահան Սյունեցի կաթողիկոսն էլ իր հանգիստն է գտել Վասպուրականի Ձորո վանքում և ոչ իր հայրենի Սյունյաց նահանգում:

Նկարների ցանկ

Նկ. 1. Գր. Գրիգորյանի հայրը՝ Տեր Մեսրոպ քահանան, մայրը՝ Շուշանիկը, եղբայրները և քույրերը:

Նկ. 2. Տեր Մեսրոպի հոգեհանգստի արարողությունը, աջից 2-ը՝ Գր. Գրիգորյան:

Նկ. 3. Գր. Գրիգորյանը Երևանի թիվ 31 միջն. դպրոցի ուսուցիչ:

Նկ. 4. Գր. Գրիգորյանը Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետի ուսանող, 1950–1954 թթ.:

Նկ. 5. Ժելեզնովոդսկ, 1963 թ. հոկտեմբեր:

Նկ. 6. Թեոդոսիա, Հ. Այվազովսկու արձանի մոտ, 1964 թ.:

Նկ. 7. Գորիսի շրջան, գյուղ Հարժիս, «Ալան թագավոր» սրբավայրում, ձիավորը՝ Գր. Գրիգորյան, 1964 թ.:

Նկ. 8. Վերժինե Սվազլյանի հետ Արկազի Սուրբ Խաչ վանքում, 1965 թ.:

Նկ. 9. Վահանավանք, տապանաքար գավթի հարավային մասում, 1967 թ.:

Նկ. 10. Վահանավանք, 1967 թ.:

Նկ. 11. Գառնի, 1967 թ., վերևի շարք՝ ձախից 1-ը՝ Վարդ Բդոյան, 2-րդ՝ Սիմոն Կրկյաշարյան, 3-րդ՝ Բաբկեն Առաքելյան, 4-րդ՝ Ժորես Խաչատրյան, 5-րդ՝ Ֆելիքս Տեր-Մարտիրոսյան: Ներքևի շարք, ձախից 1-ը՝ Էմմա Խանզադյան, շարքի վերջում՝ Գրիգոր Գրիգորյան:

Նկ. 12. Սևաստոպոլ, Խերսոնես քաղաքի ավերակների մոտ, 1968 թ.:

Նկ. 13. Ռոստովի Սբ. Կարապետ եկեղեցու քահանա Մ. Զորչոփյանի հետ:

Նկ. 14. Լուսանկարիչ Ար. Վրոյրի հետ Հ. Այվազովսկու դամբարանի մոտ, Թեոդոսիա, 1970 թ.:

Նկ. 15. Թեոդոսիա, Հովհաննես Այվազովսկու դամբարանի մոտ, 1970 թ.:

Նկ. 16. Հայկական գերեզմանոց, 1974 թ.:

Նկ. 17. Օրգեև, հայկական գերեզմանոց, 1974 թ., մայիս:

Նկ. 18. «Խուստուփ» պիոներական ճամբարի սաների հետ, Կապան, 13.08.1974 թ.:

Նկ. 19. Տաթև, 1977 թ.:

Նկ. 20. Տաթևի վանքում, առաջնորդարանի շենքի դիմաց:

Նկ. 21. Ռինդ գյուղի ճանապարհին, 1980 թ.:

Նկ. 22. Գառնիում. աջից՝ Բ. Առաքելյան, Գր. Գրիգորյան, Վ. Բդոյան, շարքի վերջում՝ Ս. Կրկաշարյան:

Նկ. 23. Ձախից՝ Գր. Կարախանյան, Գր. Գրիգորյան:

Նկ. 24. Վահանավանքում:

Նկ. 25. Աշխատանքային, աջից՝ Գր. Գրիգորյան:

Նկ. 26. Վահանավանքում:

Նկ. 27. Վահանավանքում, ձախից՝ Գր. Գրիգորյան, Ս. Բարխուդարյան, Վ. Հարությունյան և ասպիրանտ Ռոբերտը:

Նկ. 28. Սիսիան՝ Պորտաքար:

Նկ. 29. Վանաձոր, «Արմենիա» հանգստյան տուն, ներքևի շարքում, աջից 5-րդը՝ Գր. Գրիգորյան։

Նկ. 30. Մտորումներ....

Նկ. 31. Վահանավանքի անտառում, աջից՝ 2-րդը արշավախմբի խորհրդական Ս. Բարխուդարյան, ձախից 3-րդը՝ Գր. Գրիգորյան։

Նկ. 32. Վահանավանք, 1980 թ.։

Նկ. 33. Աջից՝ Վ. Ավետյան, Գր. Գրիգորյան։

Նկ. 34. Ուսանողների հետ՝ Նորատուսի գերեզմանատանը։

Նկ. 35. Վահանավանք, պրոֆեսոր Ս. Հարությունովի հետ։

Նկ. 36. Սևան, Մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետի ուսանողների հետ։

Նկ. 37. Թանահատի վանք, ուսանողների հետ։

Նկ. 38. Էջմիածին, Մայր տաճարի բակ, մանկավարժական ինտիտուտի ուսանողների հետ, 1980 թ.։

Նկ. 39. Էջմիածին, վիմագրական դասընթաց, մանկավարժական ինստիտուտի 4-րդ կուրսի ուսանողների հետ, 1983 թ.։

Նկ. 40. Մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողների հետ, Էջմիածին, 1983 թ.։

Նկ. 41. Վահանավանք, 1984 թ.։

Նկ. 42. Գր. Գրիգորյանը Կապանի պատվավոր քաղաքացի, 1986 թ.։

Նկ. 43. Վահանավանքում՝ հյուրերի հետ, 1989 թ.։

Նկ. 44. Վահանավանք, ձախից՝ Գր. Գրիգորյան, Բ. Առաքելյան։

Նկ. 45. Ձախից՝ Գր. Գրիգորյան, մանկավարժական ինստիտուտի պրոռեկտոր՝ Հենրիկ Մելիքյան։

Նկ. 46. Վահանավանք. արշավախմբի գիտական խորհրդատու Բ. Առաքելյանի հետ։

Նկ. 47. Վահանավանք, աջից՝ Ս. Ստեփանյան, Գր. Գրիգորյան, 1991 թ.։

Նկ. 48. Ջրոսաշրջիկները Վահանավանքում։

Նկ. 49. Հաղպատի վանք, ձախից՝ վիմագրագետ-պատմաբան Գ. Սարգսյան, 1999 թ.։

Նկ. 50. Դսեղ, ձախից՝ Գ. Սարգսյան, Գր. Գրիգորյան, Տիգրան։

Նկ. 51. Վահանավանք, կենտրոնում՝ ակադեմիկոս Բ. Առաքելյան, հետևում՝ Գր. Գրիգորյան։

Նկ. 52. Վահանավանքում։

Նկ. 53. Նորավանք, Երևանի պետական համալսարանի, բանասիրական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողների հետ, 2004 թ.։

Նկ. 54. Եղեգնաձորի շրջան, Թանատի վանք, պետական համալսարանի ուսանողների հետ, 2004 թ.։

Նկ. 55. Վահանավանքում՝ Ռուսաստանից ժամանած հյուրերի հետ։

Նկ. 56. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի և ճարտարապետ Հովիկ Սանամյանի հետ Բերձորում։

Նկ. 57. Վահանավանք, 2002 թ.։

Նկ. 58. Վահանավանքում:

Նկ. 59. Վահանավանքում, ձախից՝ պատմաբան Ս. Հախվերդյան, 2012 թ.:

Նկ. 60. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի իր աշխատասենյակում:

Նկ. 61. Գրիգոր Տաթևացու արձանի մոտ, Գորիս, 2012 թ.:

Նկ. 62. Կապան, 2014 թ.:

Նկ. 63. Վահանավանքում, որդու՝ Տիգրանի հուշաքարի մոտ:

Նկ. 64. Վահանավանք:

Նկ. 65. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի դահլիճում, աջից՝ վիմագրագետ Գ. Սարգսյան, Գր. Գրիգորյան, Վ. Սվազլյան և այլոք:

Նկ. 66. Ճարտարապետ Ստեփան Նալբանդյանի հետ՝ Վահանավանքում:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ
ԵՎ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Նկ. 1. Գր. Գրիգորյանի հայրը՝ Տեր Մեսրոպ քահանան, մայրը՝ Շուշանիկը, եղբայրները և քույրերը

Նկ. 2. Տեր Մեսրոպի հոգեհանգստի արարողությունը, աջից 2-ը՝ Գր. Գրիգորյան

Նկ. 3. Գր. Գրիգորյանը Երևանի թիվ 31 միջն. դպրոցի ուսուցիչ

Նկ. 4. Գր. Գրիգորյանը Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետի ուսանող, 1950–1954 թթ.

Նկ. 5. Ժելեզնովոդսկ, 1963թ. հոկտեմբեր

Նկ. 6. Թեոդոսիա, Հ. Այվազովսկու արձանի մոտ, 1964թ.

Նկ. 7. Գորիսի շրջան, գյուղ Հարժիս, «Ալան թագավոր» սրբավայրում, ձիավորը՝ Գր. Գրիգորյան, 1964թ.



Նկ. 8. Վերժինե Սվազլյանի հետ Արկազի Սուրբ Խաչ վանքում, 1965թ.

Նկ. 9. Վահանավանք, կապանաքար գավթի հարավային մասում, 1967թ.

Նկ. 10. Վահանավանք, 1967թ.

Նկ. 11. Գառնի, 1967թ., վերևի շարք՝ ձախից 1-ը՝ Վարդ Բդոյան, 2-րդ՝ Սիմոն Կրկյաշարյան, 3-րդ՝ Բաբկեն Առաքելյան, 4-րդ՝ Ժորես Խաչատրյան, 5-րդ՝ Ֆելիքս Տեր-Մարտիրոսյան: Ներքևի շարք, ձախից 1-ը՝ Էմմա Խանզադյան, շարքի վերջում՝ Գրիգոր Գրիգորյան

Նկ. 12. Սևաստոպոլ, Խերսոնես քաղաքի ավերակների մոտ, 1968թ.

Նկ. 13. Ռոստովի Սբ. Կարապետ եկեղեցու քահանա Մ. Չորչոփյանի հետ

Նկ. 14. Լուսանկարիչ Ար. Վրոյրի հետ Հ. Այվազովսկու դամբարանի մոտ, Թեոդոսիա, 1970 թ.

Նկ. 15. Թեոդոսիա, Հովհաննես Այվազովսկու դամբարանի մոտ, 1970 թ.

Նկ. 16. Հայկական գերեզմանոց, 1974 թ.

Նկ.17. Օրգեև, հայկական գերեզմանոց, 1974թ., մայիս

Նկ.18. «Խուսպուպ» պիոներական ճամբարի սաների հետ, Կապան, 13.08.1974թ.

Նկ. 19. Տաթև, 1977 թ.

Նկ. 20. Տաթևի վանքում, առաջնորդարանի շենքի դիմաց

Նկ. 21. Ռինդ գյուղի ճանապարհին, 1980թ.:

Նկ. 22. Գառնիում. աջից՝ Բ. Առաքելյան, Գր. Գրիգորյան, Վ. Բդոյան, շարքի վերջում՝ Ս. Կրկաշարյան:

Նկ. 23. Ձախից՝ Գր. Կարապետյան, Գր. Գրիգորյան։



Նկ. 24. Վահանավանքում։

Նկ. 25. Աշխատանքային, աջից՝ Գր. Գրիգորյան։

Նկ. 26. Վահանավանքում:

Նկ.27. Վահանավանքում, ձախից՝ Գր. Գրիգորյան, Ս. Բարխուդարյան, Վ. Հարությունյան և ասպիրանտ Ռոբերտը:

Նկ. 28. Սիսիան՝ Պորտաքար:

Նկ. 29. Վանաձոր, «Արմենիա» հանգստյան տուն, ներքևի շարքում, աջից 5-րդը՝ Գր. Գրիգորյան:

Նկ. 30. Մտորումներ....

Նկ. 31. Վահանավանքի անտառում, աջից՝ 2-րդը արշավախմբի խորհրդական Ս. Բարխուդարյան, ձախից 3-րդը՝ Գր. Գրիգորյան:

Նկ. 32. Վահանավանք, 1980 թ.:

Նկ. 33. Աջից՝ Վ. Ավետյան, Գր. Գրիգորյան

Նկ.34. Ուսանողների հետ՝ Նորատուսի գերեզմանատանը:

Նկ.35. Վահանավանք, պրոֆեսոր Ս.Հարությունովի հետ:

Նկ.36. Սևան, Մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետի ուսանողների հետ:

Նկ.37. Թանահատի վանք, ուսանողների հետ:

Նկ. 38. Էջմիածին, Մայր տաճարի բակ, մանկավարժական ինստիտուտի ուսանողների հետ, 1980թ.:

Նկ. 39. Էջմիածին, վիմագրական դասընթաց, մանկավարժական ինստիտուտի 4-րդ կուրսի ուսանողների հետ, 1983թ.:

Նկ.40. Մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողների հետ, Էջմիածին, 1983թ.:

Նկ. 41. Վահանավանք, 1984թ.:



Նկ. 42. Գր. Գրիգորյանը Կապանի պատվավոր քաղաքացի, 1986թ.:

Նկ. 43. Վահանավանքում՝ հյուրերի հետ, 1989թ.:

Նկ. 44. Վահանավանք, ձախից՝ Գր. Գրիգորյան, Բ. Առաքելյան:

Նկ. 45. Ձախից՝ Գր. Գրիգորյան, մանկավարժական ինստիտուտի պրոռեկտոր՝ Հենրիկ Մելիքյան:

Նկ. 46. Վահանավանք. արշավախմբի գիտական խորհրդատու Բ. Առաքելյանի հետ:

Նկ. 47. Վահանավանք, աջից՝ Ս. Սրեփանյան, Գր. Գրիգորյան, 1991թ.:



Նկ. 48. Սանահնի վանք,
ձախից՝ վիմագրագետ-պատմաբան Գ. Սարգսյան, 1999թ.:

Նկ. 49. Քրոսաշրջիկները Վահանավանքում:

Նկ.50. Դեռ, ձախից՝ Գ. Սարգսյան, Գր. Գրիգորյան, Տիգրան

Նկ.51. Վահանավանք, կենտրոնում՝ ակադեմիկոս Բ. Առաքելյան, հեռևում՝ Գր. Գրիգորյան

Նկ. 52. Վահանավանքում

Նկ. 53. Նորավանք, Երևանի պետական համալսարանի, բանասիրական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողների հետ, 2004թ.

Նկ. 54. Եղեգնաձորի շրջան, Թանապատի վանք, պետական համալսարանի ուսանողների հետ, 2004թ.

Նկ. 55. Վահանավանքում՝ Ռուսաստանից ժամանած հյուրերի հետ։

Նկ. 56. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի և ճարտարապետ Հովիկ Սանամյանի հետ Բերձորում

Նկ.57. Վահանավանք, 2002թ.:

Նկ. 58. Վահանավանքում:



Նկ. 59. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի իր աշխատասենյակում:

Նկ. 60. Վահանավանքում, ձախից՝ պատմաբան Ս. Հախվերդյան, 2012թ.

Նկ. 61. Գրիգոր Տաթևացու արձանի մոտ, Գորիս, 2012թ.:

Նկ. 62. Կապան, 2014թ.:

Նկ. 63. Վահանավանքում, որդու՝ Տիգրանի հուշաքարի մոտ

Նկ. 64. Վահանավանք:

Նկ. 65. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի դահլիճում, աջից՝ վիմագրագետ Գ. Սարգսյան, Գր. Գրիգորյան, Վ. Սվազլյան և այլոք:

Նկ. 66. Ճարտարապետ Ստեփան Նալբանդյանի հետ՝ Վահանավանքում:

ԴԻՊԼՈՄ

Բ № 839913

Սույնը ներկայացնող ընկ. Գրիգոր

Մեսրոպի Գրիգորյանը

1950 թվին ընդունվել և 1954 թվին ավարտել է Երևանի Կ. Աբովյանի անվ. Հայկական Պետական մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետի կուրսը՝ հայոց լեզու և գրականություն մասնագիտության գծով և Պետական Քննական Հանձնաժողովի 1954 թ. հունիսի 26-ի որոշմամբ նրան տրված է մեջ. դպ. հայոց լեզվի և գրականության ուսուցչի կվալիֆիկացիա

Պետական Քննական Հանձնաժողովի նախագահ

Դիրեկտոր

Գրագրատար

ՀՍՍՌ Երևան 1954 թ.

Գրանցման № 536

ДИПЛОМ

Б № 839913

Предъявитель сего тов. Григорян Григор Месропович в 1950 г. поступил и в 1954 г. окончил полный курс факультета языка и литературы Ереванского Армянского государственного педагогического института им. Х. Абовяна по специальности Армянский язык и литература и решением Государственной Экзаменационной Комиссии от 26 го Июня 1954 г. ему присвоена квалификация учителя армянского языка и литературы полной средней школы.

Председатель Государственной Экзаменационной Комиссии

Директор

Секретарь

М.П.

Город Ереван 1954 г.

Регистрационный № 536

Л 28078 10/II 1948 г. Гознак. Москва. Тир. 10.000 экз. Зак. 2238.

ДИПЛОМ
КАНДИДАТА НАУК

МИТ № 005165

Москва 12 июля 1968 г.

Решением
Совета Института истории АН Армянской
от 1 декабря 1967 г. (протокол № 8)
Григоряну Григору Месроповичу
ПРИСУЖДЕНА УЧЕНАЯ СТЕПЕНЬ КАНДИДАТА
ИСТОРИЧЕСКИХ НАУК

Председатель Совета

Ученый Секретарь Совета

ДИПЛОМ
ДОКТОРА НАУК

ИТ № 001553

Москва

Решением
Высшей аттестационной комиссии
при Совете Министров СССР
от 14 февраля 1986 г. (протокол № 79/21)
Григоряну Григору Месроповичу
ПРИСУЖДЕНА УЧЕНАЯ СТЕПЕНЬ
ДОКТОРА
ИСТОРИЧЕСКИХ НАУК

Председатель Высшей аттестационной комиссии

Главный ученый секретарь Высшей аттестационной комиссии

АТТЕСТАТ
ПРОФЕССОРА

ПР № 002723

Москва

Решением
Комитета по высшей школе Министерства науки,
высшей школы и технической политики
Российской Федерации
от 21 января 1993 г. № 33-п
Григоряну Григору Месроповичу
ПРИСВОЕНО УЧЕНОЕ ЗВАНИЕ
ПРОФЕССОРА
по кафедре исторических армянских наук

Председатель

Главный ученый секретарь

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇՆՈՐՀԱԳԻՐ

Գրիգոր Մնացականի
Գրիգորյանին

Հայաստանի Հանրապետության
Նախագահի
" 24 " մայիսի 2010 թ.
Ն2 - 108 - Ա հրամանագրով

շնորհվել է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾՉԻ
ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄ

Հայաստանի Հանրապետության
Նախագահի աշխատակազմի
ղեկավար

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

№ 431

ԳՈՎԵՍՏԱԳԻՐ

Հարգելի ընկեր Գրիգոր Մեսրոպի Գրիգորյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՆ ԲԱՐՁՐ է ԳՆԱՀԱՏՈՒՄ 1987 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ՁԵՐ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԳԵՋԻՆՏԵՆ

Ա. Հ. Հանդամյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ

Դ. Մ. Սեդրակյան

Քաղ. Երևան 1988 թ. 12 մայիսի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

N 28

ՎԱՍՏԱԿԱԳԻՐ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
հայ վիմագրության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գրիգոր Մեսրոպի Գրիգորյանի

75-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՊՐԵԶԻԴԵՆՏ Ֆ. ՍԱՐԳՍՅԱՆ

Երևան, 2005թ.



Ձև №4

ՓԱՌԱՐԱՆԻ ԼԵՆԻՆԻ ՇՐՋԱՆՇԱՆԱԿՈՒՐ ՊՂՇՁՄՈՒԹՅՈՒՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏԻ «ԴԱՆՁԱՍԱՐ»
ՊԻՏԵՐԱԿԱՆ ՀԱՄԲԱՐ

ՊԵՏԱԿԱՆ ԾԵՄԱԿ

Ընկերատիրոջ՝ Յոհաննես Ծոմբարի
Լավագույնը բարեկամ Հայ. Գրիգորյանին

Կցագր մեջ նոր գրքեր եմ տալիս և խնդրում
Ձեզ։ Հրավիրում եմ Ձեզ և բոլոր վարակ-
ված ընկերներին մասնակցելու «Պրոմետեան» խմբակին։

Հիլ Ռեզնիկով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

N 5

ՊԱՏՎՈԳԻՐ

Մեծարգո Գրիգորյան Գրիգոր Մեսրոպի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՍՏՈՒՄ Է ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ՁԵՐ ԱՆԽՈՆՋ, ԲԱՋՄԱԲԵՂՈՒՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՊՐԵԶԻԴԵՆՏ Ֆ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Երևան, 2003թ.

ԳՐԻԳՈՐ ՄԵՍՐՈՊԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾԸ

ԿԱԶՄՈՂ՝
ՍԱԹԵՆԻԿ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

Էջադրում և ձևավորում՝
Արթուր Հարությունյան
Լուսանկարների ձևավորումը՝
Տիգրանուհի Մուրադյան

Տպագրվել է «Արփինե Բեգլարյան» ԱՁ տպարանում
հեռ. 043 107 090
Beglaryanprint@mail.ru